

398.5

2-15

3

საქართველოს

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

U. S. U. I. F. E.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԶԱՐԵԱՆՑ

SECRET
INCHITATA
SECRET
Khalid bin Khalifa
CC CP



த த த த த

Ի. ՎԱՐԳԱՆԵԱՆԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ

1883

398.5
7-15

56/53-66

3585	<i>Eucalyptus</i>
C-15	<i>Chalcidynus</i>
	h. 3

[illegible]

С 902

15 NOV 2017

ՀԱՅԿԴՕՏԵՐ

ՀԱՏՈՐ III.

ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Ա Շ Խ Ա Տ Խ Ո Ր Ե Յ

ՅՈՎՀԱՆՆԻՍ ՆԱԶԱՐԵԱՆՅ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Մ. ՎԱՐԳԱՆԵԱՆՅԻ ԵՐ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄ
1883

10 JUL 2013

56.499

Дозв. ценз. Тифлисъ, 6-го Юля 1882 года.



56153-66

Тип. М. Бартамянца и К°. прот. Троиц. церк.

ԿՈՂԼԵԺՍԿԻ ՍՈՎԵՏՆԻԿ

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԶԱԲԱՐԵԱՆ

ՍՈՒՐԵՆԵԱՆՑԻՆ

ԻՒՐ ՓՈՔՐԻԿ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

ՆՈՒՐՈՒՄ Է

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂԸ

ՅԱՌԱՋԱՌԱՆ

Մի քանի խօսք գրքիս բովանդակութեան մասին:—Թէ սրբան ջանք է գործ դրուած գիրքս ըստ ամենայնի օրինաւոր, լաւ եւ կոկ գուրս բերելու վերայ՝ այդ թողնում ենք, որ ինքն ընթերցողը գատէ ու գնահատէ:

Թէպէտ այս գրքի մէջ մասնաւոր անձնաւորութիւններ չառ կան, բայց մենք կը բերենք այստեղ նոցանից անշարժներին տունները, որոնց վերայ շատ անեկզօտներ ունենք: Դոքա են՝ Վանեցի Տէր Սարգիս, Ահարոն Վարդապետ, Ներսէս Ե. Կաթողիկոս, Կ. Պօլսեցի Յարութիւն ամիրայ Պէշ-ճեան, Վանայ Այլուր գիւղի Ռէս Կարապետ, Երեւանցի Կօշկաւար Ուստայ Աղաջան, Շամախեցի Թարաւազ Բաղդասար, Դավրիժեցի Մահաթեի Թէոս, Տփիսեցի Պառաւ Եօփանէ:—Սոկրատէս փիլիսոփայ, Ալէքսանդր Մակեդոնացի, Լուգովիկոս Ժ.Վ. Ֆրանսիայի թագաւոր, Ուտեր, Ֆրանկլին, Տաւրիկեան իշխան Պոտեմկին եւ Մոլլայ Նասրէզզին:

«Անեկզօտներ»-ի I. Հատորը՝ չհաշուելով յառաջաբանի եւ բաժանորդների անուանական ցուցակը, բաղկացած էր 223 երե-

սից եւ պարունակում էր իւր մէջ 535 անեկ-
գօտ, որից 180 ազգային էին, իսկ 355
օտարազգի: II. Հատորը բաղկացած էր 153
երեսից եւ պարունակում էր 366 անեկգօտ,
որից 145 ազգային էին, իսկ 221 օտա-
րազգի: Իսկ այս III. Հատորի մէջ կայ 465
անեկգօտ, որից 210 ազգային են, իսկ 255
օտարազգի:

Թէպէտ մենք խոստացել էինք այս հա-
տորը 1000-ից աւելի անեկգօտով լոյս հա-
նել՝ բայց որովհետեւ մեր բաժանորդագրա-
կան թերթերը շատ աննշան գումար բերին
իրանց հետ, ուստի հրաւիրում ենք մեր
բաժանորդների ներողամտութիւնը, եթէ
նոքա այս գրքիս մէջ մեր խոստացածի-կիսի
չափ միայն անեկգօտ կը գտնեն:

Այնքան բաղմամբիւ են այն աղբիւր-
ները, որոնցից մենք օգուտ ենք քաղել «Անեկ-
գօտներ»-ի այս հատորը կազմելիս, որ նոցա
անունները այստեղ առաջ բերելը աւելորդ
ենք համարում:

Գրքիս Բաժանորդներ Գրան- ծանոթ աշխա-
րայ Հեղինակ անշանց՝ Մեսրոպ ա. ք. Փաիւ-
ղեանց, Արսէն ք. Տէր-Սիմէոնեանց, Սարգիս
Գնունի, Յակոբ Տէր-Յովսէփեանց, Ամիր-
ջան Թովմայեանց, Յովհաննէս Բարխուդա-

րեանց եւ Վաղարշակ Բէլութեանց, յայտ-
նած են: Եւ խորին շնորհակալութիւնը:

Իսկ այս հատորի բաժանորդները այն-
քան սակաւաթիւ էին, որ աւելորդ համա-
րեցինք նոցա անունները գրքիս վերջը մի
առ մի մէջ բերել:

Մեզ նիւթ տուողներին յայտնելով մեր
ջերմ շնորհակալքը՝ առանձին գոհունա-
կութեամբ յիշում ենք այստեղ Պ. ՍԱՐԳԻՍ
ԳՆՈՒՆՈՒ անունը, որ տուեց մեզ ամենա-
շատ թուով անեկգօտներ:

Եւրոպական նշանաւոր ազգերը ունեն
իրանց տպագրած անեկգօտները: Անա-
չառ համեմատութիւնը միայն կարող է ցոյց
տալ, թէ մերը նոցա մէջը ինչ տեղ է բռն-
նում: Մենք այսքան համարձակ չէինք կարող
խօսել, եթէ կարգացած չլինէինք շատ ուռ-
սերէն, ֆրանսերէն եւ գերմաներէն անեկ-
գօտների գրքեր, որոնց բովանդակութիւնը
ոչ մի կերպով չէ արդարացնում իրանց ու-
ռած ու փրած ճակատագրերը:

Թող ամէն ցանկացող ու հետաքրք-
րորուող կարգայ այս գիրքը: Ամէն մարդ էլ
կը ստանայ իւր բաժինը. ամէն ոք կը տեսնէ
սորա մէջ իւր ցանկացած պատկերը: Ամէն
կարգի մարդ տեղ է բռնել սորա մէջ. կեանքի

ամէն տեսակ հանգամանքները նկարուած են այստեղ իրանց փայլուն զօծերով: Եթէ ընթերցողն էլ լաւը սեփականէ, վատիցը խորշի, ապա գիրքս գորանով մի փոքրիկ ծառայութիւն եւս արած կը լինի:

Յուսով ենք, որ ոչ ոք չի զղջայ սորա կարգալու համար գործ դրած ժամանակի վերայ: Եթէ ժամանակը ոսկի է, ուրախ ու զուարթ ծիծաղն էլ առողջութիւն ու կեանք է, մանաւանդ մի այնպիսի ծանր ժամանակ, երբ կեանքի անթիւ հոգսերը ակօսներ ու կնճիռներ են ձգում մարդուս գէմքի գծագրութեան վերայ, որտեղ այդ պատճառով շատ գթուարութեամբ է երեւում ուրախ ծիծաղը:

ԸՆԹԵՐՑՈՂ ՆԵՐԻՆ

Ա.

Եթէ ամէն հին ու նոր լրագիր, ամսագիր, եւ մինչ անգամ դասագիրք հարկաւոր է համարել մանր զուարճալիքներով իւր ընթերցողներին մտաւոր զբօսանք պատճառել՝ ապա ուրեմն մի գիրք, որի նպատակը մասնաւորապէս այդ ամենութեք յիր ու ցան եղած ծագիկներից մի փոքր կազմելն է՝ աւելի եւս իրագործած պէտք է լինի նոցա ամէնի ցանկութիւնը:

Սակայն, Փունջ բառը գործածելով՝ մենք չենք ուզում ասել, թէ սորա մէջ բոլոր Զազէիքն էլ շատ հոտաւետ են: Ո՛չ: Կը լինեն սորա մէջ եւ՝ այնպիսի ծագիկներ, որոնք սիրուն տեսք կ'ունենան, բայց հոտ չեն ունենայ. կամ ընդհակառակն՝ անուշ հոտ կ'ունենան, բայց գեղեցիկ տեսք չեն ունենայ: Կը լինեն եւ՝ այնպիսիք, որոնք ոչ տեսք կ'ունենան եւ ոչ՝ հոտ. միայն իրանց գոյութեամբ լրացնելիս կը լինեն զուարճալեաց նուազահանգէսը:

Բայց ի՞նչ ենք ասում: Կը գտնուեն եւ այնպիսի քթեր, որոնք վաղուց կորցրած կը

լինեն հոտառութեան ընդունակութիւնը: Այդպիսիներին խորհուրդ ենք տալիս, որ բաւականան միայն այն ծաղկներով, որոնք իրանց սիրուն տեսքով հրապուրում են անցորդներին դէպի փունջը:

Կը պատահեն այդ փնջի մէջ եւ՝ աղնապիսի ծաղկներ, որոնք հոտ առնողի քթի վերայ մի փոքր գունաւոր փոշի կը թողնեն. թող չնեղանան այդպիսիք, եթէ այդ փոշին մի քիչ ծիծաղաշարժ ձեւ կը տայ իրանց դէմքին: Բաւական է միայն հայելուն նայել ու մատը քսել քթի ծայրին, եւ իսկոյն փոշին կը սրբուի: Իսկ եթէ գտնուեն նաեւ այնպիսի ծաղկներ, որոնք իրանց փշոտ տերեւներով ծակծկեն հոտ առնողի քիթը, ներողութիւն ենք խնդրում այդպիսիներից՝ համոզուած լինելով, որ իրանց էլ յայտնի կը լինի թէ՝ «Աւարդը առանց փշի չի լինի»:

Բ.

Այդքանը մեր փնջի ծաղկների մասին: Այժմ տեսնենք հոտ առնողները:

Կայ այնպիսի մարդ, որ ուզում է որ մեր անեկզօտները իրան ծիծաղու թուլացնեն: Բայց որովհետեւ մենք իւրաքանչիւր

տող գրելիս միշտ ի նկատի ենք ունեցել նաեւ՝ ընթերցողի առողջութիւնը, ուստի թող ներէ մեզ այդպիսին, եթէ հետեւեալ անեկզօտը կը կտրէ նորա ծիծաղի թելը եւ մի րոպէ կը կանգնեցնի նորան մի քիչ մը տաճելու եւ խելքին զօր տալու համար: Կայ եւ՝ այնպիսի մարդ, որ կարգաւուց յետոյ կ'ասէ, թէ այս ինչ անեկզօտը անալի է: Մենք այդպիսի ընթերցողի խորհուրդ կը տանք, որ ամենքին իւր կանգունով չչափէ, որովհետեւ շատ կան եւ այնպիսի մարդիկ, որոնք կերակուրը անալի են սիրում: մանաւանդ թէ մարդ կայ՝ լոբի է սիրում, մարդ կայ՝ փլաւ է սիրում, մարդ էլ կայ՝ որ զարբերալիս երեսին էլ չէ նայում: Անալին ոչ թէ մեր տուածն է. այլ այն անեկզօտներն էին, որոնց հարիւրը չարժէին, որ վերաները մի մոխալ աղ ցանէինք: Ո՛վ չէ հաւատում թող գայ. մենք նորան ցոյց կը տանք այդպիսիների ահագին քանակութիւնը: Այն ժամանակ նա կը հասկանայ, թէ մենք ո՞րքան աշխատել ենք աղը տեղը բերելու եւ իրան լաւ հիւրասիրելու համար: Կը գտնուի եւ՝ այնպիսի մարդ, որ կ'ասէ. «Այս ի՞նչ անեկզօտ է, որ ոչ համ ունի, ոչ հոտ»: Այդպիսիներին մենք խորհուրդ

ենք տալիս, որ նեղութիւն կրեն մի քիչ իրանց գանկը թափահարելու. կարելի է՝ միջի եղածը մի փոքր տակն ու վերայ լինի ու կարգի ընկնի:

Գ.

Հազար ու մի տեսակ մարդ. կայ աշխարհումս, որոնցից շատ կարելի է, որ մի քանի տեսակը կարգան մեր գիրքը: Եթէ դոցա մէջը գտնուի այնպիսի մարդ է՛լ, որ մեր գիրքը չհաւանի, այդպիսուն խորհուրդ ենք տալիս, որ դէն ձգէ մեր գիրքը եւ կարգայ Պ. Գալուստ Շերմաղանեանցի «Անեկդոտներ»-ը՝ մանաւանդ. նորա 45 եւ 62-երորդ երեսների վերջին երկու անեկդոտները: Ահա այն ժամանակը կը հիանայ եւ, ով գիտէ, շատ սիրելուց ամբողջ գիրքը կուտայ: Մենք որ այդպիսի գեղեցիկ, համեղ ու անուշահոտ անեկդոտներ գրելու շնորհք չունենք, այդ հօ մեր յանցանքը չէ: Աստուած որ ամէն շնորհք էլ մի մարդու տայ՝ մենք ի՞նչ մեղաւոր ենք: Լաւ. ասենք թէ «Պառաւր իր թանին թթու չի ասի», եւ այդ պատճառով էլ այդ անեկդոտներ ժողովողը այնքան գովաբանում է

իւր ուղեղի արտադրութիւնը. հապա լուսահոգի «Մանկավարժական Թերթի» խումբագիր Պ. Յակոբ Տէր Յովհաննիսեանցը այդ եւ դոցա նման խելօք, մարդավարի ու քաղաքավարի անեկդոտները կարգալիս չխըղճահարուեցա՞ւ, որ այդ շիւտփաւ—աջափասանդալին գովասանք տուեց:— Պ. Ս. Գադեանցն էլ մի օր «Մշակի» մէջ կանչեց թէ՛ «անեկդոտներով ազգը չի լուսաւորուի», Կարծես՝ մենք ազգը լուսաւորելու համար ենք «Անեկդոտներ» տպագրում: Խելքի աղքատներ, խելքի եկէք: Մենք ուղում ենք խնդացնելով ու ծիծաղեցնելով՝ մեր թմրած ժողովրդի մէջ ընթերցանութեան սէր արծարծել, որ մի գեղեցիկ օր պատրաստ լինին ձեր եւ ձեզ նմանների փիլիսոփայական գրուածքների խորին ու մթին իմաստը ըմբռնելու եւ ձեզ ովսանաներով Արամազդի գահը բարձրացնելու:

Մի քանի յիմար—իմաստուններ է՛լ կան, որոնք կարծում են, թէ՛ մենք մեր «Անեկդոտներ»-ով խիստ ենք պարծենում. եւ մեր դէմ խօսելիս ու գրելիս այնպիսի խօսքեր են դուրս տալիս, որպէս թէ շատ մեծ բանք ենք արել, որ «Անեկդոտներ» ենք հրատարակել: Մէկ օր Պ. Գաբ. Միրզոյեանն

էլ «Մշակում» իւր մի պատասխանի մէջ մրեց: Ուորմելիք. ի՞նչու էք այն մտածում, ինչ որ երբէք մեր մտքովն էլ անց չէ կացել: «Անեկդօտներ» հրատարակելն էլ պարծենալու բան է, որ պարծենանք. այդ հօ՞ւսմէն երեխայ է՛լ կարող է հրատարակել:

Ինչ եւ իցէ: Խնդրում ենք ձեզնից, ո՛վ մեր դէմ՝ գրած անցեալ պարոններ, ո՛վ ներկայումս մեր դէմ՝ գրել մտածող պարոններ եւ ո՛վ ապագայում՝ գրելու միտք ունեցող շատ ու շատ ազնիւ եւ ահագին մեծապատիւ պարոններ, որ՝ ականջներիդ բամբակը հանէք եւ մի անգամ՝ ընդ միշտ լաւ լսէք, որ մենք մեր «Անեկդօտներով» ո՛չ Ազգը լուսաւորելու յանդգնութիւնն ենք ունեցել եւ ո՛չ՝ պարծենալու տղայամրտութիւնը: Այդպիսի աշխատութիւններով պարծեցողներին էլ մի լաւ լազալթի ծաղրում ենք: Հասկացա՞ք:

Դ.

Այժմ՝ դառնում ենք դէպի աշխարհիս երեսին բնակող բոլոր Հայերին եւ ուզում ենք մատնացոյց անել, թէ ~~Հայաստան~~ ո՛վքեր լաւ կ'անեն, որ կարգան մեր «Անեկդօտներ»-ը:

Խորհուրդ ենք տալիս կարգալու այն աշխարհից ~~Բաբար~~ անհոգ մարդկանցը, որոնք ո՛չ դանում են, ո՛չ հնձում թռչունի պէս ապրում են: Թո՛ղ կարգան. կարելի է՝ մի քիչ խելքի գան ու մի բան շինեն:

Թո՛ղ կարգան այն ծնողները, որոնք ընտանեկան հոգսերի տակ ճնշուած՝ մի ուրախ օր չեն տեսնում իրանց կեանքումը: Թո՛ղ կարգան, կարելի է՝ իրանց մտքի վերայից մի սեւ ամպ հեռանայ եւ օգուտը ցնդուի:

Թո՛ղ կարգան այն մարդիկ, որոնց երեսին Զատիկ օրն է՛լ ծիծաղ չէ գալիս: Թո՛ղ մի անգամ կուշտ ծիծաղեն ու փառք տան իրանց Ստեղծողին:

Թո՛ղ կարգան այն պարսպ—~~Բըն~~ էկո՛ղ ազնիւ պարոնները, որոնք ամբողջ օրը քամի կուլ տալով՝ չափսփում են քաղաքի փողոցները: Նոր լուր են ուզում՝ այստեղ է. թաւաշայ են ուզում՝ այստեղ է. թո՛ղ կարգան ու կարգան: Միայն այն նպատակով, որ միջից մի բան սովորեն, մի օգուտ քաղեն: Եթէ ո՛չ՝ թո՛ղ էլի քամի կուլ տան. հողմաղացին է՛լ քամի է հարկաւոր: Եթէ լաւ մտածենք, քամի կուլ տալն է՛լ մի ազգային եւ առողջապահական ծառայութիւն է:

Թո՛ղ կարգան մեր մեծապատիւ Ժայ Լա-

հասանելի էր, որոնք ամառը ճանճերի երգի տակը քաղցր քնում են իրանց վաճառանոցներում ու խանութներում: Եւ թո՛ղ հաւատացած լինին նոքա, որ այս գիրքը լաւ գեղթափ է քնի գէմ: Թմրածների կողքը բզոկ է, աչքերը բացող: Միայն այն նպատակով, որ միջից գոնէ մի մազաչափ խելք սովորեն: Եթէ ո՛չ, թո՛ղ էլի ճանճեր կուլ տան ու Մորիէոսի գիրկն ընկնեն:

Թո՛ղ կարդան արժանապատիժ եւ մոլֆթախոս փխրացուները, քելեխ ուտող ու որովայնամոլ փահանանները եւ վանքերում անգործութիւնից ու անշարժութիւնից փտող վարդապետները: Բայց, եթէ միջից մի վարդաքաղեն, թո՛ղ էլի իրանց քելեխն ուտեն, էլի Բաքոսի տաճարին ծառայեն:

Յ. Ն.

ԱՆԵԿԴՕՏՆԵՐ

Ա. ՄԱՅՆ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆԵԿԴՕՏՆԵՐ

Մի քանի մշեցի վիճում էին այն բանի մասին, թէ աշխարհիս երեսին որն է ամենամեծ քաղաքը:

Մէկն ասում էր.

—Վրը աշխարհիս զըմէնէն վե՛նճ քեաղաքն է մըր Վան քեաղաքը:

—Թըլփիզը վե՛նճ է, ասաց երկրորդը:

—Ջանըմ, Մոսկով, կ'ասեն՝ շատ խորտիկ ու վե՛նճ քեաղաք է, ասաց երրորդը:

—Է՛յ, ջանըմ, ձայն տուեց չորրորդը. Ստամբուլը օխտը խարիր տուն ա. խետ Ստամբուլը կը խաղաս:



Թուաբանութեան ուսուցիչը, որ հայերէն լաւ խօսել չգիտէր՝ աշակերտին խընդիր առաջարկելիս ասաց.

— Մի հոգու՛ղ՝ էրկու լուլէյն ունի՝ մէկը ներս թափելի, մէկը՝ դուրս թափելի:

— «Հոգու՛ղ» չէ, վարժապետ, ձայն տուեց աշակերտներից մէկը՝ «աւագան» պէտք է առէք:

— Ա՛ւ. ասաց ուսուցիչը՝ մի «աւագակ» է՛րկու լուլէյն ունի...:

*
*
*

Հաց թխելիս մարդ ու կին նստստած էին թորոնի մօտ:

— Այ մարդ, ասաց կինը՝ լաւ կ'ըլլի որ մենք մի կով առնենք. էն վախտը կաթը, մածուն, եղ ու պանիր կ'առնենանք. մի քիչ ապրուստներս էլ կը թեթեւանայ...:

— Ա՛ւ, պատասխանեց մարդը՝ էլաւ որ մեր կովը հորթ ծնեց, նրան սրտեղ կապենք. մեր քոխէն մեղ էլ հերիք չի:

Կինը իւր ձեռքի գրգռակով ցոյց տուեց իրանց խրճթի մի անկիւնը եւ ասաց.

— Այ, էնտեղ կը կապենք:

Իսկ մարդը բարկացած ձայն տուեց.

— Այ կնիկ, քիչ մնաց՝ ձեռքիդ ահա-

գին գրգռակով հորթի աչքը հանում էիր. մատովդ չէ՞իր կարող ցոյց տալ:

*
*
*

Գիւղացին տեսնելով, որ դարունը չոր է անց կենում եւ երաշտութիւնը անշուշտ վնասելու է իւր բոստանին՝ (բանջարանոց), ասաց.

— Ա՛ստուած, դու իմ բոստանին առատ անձրեւ տուր. ինչոր դուրս գայ՝ կէսն ինձ, կէսը քեզ:

Նորա խնդիրը կատարուեցաւ:

Մի անգամ երբ գիւղացին մօտեցաւ իւր բոստանի մի ձմերուկին եւ ուզում էր իմանալ հասած է՞ թէ՛ խակ, լանկարծ ամպը սկսեց գոռալ:

— Հը՛, ընչի՞ վախեցոր, ասաց գիւղացին. հէնց գիտես, թէ ձմերուկն եմ ուզում քողի:

*
*
*

Երեխան մի ձեռքով բերանի կէսը ծածկած՝ ասաց.

— Քա՛ւոր ագայ, հայրս խնդրում է՝ համեմէք մեր տուն, հարկայ ուտե՛նք:

— Բերանդ ինչի՞ ես ծածկել ունիկ, հարցրեց կնքահայրը:

— Հայրս ասաց, սր կէսբերան ասեմ, պատասխանեց երեխան:

— Բայ թող, բայ թող բերանդ ու կրկին ասա՛, ինչոր ասելու ես, ասաց կնքահայրը:

Երեխան ձեռքը յետ քաշեց բերանից ու ասաց.

— Քաւոր ալայ, հայրս խնդրում է՝ համեցէք մեր տունն, հարիսայ ուտե՛նք:

— Է՛, է՛, լա՛ւ, պատասխանեց կնքահայրը. գնա՛ հօրդ տո՛ւ.

« Կէսբերան է՛լ ասի՛ չեկաւ, բաց բերանով է՛լ կրկնեցի, էլի չ՛եկաւ » . շնորհակալ եմ ձեր մարդավարութենից:



Գիւղացին Կ. Պօլսի փողոցում գտաւ մի պարկ ոսկի: Իսկոյն քաշուեց, նստեց մի պատի տակը, պարկը գտտարկեց գետնին եւ առանձին կոյտեր շարելով՝ սկսեց իւր մէջ այսպիսի բաժիններ անել:

— Ես 10 հատը կը տամ Քորոսի աղջրկան՝ նշանդէք. էս 20 հատը կը տամ նորա հագուստին. էս 20 հատը կը կանթեմ,

որ կախ տայ վզիցը, էս 20 հատն է՛լ գըլխին. էս 20 հատն է՛լ ինձ հագուստի գին. էս 50 հատն է՛լ հարսանիքիս ծախսը: Ես 30 հատը կը տամ ուսն Քամոյի քեահիլ ձին կ'առնեմ: էս 100 հատն է՛լ կը տամ քաւոր Պետրոսի բաղը կ'առնեմ: էս 100 հատն է՛լ կը տամ Միրզոյի ձիթահանը կ'առնեմ: էս 100 հատն է՛լ Քամոսի ջաղացին կը տամ: էս 400 հատն է՛լ կը ծախսեմ՝ ինձ համար մի լաւ տուն կը շինեմ: էս մնացածն է՛լ կը տամ շահով, գրաւ կ'առնեմ իմ ուղած բազերն ու արտերը: Հանգիստ կ'ապրիմ, որգւոց որգի է՛լ խեղճութեան ու օտարութեան երես չեմ տեսնի: էս վերջինից 20 հատը կը տամ պարտքիս, 10 հատն է՛լ ճանապարհիս ծախսը կ'անեմ: ...

Յանկարծ վրայ հասաւ ոսկու տէրը, բոլորը ժողովեց, լցրեց իւր պարկը եւ գիւղացու միջքին մի քանի մարակհ ասցնելով՝ գոռաց.

— Ո՛ւմ ոսկիները ո՞ւմն էիր բաժանո՛ւմ: Ասաց ու հեռացաւ:

Իսկ գիւղացին տխուր ու տրտում ծոծրակը քորելով՝ անիճեց բարկութեամբ:

— Մե՛ռնի Քորոսի աղջիկ Կատարինէն, սա՛տիկ Քամոյի քեահիլը, քա՛նդուի քա՛ւոր

Պետրոսի բազ ու բաղչան, կործանուի Թոմասի ջազացը, տակն ու վրայ ըլնի Միրզոյի ձիթահանքը, հը...:

* *

Տէրը ծառային ասաց.

— Գնա՛ գինետները մանաւրի, տես՝ որ տեղ լաւ գինի կայ՝ դրան վերայ գրիր «է» տառը:

Մառան մի տեղ լաւ գինի գտաւ, կա՛ւ ճով դրան վերայ «է» գրեց: Մի ուրիշ տեղ աւելի լաւ գինի գտաւ, գրեց «է է». եւ միւս տեղումն էլ շատ ընտիր գինի գտնելով՝ գրեց «է է է»:

Տէրը գնաց եւ առաջին գինետանը կուշտ խմեց: Այնտեղից գուրս եկաւ, տեսաւ, որ միւս տեղում «է» է գրած. այնտեղ էլ լաւ խմեց. յետոյ տեսնելով «է է է», կրկին խմեց ու խեղդուեցաւ:

Մառան նորա գերեզմանաքարի վերայ այսպէս փորագրել տուեց. «է է է». փսսն բազում «է»-ից, տէրն իմ աստ է»:

* *

Գործակալ քահանան մի գիւղից գուրս գնալով՝ մի ուրիշ գիւղից նամակ գրեց առաջին գիւղի քահանաներին:

Նոցանից մէկը առաւ նամակը, նայեց եւ սկսեց գլուխը շարժել:

— Ի՞նչ ա գրած, տէր Գրիգոր, դայիմ կարդա, իմանանք ո՞վ է գրողը, ես ո՞ւմ վրայ ա գրած, հարցնում էր միւս քահանան:

— Կ'ասես հայելար չլի գրած. ուրիշ թաւուր ա էրեւում աչքիս, պատասխանեց տէր Գրիգորը: Ես ընէնց գիտեմ, որ ես ուրեւիւր ա, ես մի ուրիշ լիզու. այ տես, գրեւիս ըսկի դալամը թղթի վրեցը չի վեր կացել:

— Ի՛նչ տու, ես կարդամ, ասաց միւսը:

Առաւ նամակը, աչքերը տնկեց եւ գրլուխը շարժելով՝ ասաց.

— Ձէ՛, ախպեր, գժար ա գրած: Էս ն տառը կ'ասես կրկըղած թուրքի-պառաւ կնիկ ըլի. էն մէկ էլ ին էլ, կ'ասես թուրքիւար ա, գործակալի ընթի պէս ծուռը:

Ինչոր գառնայ, էլի դժւն քոմագ արա՛ տէ՛ր Սարգիս, բալքի հայելար կարգանք:

Կանչեցին մի ուսումնարանի աշակերտ, եւ նա կարգաց:

Նամակի հասցէն այս էր.

«Նորին Արժանապատու թեան տէր Սարգոսի Գարգարեանց. յոյժ հարկաւոր»:

Բովանդակութիւնն էլ այս էր.

«Պատուելի տէ՛ր Սարգիս հայր՝

«Լուեալ ի նախկին գործակալացն ըզ-
քրտնաջան աշխատանս Զեր ի բարեկաւո-
թիւն եկեղեցւոյ եւ ի պաշտպանութիւն
քրիստոսապաշտ ժողովրդեանդ յուզդա-
փառ հաւատոյ նա եւ զճերմեռանդութիւն
Զեր առ Սուրբ Աթոռն Եջմիածնի՝ մեծայոյս
եմք՝ թէ՛ դուք յայսմ հետէ եւս քան զեւս
ունիք առաւելապէս արխանալ ի պաշտա-
մանս Զերումն՝ որով գաջիք զմեզ առ Զեզ
միշտ բարեհաճ՝

Այլ եւ խնդրեմ կրկնապատկել զհա-
ւատարմութիւն Զեր առ Սուրբ Աթոռն եւ
արիութեամբ հոգ տանել առ ի բազմացուցա-
նել զուզնաքեայ մոխրդ զինչս համազգա-
կան նախամեծար Աթոռոյ Արարատեան մայր
եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Եջմիածնի»։

— Ի՞նչ հասկացար էդ նամակից, հար-
ցրեց տէր Գրիգորը։

— Դրուստն ասեմ՝ ոչինչ չիմացայ։

— Բայց ես մի քանի խօսքի միտքը հաս-
կացայ։

— Ո՞ր խօսքերի։

— Ա՛յ. եկէ՛ղեցի, ժողովո՛ւրդ, Եջմիածնէ։ Ա-
սենք թէ՛ գրել է՝ ժողովուրդին եկեղեցւու մէջ
քարոզ տալ, բայց «Եջմիածին» խօսքը ի՞նչ բան

ունի ըստեղ. ես թէ՛ Եջմիածնի համար ա
խօսում ժողովուրդն ըստեղ ի՞նչ բան ունի։

— Համա՛ տէ՛ր Սարգիս, գործակալի նա-
մակի մի խօսքից ես նրա բոլոր միտքն իմա-
ցայ։ Դու խօ իմացար, որ նա գնալիս հրա-
մայեց, որ վանքական եղը հաւաքենք եւ
այլ բիշաճ ենք վրէն։

— Հա՛, իմացայ։

— Էն էլ խօ իմացար, որ ըստեղ գրած
էր «Կոմիտաս» խօսքը։ Ես ասում եմ՝ էդ
խօսքը հայեվար չալրտի ըլի, թուրքեվար ա. եւ
զուս ա գալիս «Կոմիտաս» խօսքից, որ նշանա-
կում ա «այլ»։ Միթամ «եղի վրէն ազ քիչ
ածեցէք», ասում ա՛, էլի՛։

— Հա՛, հասկացայ։ Ես էլ մի բան ասեմ։
Նամակումը գրած էր «Կաթողիկէ Եջմիածնի».
եւ ասում եմ՝ ո՞վ գիտի, ուղում ա ասի, թէ՛
«Եջմիածնի Կաթողիկոսը գալիս ա»։

*
* *

Արծրունու թատրոնում մի ժողով պէտք
է կազմուէր՝ Հայոց համար մի բարեգոր-
ծական ընկերութիւն հիմնելու։ Նրկու ժո-
ղովական, որոնք այնքան վաղ էին եկել,
որ թատրոնում գեռ եւս սչոր չկար՝ պարա-
պօթիւնից սկսեցին զիտել աթոռները, ո-

րոնցից մէկի վերայ գրուած էին «Н. Н. У.» տառերը եւ որոնք նշանակում էին «Пачальникъ Кандармскаго Управления.»

— Ի՞նչ են նշանակում այս տառերը, հարցրեց մէկը միւսին:

— «Нужно желать успеха», պատասխանեց միւսը:

* *

Շամախում տանիքներն ու բակերը ձիւնով ծածկուել էին: Թարաւահ Բաղդասարը ձիւնը գուրս էր ածել փողոց: Բայց, երբ ոտտիկանները արգելեցին, Բաղդասարը կըրկին բակն էր ածել տալիս:

Անցաւորներից մէկը հարցրեց.

— Բաղդասար ախպէր, էդ ի՞նչ ես անում:

Նա պատասխանեց.

— Վեց կէս-շահի եմ տուել՝ գուրս եմ ածել. օխտը կէս-շահի էլ տալիս եմ՝ ներս են ածում:

* *

— Փեսայ, քաղցր արի, քաղցր, ասում էր զորքանչը:

Նա էլ միշտ մեղրով ու շաքարով էր գնում:

Աներն ասաց.

— Ո՛րդի, գնա մի ամսից յետոյ արի՛ առանց մեղր ու շաքարի. դու ինքդ մեզ համար մեղր ու շաքար կը գառնաս:

— Էն վախտն էլ ինձ պըտի ուտէ՞ք, պատասխանեց փեսան: Ես խաղողի սիրու համար բաղն եմ մոտնում: Ես է՛ք նշանածս, թէ չէ՛ քարոքանդ կ'անեմ բաղր:

* *

— Իշտահգ ի՞նչ է տալիս, անգաղար հարցնում էին հիւանդին նորա բարեկամները: Աւտելու ի՞նչ ես ուզում: ասա՛, մենք կը ճարենք:

— Հաւի կաթնից շինած պանիր, պատասխանեց հիւանդը, թէ չէ՛ հեռացէ՛ք աչքիցս:

* *

Հարսը, որ ո՛չ ձեւել գիտէր, ո՛չ կարելի հաւատացնում էր, որ լաւ գերձակից աւելի լաւ վարպետ է:

— Միայն թէ՛ ասում էր, իմ մօր մըկրատն ու ասեղը պատրաստ ձեռքիս ունեննայի. մանաւանդ, թէ՛ մեծ քոյրս ասեղանց կացնէր՝ ես հանէի. այն ժամանակ օրը տասը ձեռք շոր կը կարէի:

Պետրոս ու Պօղոս անունով երկուորեակ-
ները միմեանց շատ նման էին։ Նոցանից
մէկը մեռաւ։ Միւս օրը հայրը հարցրեց
մնացած սրգուն։

— Պօղոսն է մեռել թէ Պետրոսը։

— Հայրիկ, պատասխանեց սրգին. եթէ
ինձ կանչես «Պօղոս», մեռածը՝ Պետրոսն է.
իսկ եթէ ես լինիմ Պետրոսը՝ մեռածը Պօղոսն է։

— Ո՞րն էս ուզումս որ էս լինիմ Պօ-
ղոսը, թէ Պետրոսը։

— Ես կարծում եմ որ դու Պօղոսն ես,
ասաց հայրը։

— Ո՛չ. ես Պետրոսն եմ ասաց սրգին։

— Է՛, է՛, տրեմն խնայայ. Պօղոսն է մե-
ռել, ասաց հայրը։

* *

Մի պառաւ առաւօտից մինչեւ երեկոյ
անդադար աշխատում էր իւր այրիացած
հարսի հետ ճախարակի վերայ, չթողնելով
որ խեղճ հարսը գոնէ մի քանի րոպէ հան-
գըստանայ։ Հարսը սորան մի ճար անելու
համար մտածեց պառաւի հին ցաւերը նո-
րոգել։ Ուստի հարցրեց նորան.

— Մայրիկ, լուսահոգի սկեսառս ի՞նչ
հիւանդութիւնով մեռաւ։

— Մանկը դու, մանկը ճախարակդ, պա-

տասխանեց պառաւը. նա տնքաց, տնքաց,
այբերը խփեց, տարան թաղեցին։

* *

Ձեռնագրող կալիսկոպտը մի տիրացուի
քննելով՝ հարցրեց.

— Իսահակ նահապետը երկու օրգի
ունէ՞ր՝ Եսաւ եւ Յակոբ. նոցա հայրն ո՞վ էր։

— Սրբազան հայր, պատասխանեց տի-
րացուն. խնդրեմ ինձ երեք օր ժամանակ
տաք մտածելու։

Նա տուն գնաց ու սկսեց քրքրել Աս-
տուածաշունչը, բայց ոչինչ չգտաւ. Երրորդ
օրը նորա հօրեղբայրը եկաւ տեղեկանալու,
թէ նա երբ պէտք է ձեռնագրուի։

— Ա՛հ, բե՛ռի, ասաց տիրացուն, քիչ օ-
րից յետոյ ես քահանայ պէտք է ըլլեմ ու գու-
իմ ձեռքս պէտք է համբուրես. բայց էս
անիծեալ գժուար հարցմունքը վախենամ
թէ ինձ գժուացնի։

— Ի՞նչ հարցրեց առջնորդ հայրը, ասաց
հօրեղբայրը։

— Կարծեմ սրբազանի միտքը կաշառք
առնել է, թէ չէ՝ նա էսպէս գժուար բան
չպէտք է հարցնէր։ Հարցրեց, թէ. «Իսահակ
նահապետն ունէ՞ր երկու օրգի՞ Եսաւ եւ
Յակոբ. նրանց հայրն ո՞վ էր»։

—Ախրը դու 27 տարուայ տիրացու ես.
չե՞ս կարողանում հասկանալ:

—Հոււտտա՛ որ խելքս չի հասնում:

—Լսիր ուրեմն. ես ունեմ երկու որդի՝
Պարապետ ու Մարտիրոս: Արանց հայրն ո՛վ է:

—Քեռի Կիրակոսն է:

—Հէնց են էլ էգպէս է. էլ ի՞նչ կայ
մտածելու:

Տիրացուն հետեւեալ օրը գնաց եսկիս-
կոպոսին ներկայացաւ. գլուխ տուեց ու
կանգնեց:

—Հա՛ ի՞նչ է, տիրացու, գտա՞ր պատաս-
խանք:

—Հրամանքիս սրբազան, հարցրէ՛ք:

—Իսահակ նահապետը երկու որդի ու-
նէր. Եսաւ եւ Յակոբ: Նոցա հայրն ո՛վ էր:

—Քեռի Կիրակոսը, պատասխանեց տի-
րացուն:

* *

Տաճիկ աւագակները կողոպտեցին մի
հայի եւ ծիծաղելու համար հարցրին նորան.

—Արմէ՛նի, ինչո՞ւ Ասրիին չեն տուել
Քարամիրն:

Հայը տեսնելով՝ որ կատակ են անում
ինքն էլ պատասխանեց.

—Ա՛յ քանքամ ի՞նչ անեմ. տային էլ ի՛նչ
Մէկ էլ որ՝ սա ո՞ր ժամանակուայ սոյքաթէ:

* *

Գիւղական քահանան մի մատեան ձեռքին
բռնած՝ գիւղացիներից եւ գիւղն եկող օտա-
րական վաճառականներից փող էր ժողո-
ւում: ասելով թէ. «Եկեղեցի պէտք է շին-
ենք»:

Մի անգամ այդ գիւղն եկաւ մի հա-
րուստ վաճառական, որին ներկայանալով
քահանան՝ առաջարկեց իւր խնդիրը:

—Ի՞նչ հարկաւոր է քիչ քիչ փող ժո-
ղովել, պատասխանեց վաճառականը. ես
ինքս իմ փողով կը շինեմ:

Այս անպատելի պատասխանը ստանա-
լով՝ քահանան տխուր տրտում տուն գնաց:
Երէցկինը նկատելով այս՝ հարցրեց.

—Ընչի՞ ես ըտէնց տխուր:

—Է՛հ, ասաց տէրտէրը. էսօր ընէնց
բան պատահեց, որ քուրն եկաւ ինձ տա-
րաւ:

—Ի՞նչ ա՛յ տէրտէր, ի՞նչ ա պատահել,
հարցրեց երէցկինը:

—Է՛հ ինչ ասեմ: Էս օր գեղը մի հա-
րուստ վաճառական էր եկել. գնացի եկե-

դեցու շինութեան համար փող ուզեցի. էն վիզ կտորածը «Նա իմ փողով կը շինեմ» առում ա. էլ փող հաւարեցին ի՞նչ հարկաւոր ա:

— Հէ՛ր օրհնած, ասած կինը, դրա համար էլ ի՞նչ ես դարդ անում. աւելի լաւ չի: Դուն չարչարանքից ազատուցիր, էգեղեցին էլ շինուեց:

Բահանան պատասխան տուեց:

— Եկեղեցին շինուեց, համա՛ մեր տունը քանդուեց:

*
* *

Մի հայ մարդ ուռսի հետ խօսելիս ուզենալով նորան ասել. «քո գլխի արեւը գիտենայ», ասաց. «ТВОЯ ГОЛОВА СОЛНЦЕ ЗНАЕТЬ»!!.

*
* *

Շինութեան վերայ որմնադիրներ էին բանում: Մշակներից մէկն սկսեց երգել Մշու երգեր, միայն շատ անհամ եղանակով:

Որմնադիրներից մէկը ձայն տուեց երգողին. «Ասա՛, ասա՛, զահլեներս գնա՛:

*
* *

Գիւղական ուսումնարանում ուսուցիչը աշակերտներին հարցնում էր.

— Այս ի՞նչ է:

— Փայտ է, պատասխանեց աշակերտը:

— Ո՞րտեղից է եկել:

— Դրախտիցը:

— Ի՞նչ պտուղ է տալիս:

— Խելք եւ ուսում:

— Ո՛ւմը:

— Աշխատասէր ու խելօք աշակերտին:

— Յոյլին ի՞նչ է տալիս:

— Փուշ, տատասկ ու քոթակ:

*
* *

Մի ծերունի երազ տեսաւ, որպէս թէ ինքը Սուրբ Սարգսի տօնին պէտք է մեռնի: Այս պատճառով նա ամէն օր եկեղեցի էր գնում եւ աղօթում էր, որ Աստուած խնայէ:

Բայց երբ տեսաւ, որ տօնը անց կացաւ, իսկ ինքը դեռ կենդանի է, ասաց. «Է՛հ, էլ չեմ մեռնի, սո՛ւտ խաբեցին որ աղօթք անեմ»:

*
* *

Մի մարդ իւր հիւրերին զարմացնելու համար միշտ ստեր էր խօսում եւ իւր ասածները հաստատելով վկայ էր բերում իւր ծառային:

— Աղայ, ասաց մէկ օր ծառան, դու միշտ ստեր ես խօսում ու ինձ էլ վկայ ես բերում: Ախրր իմ օգուտն ի՞նչ ա, որ հոգիս ստտանին եմ պահ տալիս:

— Ամէն մի ստին վկայութիւն տալու համար քեզ մի կոպէկ կը տամ ասաց տէրը:

Ծառան համաձայնեց:

Մի անգամ տէրը մի շատ մեծ սուտ խօսեց իւր հիւրերի մօտ եւ ձայն տուեց.

— Ա՛յ տղայ, Արմոն. այնպէս չէ՞:

— Ձէ՛, աղայ, պատասխանեց ծառան, ես էդ պէս մեծ մեծ ստերը մի կոպէկով չեմ բարըշել:

* *

Դատրիժում մի աններեյի յանցանքի համար պէտք է պատժէին մի կնոջ: Նորա երեսին մուր քսեցին, հակառակ կողմից նստեցըրին իշի վերայ եւ պոչը ձեռքը տուին: Առաջեւից մեծ բազմութիւն էր գնում զուռնայ-նաղարայ ածելով:

Ճանապարհին իշի ոտքը սահեցաւ եւ կինը, որ քիչ մնաց վայր էր ընկնում, ուղղուելով իշի վերայ, ձայն տուեց. «Քիչ մնաց, որ սաղ քաղաքում խայտառակուէի»:

Մի խան իւր վեզիրներով գնաց գրօսելու: Նորա աչքն ընկաւ մի հովուի աղջկայ վերայ: Նա շուտով տուն վերագառնալով՝ իւր վեզիրներից մէկին մեծամեծ բնծաներով ուղարկեց հովուի մօտ:

Վեզիրը յայտնեց հովուին խանի կամքը: Բայց նա պատասխանեց.

— Ձէ՛, իմ աղջիկս ես խանին չեմ տալ. դուք հո՛ւմըք, որ եկալըք իմ աղջիկս օգուտ խանը ինքն էլ կեայ, հէլլայ տալ չեմ վեր տալ չեմ:

Խանը ուրիշ վեզիր ուղարկեց աւելի թանկագին բնծաներով, բայց կրկին նոյն պատասխանը ստացաւ: Վերջապէս խանի մօտ գնաց մի ուրիշ հովու եւ յայտնեց, որ ինքը կարող է հաւանեցնել առաջին հովուին, որ իւր աղջիկը կնութեան տայ: Նա էլ մեծամեծ խոստումներով ուղարկեց նորա մօտ:

Սա հատնելով առաջին հովուի տունը՝ ձայն տուեց.

— Ագա՛, հայրման, խանը քեզ նման թուլէն աղջիկը ուզես ա, դու էլ տայիս չի՛ս:

— Ա՛, քը մատաղ, պատասխանեց աղջկայ հայրը. հո՛ւ ա քեզ նման մին տի մըրդավարի եկալ, օզալ որ տամ վույ: Խէ՛

չըմ տալ: Հի՞նչ պիտի ասեմ: Ես է՛լ, աղջիկս
է՛լ խանին կետտան չընք:

* *

«Փանոս» անուանով մի մարդ բժիշկ հը-
քաւիրեց իւր հիւանդ եղբոր համար:

—Что у Васъ?, հարցրեց բժիշկը:

—Въ животѣ все грѣ-грѣ дѣлаетъ,
պատասխանեց Փանոսը:

—Значитъ поносъ!, ասաց բժիշկը:

—Нѣтъ! я Паносъ, а онъ Арутинъ,
պատասխանեց Փանոսը:

—Хорошо, но у него поносъ, կրկնեց
բժիշկը:

—Нѣтъ! պատասխանեց հիւանդի եղ-
բայրը. Онъ Арутинъ, Паносъ Я!.

* *

Փխտոր կիւրակէ օրը իւր տանը հաց
չկերաւ, այլ ակորժակ պահելով՝ գնաց իւր
ծանօթի տունը: Տարաբախտաբար նոքա ար-
դէն վերջացրել էին իրանց ճաշը: Եկողը կա-
մենալով հասկացներ, որ հաց ուտելու ժա-
մանակն է, ասաց տան տիրոջը:

—Հացը որ ուտենք՝ սրտեղ պէտք է քը-
նենք:

—Մենք հաց ենք կերել, դու՛ սրտեղ ու-
ղում ես՝ քնի, սառնութեամբ պատասխա-
նեց տան տէրը:

* *

Մի մարդու յայտնեցին, որ նորա պար-
տէզը գոմէշներ են մօտել: Տէրը իւր ծառա-
ների հետ վազեցին պարտէզը, սրտեղ բացի
գոմէշներից մի քահանայ էլ տեսան:

—Այ ամա՛ն, ջմտ արէք, ձայն տուեց:
նա ծառաներին. գոմէշները եօրայ կը գնան,
սուաջ տէրտէրին դժւրս արէք:

* *

Մի Տաճիկ որոնելով իւր կորցրած ուղտը՝
պատահեցաւ մի պառաւած հաց աղջկայ որ
կանգնած էր իրանց դրանը, եւ հարցրեց:

—Այ, աղջիկ, այս կողմը մի գաւաղ
(ուղտ) անց չկացա՞ւ:

—Եղբայր ծան, ասաց աղջիկը. ինձ հօ-
րեղբորս որդին է՛լ է ուղղում, քեռուս տղէն
է՛լ. բայց չգիտեմ՝ սրին առնեմ:

—Լաւ, ասաց Տաճիկը, ես այդ չեմ
հարցնում: Այս կողմը մի գաւաղ անցա՞ւ,
թէ ոչ:

—Իսկ ես աւելի լաւ եմ համարում հօ-
րեղբորս որդուն առնել:

— Ես այդ չեմ հարցնում: դժուար է ասում: դժուար չեմ տեսնել:

— Ե՛, է՛, եղբայր, ասաց պառաւած աղջիկը, ամէն մարդու դարտն իր համար դժուար չի, բայց ի՞նչ զահրումար աս:

*
* *

Մէկը գլխարկ-կարողին մի գառան մորթի տուեց եւ պատուիրեց, որ նորանից իւր համար մի գլխարկ կարէ: Տուն վերագառնալիս նա մտածում էր՝ «Մորթին մեծ էր՝ կարելի է, երկուսը դուրս գայ»: եւ գնաց կարողին ասաց:

— Ուստայ, էգ մորթուցը էրկու գդակ չի դուրս գայ:

— Ինչի՛ չէ, պատասխանեց գլխարկ-կարողը:

— Դէ, որ էգպէս է, էրկուսը կարի:

Ասաց ու հեռացաւ: Բայց կրկին մտածելով՝ վերագարձաւ եւ հարցրեց:

— Ուստայ, իրեքը չի դուրս գայ:

— Ինչի՛ չէ, պատասխանեց նա:

— Չորսը չի դուրս գայ:

— Դուրս կը գայ:

— Հինգը՞:

— Ինչի՛ չէ, դուրս կը գայ:

— Բայց հինգը կարի:

Ասաց ու գնաց: Բայց շուտով յետ գարձաւ եւ ասաց:

— Ուստայ, ութը չի դուրս գայ:

— Ինչի՛ չէ:

— Բայց ութը կարի:

— Շատ լաւ:

Նա հեռացաւ եւ երեք օրից յետոյ գնաց գլխարկները ստանալու:

— Վէր, այ տղայ, ասաց գլխարկ-կարողը իւր աշակերտին. էս մարդու գդակները բեր իրան տուր:

Աշակերտը վեր կացաւ, հանեց ութ հատ մանր գլխարկները եւ գրեց տիրոջ առաջը:

— Էս ընչե՛ր են, ուստայ, զարմանալով հարցրեց մորթու տէրը:

— Քո գդակներն են:

— Բայց ինչի՞ էսքան մանգրն են:

— Տո՛, խելքի՛ աղքատ, ասաց կարողը. բայց ուղում էիր որ մի մորթուց ութ գդակ կարե՞նք:

*
* *

Մի ուսումնական երիտասարդ գնացել էր մի գիւղ: Այնտեղ նա մի անգամ գիւղացիների մէջ զանազան առարկաների վե-

բայ դատողութիւն էր անում: Գիւղացիները մէկի համբերութիւնը հատնելով լեր-ջապէս ձայն տուեց:

— Տօ, ջանքն էս ի՞նչ կ'ըսէ: Գացէք Մրտոյին կանչէք, բան մը ըսի՝ ծրծրանք օր բան էղնի:

Յանկարծ ներս մտաւ Մրտոն եւ իսկոյն սկսեց.

— Աքլորն էկաւ տռճիկ-մռճիկ

Հաւերն էլան զռճիկ-մռճիկ:

Հա՛, հա՛, հա՛, հա՛, ա՛յ բան, աղաղակեցին գիւղացիները՝ ծափահարելով Մրտոյին:

* *

Տէր ու ծառայ ճանապարհորդում էին: Օրը տարաժամեց եւ նոքա ստիպուեցան գիշերը դաշտումն անց կացնել: Քնելու ժամանակ տէրն ասաց ծառային.

— Գէ՛որգ, ձիուն խոտ տո՛ւր, դու էլ չքնես, արթուն կայ. ես յոգնած եմ: Քիչ պէտք է քնեմ:

— Քնի՛, ես արթուն եմ: ասաց ծառան:

Տէրը քնեց:

Մի քանի րոպէից յետոյ նա արթնացաւ ու հարցրեց.

— Գէ՛որգ, քնել ե՞ս:

— Չէ՛, աղայ, փիքը եմ անում:

— Ի՞նչ ես փիքը անում:

— Փիքը եմ անում: Թէ էս սարումն ո՛վ է էսքան խոտ ցանել:

— Փիքը արա՛, որդի, փիքը արա՛, ասաց տէրը եւ կրկին քնեց:

Անցաւ մի երկու ժամ: Նա կրկին արթնացաւ եւ հարցրեց.

— Գէ՛որգ, քնել ե՞ս:

— Չէ՛, աղայ, փիքը եմ անում:

— Ի՞նչ ես փիքը անում:

— Փիքը եմ անում՝ թէ խուրջինը ե՛ս լիւր առնեմ, թամբը դու, ամօթէ. թէ թամբը ես լիւր առնեմ, խուրջինը՝ դո՛ւ, ծանր է, վախում եմ չկարողանաւ տանել:

— Ի՞նչ ես ասում: յիմար. թամբը կը գցենք ձիու վրէն, խուրջինն էլ վրէն կը գնենք, էլ ի՞նչ:

— Աղայ, ասաց ծառան, ես էլ հէնց էգ եմ ասում է՛, թէ մնց անենք. մի սհաթ կ'ըլի՛ որ ձին գողացան....

* *

Մի տան մէջ կռուի ձայներ էին լսում: Քահանան ներս մտաւ եւ ասաց կռուող մուսիներին.

—Ամօթ ա, այ որդիք: խալխն ինչ կ'ասի,
որ բաժանուում էք:

—Իս էլ չիմ կանայ դրա մօտ ապրի,
ասաց կինը: մէ գլուխ հարբում է:

—Քու հոգուն մեռնիմ, աէր տէր ջան,
ասաց մարդը: էս սաղ մինձ պասը լիդրն
օխտն աբասով լոբի իմ առի, ուտեցրի դրան,
ու հիմի կի ուզում է բաժնուի: էսէնց անաս-
տուձութիւն կ'ուլի:

* *

Ղազախեցի քահանան ուրբաթ օրով մա-
ծուն կերաւ եւ դուրս գնաց հրապարակը՝
ման գալու: Գիւղացիներին մէկը նորա մօ-
րուքի վերայ մածնի կաթիլներ տեսաւ եւ
հարցրեց.

—Ա՛ տէր, ըսօր ի՞նչ ա, որ մածուն ես
կերել:

—Ի՞նչ ա, այ որդի:

—Ուրբաթ ա, ինչ ա:

—Ա՛յ կըտորուի ձեզ պէս ժողովուրդը,
որ տէրտէրին ո՛նչ պասն են իմաց անըմ: ո՛նչ
ուտիսը, հը՛, ասաց քահանան:

* *

—Պարո՛ւն գոխտո՛ւր ասաց, հիւանդը,

իմ դէյդէն (մօրաքոյր) հիւանդ էր: էս դե-
ղիցը խմից ու մեռաւ:

—Վա՛, ինչ անենք, պատասխանեց բժիշ-
կը: էն օրն էլ իմ բիձու տղէն էր հիւանդ:
էս դեղիցը չխմեց, բայց էլի մեռաւ:

* *

Գողը գիշերով աշխատում էր խարտո-
ցով կոտրել մի կրպակի կողպէքը: Մի ան-
ցորդ նկատելով այդ՝ մօտեցաւ ու հարցրեց.

—Էս վախտիս ի՞նչ ես շինում էստեղ:

—ձիանուր (նուագարան) եմ ածում:
պատասխանեց գողը առանց շփոթուելու:

—Էդ ի՞նչ թաւուր ճիանուր ա, որ
ձէն չունի, ասաց անցորդը:

—Սրա ձէնը էգուց կ'իմանաս, պատաս-
խանեց գողը:

* *

Տիկինը պատուիրեց ծառային, որ իրան
սպասէ բաղանիքի դրանը: Իսկ ինքը ներս
մտաւ լողանալու: Ձմեռուայ ամենացուրտ
օրերից մէկն էր, եւ ծառան գողում էր
ամբողջ մարմնով:

Մի կին տեսնելով նորա գրութիւնը՝
շտապով մտաւ բաղանիքը եւ նորա տիկնոջը
ասաց.

— Ձեր ծառան գուրսը սառել փէտ է
դառել:

Իսկ տիկինը վարմանալով ասաց.

— Էսպէս տաք տեղը մարդ կը սառչի՞:

* *

Վարդապետը սկսեց քարոզել մի գիւ-
ղական եկեղեցում:

— Մի վրդապետ քինաց Երուսաղէմ, ի-
մացած, սիրելի ժողովուրդ, մի վրդապետ քի-
նաց Երուսաղէմ: Էգպէս, սիրելի ժողովուրդ,
մի վրդապետ քինաց Երուսաղէմ:

Ժողովրդականներից մէկը ձայն տուեց.

— Թէ՛ք քինաց, թող յետ դեառնայ,
քեահ ոտը չկոտրուա՞ն:

* *

Յիւդացիին հրապարակում իւր ալիւրի
պարկերի մօտ կանգնած էր եւ, ինչպէս երե-
ւում էր՝ առանց երկար խօսելու էր ուղում
ծախել իւր ապրանքը:

Երբ մարդիկ հարցնում էին նորան.

— Ալիւրիդ գինն ի՞նչ է, — նա պատաս-
խանում էր.

— Առաւօտն ասել եմ:

Մի խելճ մարդ իւր տանը աղօթելիս
միշտ բարձր ձայնով ասում էր.

— Տէ՛ր Աստուած, մի 100 մանէթ հա-
ցըրո՛ւ ինձ: Բայց, եթէ աւելի կամ պակաս
լինի՝ չեմ առնի. գիտենա՛ս:

Նորա հարուստ գրացիին ցանցկացաւ
փորձել ու իմանալ, թէ արդեօք խաբերայու-
թիւն չէ՞ նորա արածը: Այս պատճառով նա
մի անգամ, աղօթելու ժամանակ նորա տան
երկկից ցած ձգեց մի թղթում փաթաթած
99 ա. 99 կոպէկ:

Ինչճ մարդը վեր առաւ փողը եւ հա-
մարելուց յետոյ ձայն տուեց.

— Ո՛ղ տէր, մի կոպէկն էլ թղթին ես
դուրս եկել՞. վնաս չունի, կ'առնեմ:

* *

Ղարա-Սու-Բազարի նեղ ու ցեխոտ փո-
ղոցներից մէկում ձմեռ ժամանակ մի կին
կանգնած էր եւ չէր սրտապնդւում անց-
նելու: Այդ միջոցին անց կացաւ մի ռուս զի-
նուոր եւ կինը նշաններով խնդրեց նորան,
որ իրան անց կացնէ միւս կողմը:

Զինուորը անց կացրեց նորան եւ թուշը
համբուրելով հեռացաւ:

Երբ այն կինը տուն հասաւ, պատմեց
այսպէս.

— Զոհներ գլխուս: Ասոր անպէս մէկ փորձանքի հանդիպեցայ օր՝ բաղանիքէն էկած ատենս շուարած մնացի: Զամուռն անպէս խորունկ էր, օր չգիտէի, ինչպէս գիմացն անցնէի: Ադ ատենը մէկ հատ սալգատ ռաստ էկաւ. շմարքներով հասկըցուցի, օր ինձի մէկալ սէմթն անցունէ: Հարամ սատկելուն ինձի անցուց, ամա՛ Վերջն ինչ անէ նա՛ աղէկ է, բռնեց զօւռով պագից. իմա ալ սիրտս էլաւ, գէշ գէշ քռֆեցի:

— Ե՛յ, ի՞նչ տսիր, հարցրին նորան լսողները:

— Ոտքս ամուր գետնին զարկի ու «Սփափա» չսրթ, բսի:

* *

Մի մարդ նոր վերարկու էր հագել: Մի դրան մօտով անցնելիս մի շուն հաջեց վերան: Նա դարձաւ, շանը ստաց. «Վերարկուս ես շնորհաւորումս թէ՛ բնութիւնդ այդ է»:

* *

Մի Ռուս իմանալով, որ Հայերից մէկը գողացել է իւր կովը՝ գնաց նորա մօտ եւ ասաց.

— Послушай!, гдѣ корова?

Փողացողի որդու անունը Կառլ էր եւ բանում էր բերդումը: Իսկ գողացողը, որպէս թէ չէ հասկանում Ռուսի ասածը՝ պատասխանեց.

— Կարոն բերդն է. камень тащитъ, камень!.

— Я тебѣ говорю: гдѣ корова? Կրկնեց Ռուսը:

— Զօ, կարօն բերդն է՝ կըտեմ: камень тащитъ, камень!.

— Ռուսի համբերութիւնը հատնելով՝ Հային քաշեց գէպի ստորիկանարանը (police):

— Իսկ գողացողը իմանալով, որ սորա վերջը վատ կը լինի, գնաց, բերեց կովը եւ ձգելով Ռուսի առաջը՝ ասաց.

— Ա՛ռ, անխղճմտանք, «Կարոյ» կ'ըսէիր, «կով» կ'ըսէիր, առ ոտներն աչքդ կոխէ:

* *

— Հը՛ Գալուստ, նոր համբաւ գիտե՛ս:

— Ոչ. ի՞նչ նոր համբաւ:

— Ասում են որ շահը թուրքացել է:

— Ա՛յ ափսոս, լաւ Հայ էր:

* *

Փողոցով մի Տաճկի գիտի էին յուզարկաւորում: Մահմետականների բաղմուխեան

մէջ՝ դիպարշներին լալով հետեւում էր մի
Հայ:

—Այ մարդ, ասաց մի ուրիշ Հայ, մօտե-
նալով նորան, դու ինչո՞ւ ես լաց լինում:

—Տօ ես սրա համար եմ լաց ըլում:
պատասխանեց նա. ես էնդուր եմ լաց ըլում:
Թէ էս անհաւատները մէկ մէկ մեռնելով՝
ե՛րբ պէտք է վերջանան:

* *

Ա. էջմիածնում հիւանդացել էր մի տի-
րացու: Հրաւիրուած բժիշկը հարցրեց.

—Լուծո՞ւմ ես:

—Ո՛չ, պատասխանեց հիւանդը. ես նա-
խադրուածներ դեռ նոր եմ վերջացրել:

* *

Երկու քահանայ զուարճախօսութիւն
էին անում: Մէկը միւսին առաջարկեց.

—Աբա մէկ այնպիսի ոտանաւորի տող
ասա՛, որ վերջանայ «վ» տառով:

—Քո քինթը հէնց է՝ Ռուսի սալ տ-
ասց նա:

Իսկ քոնիցը կախուած է մի մալ ա-
սաց առաջինը:

—Փարպալի բէգին հաշտարար գատա-
ւոր են նշանակել:

—Ո՞ր է. գրա վերջը «վ» չկայ, հար-
ցրեց առաջինը:

—Ասենք վերջումը չկայ, մէջն էլ չկայ,
ասաց երկրորդը:

* *

Ժլատ հարուստին ուսուցիչն ասում
էր.

—Սարգիս աղայ, դէ՛ տխրր էն երկու
մանէթը տուր է՛ է՛ ուսումնարանի մա-
տեանումը որ գրուեցիր:

—Լաւ, կը տամ ի՛նչ ես շտապում:

—Ել ե՛րբ կը տաս. դէ՛ տուր էլի՛:

—Այ որդի, տխրր ըսէնց շատ ո՛նց
տամ: Ես փո՛ղ ա՛, փո՛ղ. էս խօ հոգի չի որ
հանեմ ձեռաց տամ:

* *

Քահանան քարոզելիս ասում էր.

—Ո՛վ աղքատին մի մանէթ տայ, Աս-
տուած նորա փոխարէն՝ մէկը հարիւրով
կը վարձատրի:

—Մի ժողովրդական այս լսելով՝ գնաց,
իւր ունեցած 100 մանէթը աղքատներին

բաժանեց: Սպասեց մէկ օր, երկու օր. ոչինչ չտուացաւ: Վերջապէս շատ մոտոտանջուելով՝ տկարացաւ, փորացաւ ընկաւ:

Մի անգամ, երբ ցաւը շատ նեղացրեց, նա նստեց մի պատի տակը: Քիչ էր մնացել, որ նուազիլ: Բայց այդ միջոցին նա ձեռքը հասցրեց մի մեծ քարի, յանկարծ քարը քանդուեցաւ եւ ի՜նչ տեսաւ: Տակը մի կճուճ կար՝ ոսկով լիքը: Ուրախացած նա վեր կացաւ տեղից եւ փառք տալով Աստծուն՝ ձայն տուեց.

— Ա՛ստուած ջան, ես գիտէի, որ պէտք է տայիր. բայց մարդու փորացաւ ես գցումս յետոյ ես տալիս:

Աւազակներին կողոպտուելուց յետոյ գիւղացին պատմում էր.

— ձամբեցէն հանին, յաչքերս կապին, ձեռներս ու ոտներս էլ կապին, փողերս խին, շորերս հագէս հանին, մնացի շապիկով. հըմը մէկէլ օր ձէն տուին, թէ «Շապիկն էլ հանէք», էն սհաթին Հոգին Սուրբ վկայեց. ըսեցի՝ թէ «էդ մարդիկը գող են»:

Ուսուցիչը նորեկ աշակերտին կէտադրութեան մասին հետեւեալ խրատն էր տա-

լիս. «Սորալէսի մօտ քիչ կանգնիր, Բըջալէսի մօտ քիչ աւելի կանգնիր, իսկ Վերջալէսի մօտ բոլորովին կանգնիր»:

Հետեւեալ դասին աշակերտը պատահելով ստորակէտին՝ Բէլ Բարձրացաւ նստարանից. պատահելով միջակէտին՝ Բէլ Բարձրացաւ. իսկ վերջակէտին պատահելով Բարձրին կանգնեց նստարանի վերայ:

Ձատիկ օրը մէկը պատահելով իւր ծանօթին՝ ասաց.

— Քրիստոս յարեա՛ւ ի մեռելոց:

— Մահուամբ զմահ կոխեաց, պատասխանեց նա:

Ժլատ հարուստը բարեկենդանի գիշերը ցամաք հաց էր ուտում: Երկար մօտճելուց յետոյ վերջապէս ձայն տուեց իւր կնոջը. «Ա՛յ կնիկ, աշխարհս մեռնել կայ, գո՛ւ ու ջհանլամ՝ գնա՛, էն սոխի կէսը կտրէ՛, բեր ուտենք»:

Քահանան երազում տեսնում էր, որ մէկը իրան «Ժամոց» է տալիս: Ուստի քնի մէջ սկսեց բարձր ձայնով «պահպանիչ» ասել:

Երէցիկներ վախենալով՝ արթնացրեց նորան։

— Անիծած, տապ քահանան արթնանալով՝ չէի՞ր կարող համբերել, որ «ժամոցն» էրայ առնէի ու յետոյ զարթեցնէիր։

* *

Հարսանիքի ժամանակ հարսնացուն լաց էր լինում։

— Ո՛րդի, լաց մի՛ ըլի, տապ հայրը. էլ չեմ թողնի, որ քեզ տանեն։

— Չէ, մնա՛ի. պատասխանեց աղջիկը, համ լաց կ'ըլեմ, համ կ'երթամ։

* *

Մոսկուայի հայ վաճառականներից մէկը, որի ազգանունը «Խալաթով» էր, իւր վաճառանոցը տեղափոխեց քաղաքի մի նշանաւոր փողոց։ Իսկ նորա գործակատարներից մէկը օգուտ քաղելով վաճառականի համբաւից՝ նորա նախկին վաճառանոցը ինքը ձեռք առաւ եւ ճակատին կախ արեց հետեւեալ յայտագիրը. «Продажа азіатскихъ шелковыхъ товаровъ И. Халатовъ», որից շատերը խաբուելով՝ այնտեղ էին մոնում։

Տփլիսեցի վաճառական Պառաւ Յովանէն տուում էր.

— Աշխարհքումս մարգու ծնուիլն է՛ր, ապրիլն է՛ր, հարստանալն է՛լ ցաւ է՛, մենակ մեռնիլն է հանգիստ։ Ասում ինք՝ «իլան մարգը ծնուեցաւ, մինձացաւ, ապրեցաւ, հարստացաւ»։ մենակ մեռնիլն է աւացաւ, ասում ինք «մեռաւ»։ Միր Միրզայէվն էլ ծնուեցաւ — ցաւ, մինձացաւ — ցաւ, հարստացաւ — ցաւ, ապրեցաւ — ցաւ, մեռաւ — հանգաւ։

* *

Նոր աշակերտը տեսնելով պատից կախ արած աշխարհացոյցը՝ հարցրեց.

— Էս ի՞նչ է։

— Աշխարհացոյց է, պատասխանեցին ընկերները։

— Ի՞նչպէս թէ աշխարհացոյց է։ Ի՞նչպէս կարելի է, որ սաղ աշխարհը էս թրդ թումը տեղաւորուի։— Բայց էս ի՞նչ է, տապ նոր աշակերտը։

— Մով է, տապին։

— Բայտ ինչի՞ մաստ չէ թրջում։

* *

Տաւը հոգի խօսք տուին միմեանց որ քաղանիք գնան։ Նոցանից իննը ծածուկ

մի մի հաւկիթ վեր առան հետներն ու գը-
նացին:

Մտնելով ջրով լցրած աւազանը՝ նոցա-
նից մէկն ասաց.

— Թո՛ղ մեզնից նա՛ տայ այսօրուայ բա-
ղանիքի ծախքը: Ի՛նչ չկարողանայ բերնից մի
հաւկիթ հանել:

✓ Շուտով իննը հոգին միասին մի մի հաւ-
կիթ ցոյց տուին իրանց բերաններում: Տաս-
ներորդը նոյնպէս աշխատեց մի հաւկիթ ցոյց
տալ. բայց տեսնելով, որ չէ կարողանում
բարձրաձայն կանչեց. «Ծուզրուզո՛ւ ո՛ւ ո՛ւ»:

— Ի՛նչ ես անում հարցրին ընկերները:

— Վա՛, ասաց նա, բաս էգբան հաւերի
մէջ մի տըլար չպէ՛տք է լինի:

Ամէնքը ծիծաղեցան եւ նա ազատուե-
ցաւ ծախքից:

* *

Հարբած մարդուն ասացին.

— Պարո՛ն, դուք ձեր ձին թարս էք թամ-
քում:

— Դուք ի՛նչ գիտէք, թէ ես ո՛ր կողմն
եմ ուզում գնալ, ասաց նա բարկացած:

* *

Հարսը իւր երեխայի հետ միշտ խաւիժ
էին ուտում: Իսկ իւր սկեսրայրին միայն մի

կտոր չոր հաց ու թթու թան էր տալիս:
Սկեսրայրը այս նկատելով՝ մի օր սկսեց իւր
փոքրիկ թոռանը գրկին խաղաղնել ու երգել.

«Թա՛ն, թա՛ն, թթու թա՛ն,

Պետո՛ն ուտի՛ երթայ գութան:

Խաւիժ, խաւիժ, խաւաւիժ,

Պապն ուտի՛ ընկնի ոտից»:

Հարսը այս երգը լսելով՝ այնուհետեւ
խաւիժը պապին էր տալիս. իսկ թթու թանը
ինքն ու երեխան էին ուտում:

* *

Վարդապետը մտաւ եկեղեցին նոյն իսկ
ժամերգութեան վերջանալու ժամանակ: Ե-
րեսը դարձրեց դէպի ժողովուրդը եւ կամե-
ցաւ քարոզել. ժողովուրդը դուրս գնաց:

— «Օրհնեա՛լք եղերո՛ւք» չեմ ասում սի-
րելի ժողովուրդ, ձայն տուեց ետեւներից
շուարած վարդապետը. քա՛րոզ եմ տալիս
մոխ՛կ արէք:

Երբ ոչ ոք ականջ չդրեց, նա դարձաւ
դէպի սեղանը, տեսաւ որ քահանաներն է՛լ են
գնացել եւ ձայն տուեց՝

— Ծօ, այս անիծածները խօսք մէ՛կ
արած էին քարոզ չլսել:

Գիւղացին նոր էր վերադարձել Կ. Պոլսից: Նորա՛ն հարցրին.

— Կ. Պոլիս մե՞ծ գեղ է:

— Մե՛ծ, մե՛ծ, պատասխանեց նա. ծօ՛ւ, մեծ ասիր պրծա՛ր. մեր գեղը սաղ, ոտով գլխով օխտն անգամ՝ կը մտնի նրա փորն ու գուրս կը գայ:

* *

Տանուտէրը գիւղացիներին ասաց.

— Ո՛ւմ տղան որ մի սուտ կարենայ ասել իմ աղջիկս նրա՛ն կը տամ:

— Նա մի ձուկ բռնեցի՛ եփած էր, ասաց մէկը:

— Կարելի է, ասաց տանուտէրը:

— Ծովի վերայ մի նաւ երուեց, մօտի ձուկն էլ խորովուեցաւ, ասաց միւսը:

— Էդ էլ կարելի է, ասաց տանուտէրը:

— Երկնքից գամէշի՛ ձայն լսեցի, ասաց երրորդը:

— Էդ էլ կարելի է, պատասխանեց տանուտէրը:

— Պ. տանուտէր, ասաց փերձալէս գըղիբը. բա՛ս դու մտքումդ դրել ես, որ անպատճառ աղջիկդ ինձ տաս է՛լի. նա արգէն սիրահարուել է ինձ վերայ: Եթէ ու-

րիշի տաս՝ նա երգուել է, որ ջուրը կ'ընկնի՝ կը խեղտուի:

— Ի՛նչ սուտ սուտ բաներ ես խօսում, անպիտան գըղիբ, ասաց տանուտէրը բարկանալով, ո՛չ ես եմ մտքումս դրել, ո՛չ էլ աղջիկս է քեզ առնում:

— Եթէ սուտ է ասածս, ուրեմն, աղջիկդ ինձ պէտք է տաս, ասաց գըղիբը:

* *

— Կնքահայր, ասաց օանահայրը, խընդրում եմ՝ ինձ էլ սովորեցնես փունջ շինելը:

— Շատ հեշտ է, պատասխանեց կնքահայրը. վեր առ երկու բաժակ ռում, եռացրո՛ւ, կէս ձուի չափ նորաթ շաքար գցի՛ր մէջը, յետոյ մի լիմոն քամի՛ր վրան, քիչ սառցրո՛ւ եւ խմի՛ր:

— Օանահայրը տուն գնաց, կնոջն ասաց.

— Երկու բաժակ ռում բեր:

— Ռում չկայ, ասաց կինը:

— Է՛հ, արագ բեր:

Օղին բերեց:

— Նաքաթ շաքար բեր:

— Չկայ:

— Շաքար բեր:

—Ձկայ:

—Բաս ու՛ր բեր:

Շարապը բերեց:

—Մի լիմոն բեր:

—Լիմոն չկայ:

—Դէ՛ լիմոնի աղ բեր:

—Ձկայ:

—Բաս քաջախ բեր:

Քաջախը բերեց:

Երկու բաժակ օղին, երկու բաժակ շարապը, երկու բաժակ քաջախը խառնեց, եռացրեց, սառեցրեց ու խմեց:

Խառնուրդը սկսեց սաստիկ լուծել տալ եւ նա սկսեց անիծել կնքահօրը:

Նկաւ կնքահայրը եւ լսելով, թէ նա ինչպէս է բաղադրել իւր փունջը՝ ասաց.

—Այ օրհնած, իմ առածի եւ քո արածի մէջ միայն եփելն ու խմելն է ուղիւ. բոլոր նիւթերը փոխել ես:

*
*

Զուռնաչուն (փողահար) քահանայ էին ձեռնադրում: Զեռնադրութեան կարգը վերջանալուց յետոյ նա հարցրեց ձեռնադրող եպիսկոպոսին. «Արբաղան, պարապ ժամանակ իրաւունք ունի՞մ իմ զուռնէն փչելու»:

Գիւղացին ի կողքի տուեց հալուայ ծախողին, որ հալուայ տայ: Բայց ծախողը սաստիկ զբաղուած լինելով չտեսաւ, որ նա փողը արկղի մէջ ձգեց: Նրբ գիւղացին կրկին հալուան ուղեց, նա հարցրեց.

—Քանի՞ կողքիի ես ուզում:

—Ե կողքիի, փողը տուել եմ արդէն, պատասխանեց գիւղացին:

—Հեռացի՛ր, ստախօ՛ս, ասաց ծախողը, ուզում ես անփող հալուայ ուտել:

Գիւղացին երկար սպասելուց յետոյ դընաց մերձակայ հալուայ-ծախողի կողակը եւ հալուայ ուղեց:

—Քանի՞ կողքիի, հարցրեց ծախողը:

—Ե կողքիի, պատասխանեց նա, փողն արդէն տուել եմ:

Գիւղացին հալուան ստացաւ, սկսեց ուտել ու ասել.

—Աստուած, դու հախ նահախին չըտա՞ր. էն հելուածույն առ իմ իմ իմ կողքիս, տո՛ւր էս հելուածուն:

*
*

Ժլատը վառած մամը ձեռքին՝ որդու հետ մտան մառանը: Յանկարծ մամը հանգաւ: Ժլատը ջանկանալով, որ որդին մութ

տեղում կախ արած տանձերից չգողանա՞
առաջ.

— Կարապետ, մի շնչով քանի՞նք կարող
ես համարել:

— 20-ը, առաջ որդին:

— Համարիր տեսնեմ:

Եւ որդին սկսեց համարել:

Այդ միջոցին հայրը հրահանք խփեց
կայծաքարին, կրակ արեց, մոմը վառեց ու
առաջ.

— Ե՛, է, բաւական է, Կարապետ, ար-
դէն յայտնի եղաւ, որ դու կախած տան-
ձերին ձեռք չառիր:

*
* *

Երկու կաճեացի *) միրգ գնեցին. մէկը՝
արմաւ, միւսը կարմիր պղպեղ:

Ուտելով գնումէին, Պղպեղ ուտողը
աչքերը սրբելով հարցնում էր ընկերոջը.

— Աղպէր Նեթոյ, քեոյ կերածն ինչիս է:

— Ա՛, իմ կերածն կլոր մոր ի, առաջ
միւսը. քեանց Ասպած քեաղցր ի. քեոն ի՞նչիս
ի:

*) Կաճեալը Մոկս գաւառումն է: Նորա բնա-
կիչները շատ պարզամիտ էին:

— Ա՛խ, իմ կերածն շատ խորտ ի.
քեանց իմ խօր խարս կարմիր ի. ամա խո-
կիտ մարմինս կը քեակի՛, կծու ի. ամա փա-
րայ եմ տուե, նաչար եմ կ'ուտեմ:

*
* *

Ահարոն վարդապետը կարգալով Չամ-
չեանի «Հայոց պատմութիւնը», ցանկացաւ
տեսնել նորա հեղինակին: Գնաց Կ. Պոլիս.
հարցրեց Հայր Միքայէլ Չամչեանի տունը եւ
երբ գտաւ՝ ծառային առաջ.

— Հայր Միքայէլին ասա՛, թող գայ գը-
րան մօտ. եջմիւրածնայ հուրիակը փափա-
քում է զինքը տեսնել:

«Հայոց պատմութեան» հեղինակը մի
քանի անգամ ներս հրաւրեց Ահարոն վար-
դապետին. բայց նա յանձն չառաւ մօտել:
Երբ ինքը ճարահատուած գուրս գնաց՝ Ա-
հարոն վարդապետը հարցրեց.

— Միքայէլ վարդապետ Չամչեան գո՞ւ
ես:

— Այո՛, ես եմ պատասխանեց Միքայէլ
վարդապետը:

— «Անունը լսիր՝ բայց երեսը մի տես-
նիր», առաջ Ահարոն վարդապետը: Ծօ, Հայու
վրայ այդքան զուր խօսել պապի՞ց սովորեցիր:

Ասաց ու վերադարձաւ:

* * *

Մտախաբարդ երեկոյին գիւղի խարխուլ եկեղեցում գուռնոցէքի հանդէս էին կատարում: Քահանաներից մէկը եկեղեցին էր մտել. միւսը գրան մօտ նստած՝ ողբաձայն ասում էր.

— Բայց մեզ, տէր, բայց մեզ...

Յանկարծ եկեղեցու առաստաղից մի քար վայր ընկաւ: Տէր-հայրը լեզապատառ դուռը բաց արեց ու գուռս փախաւ ասելով.

— Փախէ՛ք, փախէ՛ք, արքայութիւնը փաւլ եկաւ, որ անարժան մարդ չմտնի մէջը:

* * *

Մտաքործը պատահամբ իւր մատը կըտրեց: Արիւնը կաթկաթում էր: Հարցրին.

— Եդ ի՞նչ արիւր:

Նա ցաւից շփոթուած, խօսք չգտնելով պատասխանեց.

— Օ՛ֆ, իք արի, իք էլաւ, խփեցի իքի վրայ, արուն իք էլաւ:

* * *

Կ. Պոլսեցի մի հայ ամիրայ գնաց Եջմիածին: Բոլոր միաբաններին մի մի պար-

գեւ տուեց, բայց մոռացաւ Ահարոն վարդապետին էլ մի բան տալ: Ահարոն վարդապետը վշտացած՝ մի կողմ քաշեց նորան եւ ասաց.

— Մի խոստովանութիւն պէտք է ասեմ քեզ. բայց երգուի՛ր որ ո՛չ ոքի չես տալ:

Նրբ ամիրան երգուեցաւ, Ահարոն վարդապետը սկսեց նորա ականջին սարսափելի հայհոյանքներ թափել: Ամիրան կատաղեցաւ բարկութիւնից. սկսեց ձեռքերը շփելով շուտ շուտ ճեմել գաւթումը: Մթնեցաւ է՛լ. բայց նա չ'էր ուզում իւր ննջարանը մտնել:

Ներսէս կաթողիկոսը իմանալով, որ ամիրան սրտնեղութիւն ունի, կանչեց իւր մօտ եւ պատճառը հարցրեց:

— Իշտայ, Վեհափառ Տէ՛ր, ասաց ամիրան, անանկ բարկացեր եմ, որ բարկութիւնիցս խելքս չլորմիշ կ'անեմ կոր: Ահարոն վարդապետն ինձ երգմնեցուց ու խոստովանեց. բայց իշտայ, ո՛չ խոստովանանք էր, ո՛չ էլ... Ե՛հ, իշտայ, չեմ կարող պատմել:

* * *

Գիւղից գիշերով գնաց անտառը՝ փայտ կտրելու: Բայց սխալմամբ կացնի փո-

խանակ շերեփը վեր առաւ: Նրբ մթնումը շերեփը ծառին խփեց, խփոյն կոտրուեցաւ ու կորաւ. խփ կոթը մնաց ձեռքին:

Արծելով թէ կացինը կոթաճան եղաւ, նա սկսեց որոնել եւ երկար որոնելուց յետոյ ասաց ինքն իրան.

— Ո՛վ սուրբ Մինաս, իմ կացինը գտի, դու ձիուն մի կօթ գարի կը տամ:

* *

Քրդերը մի կաճեացի քաճանայի գլուխը կտրեցին տարան: Նրէցիկներ լալով ասում էր.

— Տէր խոկեւորին մի բան պակաս իջեմ կինայ, ինչ ի:

Դիւղացիք ժողովուեցան քաճանայի զխալի մօտ, շատ մտածեցին ու քննեցին: Վերջապէս մէկն ասաց.

— Խոկեւոր խօր մօրունն ի պակաս, մօրունը:

Միւսը թէ.

— Տխայ վալայ, մօրունի մօտի բերանն էլ ի պակաս:

Նրորդը.

— Տխայ, աչքերն էլ ի պակաս:

Խփ երէցիկներ սկսեց ողբալ.

— Ա՛խ, խոկեւոր տիրոջ կոթը թախըմն ի պակաս:

* *

Հարցաքննութեան դաճիճում մի օտար ուսուցիչ հարցրեց.

— Նթէ քեզ ասեն՝ Աստուած չկայ, դու ի՞նչ պատասխան կը տաս:

— Ե՛հ, պարօն, պատասխանեց աշակերտը, «Դաւիթ մարգարէն արգէն պատասխան է տուել ասելով... «Ասաց անդգամն ի սրտի իւրում թէ ոչ գոյ Աստուած»:

* *

Պողը մտաւ այգին, մի կողով խաղող քաղեց եւ մինչ ուզում էր շալակել՝ տեսաւ որ տէրը ետեւից գալիս է. չոգեց ու սկսեց բազկատարած բարձր ձայնով աղօթել.

— Աստուած ողորմի այս այգի տնկողի հոգո՛ն, Աստուած այս այգին նորա զաւակներին որդւոց որդի ժառանգել տայ, որ այսպէս լաւ ջրեն, պահպանեն, որ կարօտելոց էլ բաժին գնալով՝ վրան ոչինչ չերեւի, ոչինչ չպակասի:

Աստուած, որքան ես պակասեցնում եմ, դու մէկին հաղարապատիկ աւելացրո՛ւ:

Տէրը մօտեցաւ, վեր քաշեց կողովը՝
դրեց գոլի ուսին եւ ասաց.

— Տա՛ր, անուշ արա՛ւ. միայն ուրիշ ան-
գամ փոքր կողով բեր՛, որ կարողանաս մե-
նակ շալակել:

* *

Եջմիածնի մառանապետը շարունակ իւր
էր գողանում: Մախսարար եպիսկոպոսը շատ
հետամուտ եղաւ, չկարողացաւ յանցանքի
ժամանակ գոլին բռնել: Սա Ահարոն վար-
դապետի խորհրդով գնաց նորա հետ մա-
ռանի դրան մօտ կանգնեց: Երբ մառանա-
պետը դուրս եկաւ մառանից, Ահարոն վար-
դապետը՝ սկսեց զանազան հարցմունքներ
անել նորան. թէ՛ «նրտեղացի էք, բանի՞ տա-
րեկան էք...»: Գրեթէ կէս ժամ արեւի
տակը կանգնած էին: Մառանապետի գլը-
խարկի տակից գողացած իւզն սկսեց հա-
լուելով իջնել ծոցը, եւ ոտքերից գետնին էր
կաթկաթում:

— Մառանապետ, շատ քրտնեցար, ա-
սաց ծախսարար եպիսկոպոսը:

— Ե՛հ, սրբազան, պատասխանեց նա,
Ահարոն վարդապետին պատասխանելը մար-
դու ոսկորներն էլ կը հալեցնէ:

Իսկ Ահարոն վարդապետն սկսեց երգել.

— «Որպէս զի՛ց՝ զի իջանէ ի մօրուացն
մառանապետի ի գրապանակս զգետտուց նո-
րա»:

* *

Գիւղացին մի ամանով մեղր տարաւ
քաղաք ծախելու, եւ կանչում էր. «քաղցր
մեղր, քաղցր մեղր, պատուական մեղր
առէ՛ք»:

Ամէն լսող փորձի համար մի անգամ
մատով ճաշակեց:

Փոքր ժամանակից յետոյ գիւղացին նկա-
տեց, որ էլ ոչինչ չէ մնացել. սկսեց ինքն էլ
մատով ամանը սրբել, ուտել եւ ասել.

— Իրաւ, որ ես սուտ ասած չեմ, շատ
պատուական մեղր էր:

* *

Կ. պոլսեցի Յարութիւն ամիրայ Պեղ-
ճեանը մի կիւրակէ օր եկեղեցուց տուն էր
վերադառնում: Ճանապարհին մի աղքատ տե-
սաւ, ողջունեց եւ իւր տունը հրաւիրեց-
բայց ինքն առաջ անցնելով՝ տուն հասաւ եւ
ծառաներին պատուիրեց, որ եկողին տուն
բերեն:

Երբ ծերունի աղքատը սենեակը մտաւ, Պեղճեանը ոտքի կանգնելով համբուրեց նորա ձեռքը եւ իւր կողքին նստեցնելով՝ ասաց.

— Հայր, կը յիշե՞ս այն երկու ապտակները, որ երեսներուս զարկիր:

Ծերունին, որ եէնի-գաբուցի մի նաւալար էր եղած, շուտիցեւ եւ հաղիւ կառուցաւ այսպէս պատասխանել.

— Ի՞նչ կ'ըսես, ամիրայ, այդ ի՞նչ զըրպարտութիւն է որ կ'ընես իմ վրայ:

— Այ՛, զրպարտութեւն չէ բռածս, կրրկնեց Պեղճեանը Տղայութեան ձկնորսութեան ետեւէ ըլլալով՝ ամէն կիւրակէ քու նաւգիւղացի ձուկ որսալու: Անգամ մ'ալ երկուշաբթի օր էր. շուկայ երթալ չուզեցի եւ նաւգիւղացի օր ձուկ որսամ: Գու զիտ տեսնելով՝ բռնեցիր ականջէս եւ երեսներս ապտակելով հրամայեցիր, որ շուկայ երթամ, վասն զի գործի օր էր:

Գու այդ խրատդ այնքան ազդեց ինձ, որ այն օրէն իմ գործիս պարապելու եւ աշակուրջ ըլլալու ըսկսայ:

Ուստի այժմ այս վիճակիս մէջ պարտական եմ երախտիքդ ճանչնալու եւ բեղ շնորհակալ ըլլալու:

Այս ասելով՝ հանեց 500 դուրուշ, տուեց ծերունուն եւ պատուիրեց, որ ամէն ամիս գնայ՝ նոյն գումարն ստանայ մինչեւ յմահ:

*
* *

Փիշերով գողը մտաւ ներկարարի տունը: Իսկ նա բռնեց նորան, թաթախեց ներկի կարասի մէջ ու բաց թողեց:

*
* *

Երկու քոյր՝ այցելելով իրանց հօրեղբոր կնոջը, որ նոր էր գուրս եկել առաջին ծնընդականութիւնից՝ հարցատիրաբար հարցրին.

— Հարսի, երեխայ բերելը ո՞նց ա. հօ գժուար չի:

— Աման, Եղսան ջան, պատասխանեց հարսը. ես տեսայ, գուր ո՞չ տեսնէր:

*
* *

Հարսին ասացին թէ այգեկութից յետոյ՝ երբ գինին եռալուց զազրի, պէտք է իրան պտակեն: Իսկ հարսը ինքն իրան ասաց անգոհ.

«Թօ, թօ, թօ.

Ե՞րբ հասուննայ,

Ե՞րբ քաղուհայ,

Ե՞րբ քամուհայ,

Ե՞րբ գինւանայ,

Ե՞րբ խմւանայ,

Ե՞րբ տանանայ,

Ե՞րբ տինիհի...

Թօ՛, Թօ՛, Թօ՛»:

*
* *

Ստարականը մի խանութում զսնազան տնային բաներ գնելով՝ յետ էր գարսում գնած ապրանքները եւ ասում:

— Էս՝ մէկը՝ բարեկամիս՝ էս մէկը՝ Թըշնամուն:

— Պարո՛ն, հարցրեց վաճառականը, ինչո՞ւ էք այդպէս ասում: Ի՞նչ է ձեր բարեկամը եւ ի՞նչ՝ Թշնամին:

— Բարեկամը կինս է, պատասխանեց նա, որ միշտ ուրախութեամբ ինձ մտաբերելով՝ ասում է ինքն իրան. «Ամուսինս բարով կը գայ եւ ինձ համար այս ու այն ընծան կը բերէ»: Իսկ Թշնամին մայրս է որ անգագար տխրութեամբ յիշելով ինձ՝ մտածում է, թէ «Տէր Աստուած, արդեօք աւազակները կողոպտեցին որդուս, արդեօք ջրո՞ւմը խեղտուեցաւ, արդեօք ճանապարհի՞ն մեռաւ...»:

Կնքահայրը սանահօր հետ քաղաք գընացին՝ իւր որդու համար մի հարսնացու ճարելու եւ ճանապարհին պատուիրեց նորան, որ երբ խօսէ իւր հարստութեան վերայ՝ նա մէկը երկուսով ցոյց տայ:

Աղջկայ հայրը հարցրեց.

— Այգի ունի՞ս:

— Այո՛, մի այգի ունիմ: պատասխանեց տղայի հայրը:

— Այ՛, երկուսն ունի, մինը նոր է տընկել, ասաց սանահայրը:

— Ձի ունի՞ս:

— Այո՛, մի լաւ ձի ունիմ:

— Ո՛չ, երկուսն ունի, մէկը դեռ փոքր է, այն չէ հաշւում:

— Որդիդ քանի՞ տարեկան է, ի՞նչպէս է:

— 25 տարեկան մի քաջ աղայ է:

— Ո՛չ, վրաբերեց սանահայրը. 50 տարեկան է, մի աչքն էլ կոյր է:

*
* *

Փողոցումը մի մարդու անպատիւ արին: Բայց նա մինչեւ տուն հասնելը ձայն չհանեց: Իսկ տուն մտնելիս յանկարծ բարձր ձայնով կանչեց.

—Ախմախ էլ ես ու քու հէրն էլ անի-
ծած:

* * *

Գիւղացի քահանան մտաւ նոր բա-
ցուած դպրոցը եւ հարցրեց ուսուցչին.

—Պ. վարժապետ, արե՞ն է շրջում, թէ՛
երկիրը:

—Տէր հայր, ասաց ուսուցիչը, մեր տէր
Կիրակոսն ասում էր թէ. «Մինչեւ Յեսու
զօրապետը արեւն էր շրջում, նա կանգնե-
ցրեց արեւն ու սկսեց երկիրը շրջել». իսկ ես
այդպէս չեմ հաւատում. տեսնում եմ, որ
արեւն է շրջում:

—Ապրես, սրգի, դու մոլորեալ չես այժ-
մեան ուսուցիչների պէս, ասաց քահանան
ու հեռացաւ:

* * *

Կաթողիկոսը հարցրեց մի երեխայի.

—Հայրդ ի՞նչ է անում:

—Ձեզ է օրհնում, Վեհափառ Տէր,
պատասխանեց նա:

—Տէր տէր, վարդապետ, եպիսկոպոս ես
եմ օրհնում, ասաց Վեհափառը, քո հայրն
ի՞նչպէս է օրհնում ինձ:

—Իմ հայրը Աստծուն էլ է օրհնում,
պատասխանեց երեխան:

* * *

Խոյեցիկն շունը տանից դուրս էր անում:

—Այ շուն, վի՛րն եմ ասելի, գո՛ւս ել,
այ շուն. ելնե՛մ շո՛ւն: Հա՛, էլայ, շո՛ւն:

* * *

Վարդապետը իջեւանել էր մի գիւղում:
Նորան տեսութիւն գնացին գիւղի տանու-
տէրը եւ մի քանի գիւղացիք, որոնք մի խող
էին որսացել ու տարել էին վարդապետին
ընծայելու:

—Ի՞նչպէս էք որսում խողը, հարցրեց
վարդապետը:

—Հայր սո՛րբ, ասաց ընծայողը, ասենք՝
գզիրը ըլի մեր Ալաբաշ շունը, մելիրը ըլի
խողը, ես ըլիմ որսորդը: Նրբ ես թուանքս
գցում եմ գիւղում է մելիրին. էն սահա-
թին ձէն եմ տալիս «Ալաբաշ», գզիրը հաջե-
լով վազում է ու մելիքի ոտից բռնում: Իժում
ես վազում եմ ու մորթում:

Վարդապետը լսելով այս անբաղաքա-
վարի խօսակցութիւնը՝ ասաց.

—Ի՞նչ տխմար մարդիկ էք ելել, տո՛՛՛՛՛...

Գիւղացիքը կարծելով թէ «տխմար» նշանակում է «քաջ», ասացին.

— Հայր սուրբ, մենք տխմարները մեր պապերն են եղած:

* *

Ոստիկանը ասում էր աղքատին.

— Այ մարդ, ինչո՞ւ ես ապականում փողոցները. չե՞ս կարող մտնել հասարակաց համար պատրաստած տեղերը:

— Աղայ, աղքատ եմ, պատասխանեց նա:

* *

Մէկ տօն օր եկեղեցում խռնուած էր մեծ բազմութիւն: Յանկարծ այդ ամբոխի միջից մէկը բոլոր ուժով առաջը պատահողներին այս այն կողմը հրելով աշխատում էր դուրս փախչել:

— Գժուեցա՛ւ ինչ է, ձայն տուեց ճըխըլուղներից մէկը:

— Զը գժուեցայ, խեղտուեցայ, պատասխանեց դուրս պրծնողը:

* *

Տփխիտի քաղաքային վարչութիւնը կարգադրել էր, որ քաղաքի իւրաքանչիւր թաղից մի մարդ նշանակուի՝ տնային հարկերը

ժողովելու: Պառաւ Նովանէին էլ ի՛ր թաղումը նշանակեցին:

— Պարոն Նովանէ, ասաց մի օր մի պաշտօնական անձն, բիզ շատ գովումի՛ն, վուր դուն շատ զոչաղ իս. ու էտու համա էլ բիզ նշանակեցին ձիր թաղի խարջ-մօգանոյ:

— Հա՛, դուրդ իք հրամսում, պատասխանեց Նովանէն, իս ազուի զաւոգ ունիմ. ինչքան գուղիս՝ տար. միայն թէ առանց նիսիւ:

— Ա՛խ, պարոն Նովանէ, տխրո՛ւ էգ ի՛նչ իս ասում, իս ասումիմ. վո՛ր խարջ պիտի մօգ անիս:

— Հետի ագուռ տամ, վուր քո՛ւ հաւնած. ասիս՝ հաճա՛ր բարաքեալեայ Նովանէ:

— Տօ՛, խարջ պիտի մօգ անիս՝ խարջ:

— Ա՛յ բիզ բա՛ն՝ թէ իմ ագռեմէն լաւը գլթնիս՝ ու էժան առնիս, շլինքս կու կտրիմ:

— Ե՛հէնց էլ խուլ մարդ կ'ուլի՞. այ մարդ, խարջ պիտի մօգ անիս. հասկացա՛ր թէ՛ չէ:

— Զունքի էգբան խնգրում իս, վուր էժան տամ քու աղիզ խաթիր համա՛ զաւոգեմէն քու շինութիւնը բերելու խարջն էլ թո՛ղ ինձ վրայ ըլի. կստումէն էլ էժան՝ ինձ ձեռք չի տայ:

— Օխնա՛ճ, դէ ասա՛ իստակ քառ իմ՝
էլի՛ր, ի՞նչ էլաւ քիզ։

Այս ասելով խօսակիցը հեռացաւ. իսկ
Պառաւ Եովանէն ասաց ինքն իրան.

— Ողուրմէի՛ն իսկի չիմացաւ, վուր իմ՝
սարսի խաթրու խուլ գառայ, ու ի՛նչո՛ւր
ասում էր, միթա՛մ թէ վու՛նչինչ չհասկա-
ցայ, Վո՛ւնչ չէ. գիտի լա՛ւ հասկացայ, ամա՛
սարսիէս չէր, լա՛ւ պրծայ։ Ապրի՛՛ Եովանէն-
վո՛ւնչ է, վո՛ւնչ։

* *

Մառանքը յայտնեցին ժլատ տիրոջը, որ
իրանց շապիկները հնաշած են եւ նոր շա-
պիկ է հարկաւոր։ Ժլատը իսկոյն կանչեց իւր
տնտեսին եւ հրամայեց որ գնայ գաշտը՝
կանեփ ցանել տայ։

— Մառանքն սկսեցին ծիծաղել։

— Վա՛յ, անիրաւներ, ասաց ժլատը.
ի՛նչպէ՛ս ուրախանում են, որ նոր շապիկ
պէտք է ունենան։

* *

Հայոց լեզուի ուսուցիչը աշակերտու-
հիններին նախադասութիւններ էր լուծել տա-

լիս։ Կարգը հասաւ մի հոյլ աշակերտուհու։
Սա հասնելով այնտեղը, ուր պէտք է ասէր
«յրացնող», սխալմամբ ուղեց ասել «յատկա-
ցընող»։ Բայց այդ էլ չգիտենալով ասաց.
«փափկացնող»։

* *

Կ. Պոլսի Գուժգարուի եկեղեցին այրուե-
լուց յետոյ՝ գեռ շինութեան հրովարտակը
գուրս չէր եկած, երբ մէկ օր Յարութիւն
Պեղճեանը բաղանիք գնաց եւ նոյն միջոցին
Սուլթան Մահմուտից կանչուեցաւ։

Պեղճեանը անմիջապէս գնաց արքու-
նիքը. բայց սուլթանը գիտենալով, որ բա-
ղանիք էր գնացած՝ հարցրեց.

— Հանգի՛ստ էիր բաղանիքում։

— Դեռ եւս այրուած եկեղեցին աւե-
րուած լինելով, պատասխանեց Պեղճեանը,
նոյն օրը (կիւրակէ) ցուրտ եւ խոնաւ օդի
մէջ գլխաբաց աղօթելիս մրսեցայ եւ շտա-
պեցի բաղանիք գնալ։

Սուլթանը իմանալով Պեղճեանի միտքը՝
հրամայեց, որ նոյն եկեղեցին առաջուանից
աւելի չքնաղ կերպով շինուի։

* *

Մի մարդ սովորութիւն էր արել խօ-
սակցութեան ժամանակ իսկոյն երկու երեք

խօսքից յետոյ ասել «Ազիս արզ անեմ»: Սա մէկին նամակ գրեց, որի մէջ վերոյիշեալ խօսքերով լցնելուց յետոյ՝ նամակի հասցէն էլ սկսեց այսպէս գրել՝ «Այս գիրը. ազիս արզ անեմ հասնի, ազիս արզ անեմ Պ. Գէորգ Մարտիրոսեանցին ազիս արզ անեմ Երեւան քաղաքում»:

* *

Ա. Պոլսից գրում են «Փորձին». «Ստոյ Մկրտիչ կաթողիկոս մայրաքաղաքս հասած է: Հակաթուռութեան խնդիրն քիչ օրէն երեւան կ'ենէ»:

Ազխամարայ կաթողիկոսն աթոռի խընդիր չյարուցանէր, «վասն զի նստած չունի, որ աթոռի վերայ խորհի. ամէն օր կ'ուտէ, կը պառկի եւ կը քնանայ»:

* *

«Կարոյ» անունով մի տարաւնդի մի քանի տարի Տփլիսում մշակութիւն անելով՝ սովորել էր մի երկու ռուսերէն խօսք, այն էլ հակառակ նշանակութեամբ: Նորա գիտեցածով «ЕСТЬ» նշանակում էր չկայ. «НѢТЪ» — կայ:

Մի անգամ մի քանի զինուոր Երեւանից Աղեքսանդրոպոլ գնալիս մօտան Աբաբան՝ հաց գնելու:

—У васъ хлѣбъ есть?, հարցրեց գիւղացիներին մի զինուոր:

Նորա խնդրեցին Կարոյին, որ պատասխանէ: Իսկ նա հացը ձեռքին բռնած ասաց.

—Վալլահ, սալգաթ աղբէր, НѢТО, այ НѢТО:

—Что стоитъ фунтъ?

—Վալլահ, սալգաթ աղբէր, НѢТО, НѢТО:

Զինուորները բարկանալով այդ յիմար պատասխանի վերայ յարձակուեցան ու մի լաւ ծեծեցին Կարոյին: Իսկ նա ծեծուելիս էլ ազազակում էր «վալլահ, բիլլահ, НѢТО»:

Գիւղացիք ճարահատեալ զիմեցին նորա սանահայր Ակոյին: Սա բազմաւորապէս ասաց «ЕСТО» եւ կատարեց նոցա պահանջը: Երբ զինուորները մի քիչ հեռացան՝ Կարոն դարձաւ Ակոյին ասաց.

—Վալլահ, սանէր Ակոյ, քու է «фунтъ» թէ չլնէր՝ զիմ նեֆոն զիս կը սպանէր:

* *

Տփլիսի մի օրիորդտիւան գպրոցի դասատուներից մէկը ներս մտաւ հոգաբարձուն եւ մի աշակերտուհու առաջարկեց գրել 125376:

—Պարոն, ասաց թուարանութեան ուսուցիչը՝ այգպիսի հարց չէ կարելի առա-

ջարկել, որովհետեւ սուք Գրուբէի մետոգով են սովորում: Իսկ ձեր ասածը Հին ժամանակներին է վերաբերում:

— ԲՆՆՆ, աչքդ լուս, ասաց հոգաբարձուն իւր մօտի կանգնողին, էտ էր մնացի էլի՝ միթամ Գրուբէն էլ էստի բան ունենայ, իսկի խելքումս չէ նստում: ո՞վ գիտէ, ՎՆՆՆ կալբասնիկի անումն է տալիս, թէ ի՞նչ է վունչիչ չիմանամ:

* *

Հիւանդը տաքութեան ցնորքների մէջ անգադար կրկնում էր.

— Դեղի, էծերը դ՛ուս արա, տախտի տակը մտան, էծերն էկան, էծերը գնացին...:

— Յիսուսի՛ն ու Քրիստոսի՛ն, ասում էր մայրը, խաչակնքելով Հիւանդին, էծերը միասի, որդի ջան, էծեր չկան էստեղ, քու չա՛րը տանեմ:

Երբ որդին առողջացաւ, գնաց փողոց եւ յիրաւի երկու այծ գնեց ու ծանօթ երեխայի ձեռքով տուն ուղարկեց: Բայց այդ միջոցին մայրը տանը չէր. ուստի երեխան այծերը յանձնեց նորա գրացուն:

Որդին տուն գնաց եւ հարցրեց մօրը.
— Էծէրն ո՞ւր է:

— ՎՆՆՆ, որդի ջան, էլի էծերը՝ ցաւելով ասաց մայրը՝ կարծելով թէ որդին գարձեալ ստացել է առաջուայ տկարութիւնը:

— ՎՆՆՆ, ո՞նց թէ էլի «էծերը», կրկնեց որդին, ախրր էսօր ես երկու էծ քուայ, տուն զրգեցի, ո՞ւր ա:

— Ո՛րդի ջան, էծեր մի՛ ասի, էծերը ասում էր մայրը, էս ի՞նչ բան պատահեց մեզ, Աստոծ ջան:

— Դեղի, բաս էծեր չկայ, ես վեց մանէթ փող տուի, ո՞ւր են էն անդէրները:

— Ա՛խ, Աստոծ, էս ի՞նչ ցաւի մէջ գցեցիր մեզ, ասում էր մայրը յուսահատութեամբ:

— Էծերը, թէ չէ՝ էս տունը զիփ մետի տակն ու վրայ կ'անեմ, ասաց որդին զայրացած:

Այդ միջոցին գրացին տուն բերեց երկու այծերը:

* *

Մէկ օր, երբ Պէդճեանը աղօթում էր Կ. Պոլսի մայր եկեղեցում, Սուլթան Մահ-

մուգը կանչեց նորան իւր մօտ: Մի փոքր ուշանալուց յետոյ՝ Պեղճեանը մտաւ արքունական պալատը եւ սուլթանը հարցրեց.

— Ո՞ր էիր, խոճայ Յարութիւն:

— Ա՛յն եկեղեցումն էի, որի շինութեան հրամանը ստացանք Ձեր Վեհափառութիւնից, պատասխանեց Պեղճեանը, եւ այնտեղ աղօթում էի Ձեր անգին կեանքի համար:

— Եկեղեցումը մնաց եւ այնտեղ մեռնե՞ս, ասաց սուլթանը:

— Տէ՛ր իմ, ասաց Պեղճեանը գլուխ տալով՝ տո՛ւր այնտեղ մնալուս հրովարտակը՝ ինչպէս որ հրամայեցիր:

Սուլթանը ծիծաղեց եւ նորա հնարագէտ պատասխանի վերայ զարմանալով՝ հրամայեց, որ հրովարտակ տան Պեղճեանին, որ մեռած ժամանակը Գումգափուի մէջ թաղուի:

Եւ այնտեղ նա թաղուեցաւ:

* *

Մի մարդ երկու մատները մծտեցնելով միւսի աչքերին՝ ասաց.

— Կ'ուզե՞ս մատներս աչքդ կոխեմ:

— Ի՛նչ եմ անում, պատասխանեց միւսը:

Արարանցուն մի մեծ բաժակ օղի տուին: Նա խմեց ու գլուխը շարժելով ասաց.

— Աստուած սիրէք, ճշմարիտն ասէք. սրա խմելը թագաւորից դուրած շորափ է՝ թէ ամէն մարդ իր կամքովն է խմում:

* *

Վարդապետը սաստիկ հայհոյեց իւր ծառային:

Ծառան ասաց.

— Հայր սուրբ, ես քեզ չեմ հայհոյեր. անիծած լինի այն այծն որ Նոյ նահապետըն վեր առաւ տապանի մէջ, որոյ թռուների մազից քեզ փխլոն կարեցին:

* *

Հայր ու որդի ճաշում էին: Քանի հայրը բրդում էր, որդին շուտ շուտ ուտում էր: Հայրը տեսնելով, որ կերակուրը վերջացաւ ու ինքը ոչինչ չկարողացաւ ուտել՝ դանակը կոխեց որդու փորն ու ասաց.

— Ա՛նիծած լաւոտ, ո՛չ կը բրդես, ո՛չ կը խառնես, շուտ շուտ կը կլթե՞ս:

* *

Գութանի փայտերից մէկը կոչւում է «էշ», որ եթէ մի քիչ թաց է լինում, կաւով

ծեփումեն ու գնում արելի տակը, որ չորանայ ու չճղքուի:

Ակեսրայրը հրամայեց իւր քաղաքացի հարսին, որ էշը բոլորովին կաւով ծեփէ: Նա էլ մոտը գտնւի, էշը ոտքից մինչեւ գլուխ կաւով ծեփեց եւ «չո՛ւ, չո՛ւ» անելով՝ դուրս տարաւ:

Ակեսրայրը տեսնելով բացագանչեց.

— Աստուած իմ՝ դուշման գեղացուն քաղաքի հարս չտայ, որ իրար լիզուն չիմանան:

* *

— Պապի, ասաց թուը, երբ դու բարով մեռնես, քեզ սրտեղ թաղենք:

— Ե՛հ, սրդի, պատասխանեց պապը, ես կը կտակեմ, որ ինձ քեզնից երկու կանգուն հեռու թաղեն:

* *

Մի քամոտ երեկոյ մէկը պատահելով թարուահ բաղդատարին՝ ասաց.

— Բարի իրիգո՛ւն:

Իսկ Բաղդատարը, որ փոշուց աչքերը չէր կարողանում բաց անել, ասաց.

— Այ գլխի՜դ տուած էսպէս բարի իրիգունը. աչքերս քոռացաւ:

* *

Տփխիսում մէկը 5 կոպէկի հարիսայ գնեց. բայց ուտելու ժամանակը միջից մի շորի կտոր դուրս եկաւ, որի համար եւ՛ վերագարձաւ ծախողի մօտ:

— Տօ՛, զնւրումնաղ, պատասխանեց նա, տուածդ մի շայի էր. բառ ուղում էիր, որ զառ ու զարբա՞ր դուրս գար:

* *

Շիրակ գաւառի «Մեծ Պարնի» գիւղական ուսումնարանի պատից կախուած է հետեւեալ գրութիւնը.

«Հրաման է դուրս գնար, շուտով ետ գառնալ»:

Միւս երեսում.

«Մարդ կայ, մի գնար. ծեծ կայ չաւաչար»:

«Վարժապետ Աղէքսանդր Միրզոյեանց Ղզլլոյցի»:

Միւս պատից կախուած է հետեւեալ գատացուցակը՝

«Հ. լեզու, ա. լեզու, կրօնատու-
թիւն, թուաբանութիւն, վայելչագրութիւն,
երգեցողութիւն եւ յետ երեկոյեան ժա-
մերգութեան պարտ է աշակերտացս հաւա-
քեացուք դպրոցս կատարելով զեկեացէ»:

Երրորդ պատից կախուած է այս կանո-
նագրութիւնը:

«Վերլուծութիւն»

Պատուէր եկաւորաց ուսումնարանս
Մեծ Պարնի պ. պ. հայոց:

Ա. Առանց ինչ պատճառի (բացի ազ-
գասէր պարոններուց) արգելք է տալում գալ
ուսումնարանս:

Բ. Գալող որ եւ իցէ անձինքները հար-
կաւ պատրաստի ունենալ այսինքն ձեռքը
կոր, վեր առած գլխարկը եւ մերկանած իւր
ցրտապահ վերարկուներից, այսինքն եա-
փունջիներ, պալիտօներ եւ եթէ սոցա նման
այլ ինչ բաները:

Գ. Չունի իրաւունք առանց ուսուցչի
հրամանին գնալ դէպի աշակերտներս:

Դ. Եւ ով որ կանոններուցս բացակայ
գտնուի իւրաքանչիւր հարկաւ վճարելոց է
1 մանէթ տուգանք օգուտ եւ ի դատարա-

րակութիւն նոյն հոգաբարձութեան պ. պ.
հայ ծխ. դպրոցի Մեծ Պարնի:

Աւսուցիչ Ա. Միրզոյեանց:

Заповедь приходству въ школъ.

1. Безъ чиній ни пускаеть лѣзить
въ школъ.

2. Приходящимъ кто ни буть людѣй
быть ли имѣлъ готова (то есть) руками
подъ внизу, снимать шляпкой и бурки
политоній или таковія вещей.

3. Ни можетъ безъ приказани учи-
телю едятъ на ученика.

4. Котори кто сѣя положенія или взыс-
канія далѣчить, онъ долженъ заплатитъ
1-го рубля прибыть въ училищу тоже
онъ смотрительству.

перевадилъ А. Мирзоянцъ.

* *

Ժխտը միշտ հացը պանրին քսելով էր
ուտում: Նորա մահից յետոյ որդին հարցրեց
մօրը.

— Մայրիկ, էս ինչ պանիր է՝ պատից
բաշ արած:

— Հօրդ պանիրն է, զո՛ւրպան պատառ-
խանեց մայրը:

— Հայ, խորը գնայ, էսպէս հէրը, ասաց որդին, էնքան ամուր է քսել, որ պանրի կողքը մաշուել է. չէ՞ր կրցել տոպրակի մէջ գնէր ու հացը տոպրակին քսելով ուտէր:

*
* *

Մի գիւղում կար մի շատ գեղեցիկ աղջիկ, որ վճռել էր ամուսնանալ նորան, ով իւր հարցերին ճիշտ կը պատասխանէ: Ուստի շատ երիտասարդներ չկարողացան նորան իրանց կին առնել: Վերջապէս մի անգամ էլ մի երիտասարդ ձի հեծած գնաց այդ աղջկայ մօտ: Սա կանգնեց դրանը եւ ձեռքը ծնօտին դիմհար տալով՝ սպասում էր աղջկան: Դուրս եկաւ աղջիկը:

— Աղջի, հէրդ սէր է, հարցրեց նա.

— Դնաց անտառը, պատասխանեց աղջիկը:

— Ինչո՞ւ:

— Սիւն կտրելու:

— Ինչի՞ համար:

— Չանիդ տակը գիմհար տալու, որ ձեռք չդադրի:

Երիտասարդը ամաչած հեռացաւ:

Եկեղեցու մէջ տեղը դրուած էր մի վարժուհու գիակ: Աւագ քահանան քարոզելիս ասաց.

— Սիրելի ժողովուրդ, այս օրիորդը յայանի էր ամէնրին իւր բարեպաշտութեամբը, առաքինութեամբը, բարոյականութեամբը եւ յեւթարթութեամբը:

*
* *

Գիւղացին իշի վերայ աղ բարձած ճանապարհ էր գնում: Յանկարծ սաստիկ կարկուտ վրայ տուեց, աղը լաւ թրջեց ու էջը սատկեց: Միւս կողմը սեւ սեւ ամպերի մեջից փայլում էր փայլակը եւ շրջակայքը լուսաւորում:

— Վօ, հա՛... ասաց գիւղացին, էն դրդամարիւ, որ աղս թրջեցիր, էշս էլ սպանեցիր. հըմի հետնեա ճրագով ես ման գալիս:

*
* *

Ջրադաշտյանի մախաթ-ասեղը կտրաւ ալիւրի մէջ: Ասեղը գտնելու համար նա բոլոր ալիւրի պարկերը ջրադաշի տանիքը տարաւ եւ սկսեց կարգով ալիւրը քամաւ տալ:

*
* *

Քահանային խոտուովանում էր մի գեռահատ աղջիկ:

— Ո՛րգի, ի՞նչ ես արել, հարցրեց քահանան:

— Տէրտէր ջան, պատասխանեց նա, հինգ ջուխտ գուլքայ, երկու պաճիճ եւ մի թաթպան:

— Ձէ՛, չէ՛, ուրիշ ասա՛, ի՞նչ ես արել:

— Տէրտէր ջան, մի ջուխտ էլ եախի զայթան եմ գործել:

— Է՛հ, հէ՛ր օխնաճ, ասում եմ՝ ի՞նչ մեղք ես արել:

— Մե՛ղք, մեղք, կրկնեց անմեղ աղջիկը, ի՞նչ բան է մեղքը:

*
* *

Մի մարդ եկեղեցուց գուրս գալիս պատահեցաւ մի ծանօթի եւ ասաց.

— Ողորմի՛ր Աստուած:

— Շնորհակալ եմ պատասխանեց ծանօթը:

*
* *

Մի գանգաղկոտ մարդու մի գիւղացի խոնարհութիւն տալով ասաց.

— «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

— Ասա՛ն, պատասխանեց նա կարճ կերպով:

Հայրը գնաց իւր սրգու խանութը եւ նորանից 200 ռ. խնդրեց՝ աժագին կաշիներ գնելու համար:

— Ես էլ շաքար եմ ուզում առնի. ինձ էլ է փող հարկաւոր, պատասխանեց որդին:

— Ինչքան կարող ես, տո՛ւ, ասաց հայրը: Որդին 50 ռ. տուեց: Իսկ հայրը խընդրելով ասաց.

— Թէ ասէ՛ք է՞՝ 10 թումանն էլայ թամամացրո՛ւ:

*
* *

Ձուկը իւր երեխայի հետ գնացին պանդըխտութեան: Մի քանի շաբաթից յետոյ երեխան մօրը մտաբերելով՝ սկսեց լաց լինել:

— Ի՞մբա լալիս, հարցրեց հայրը:

— Օյզին սարտս նուզամ ա՛, ասաց երեխան:

— Բա՛կամ ասաց հայրը, բաս ամ սարտս նաւրս նուզամ...:

*
* *

Հայրը գնաց իւր սրգու խանութը եւ ուզում էր բրինձ գնել:

—Բրինձը օճնց էք տալիս, հարցրեց նա:

—Հինգ ու մի աբասի, պատասխանեց որդին:

—Ի՞նչ ես ասում ասաց հայրը, հրէն փողոցումը չորս ու չորս աբասով են տալիս. էրկու աբասի ընչի՞ էք աւել ուզում, կըրակի գին ա՞:

Մէկը պատահելով քահանային, սխալմամբ ասաց.

—Բարի ողջո՞յն:

—Օրհնեա՛ տէր, պատասխանեց քահանան:

Մի ժամանակ Կ. Պոլսի հայ պատրիարքները սովորութիւն ունէին իրանց գրանոր աշխատութիւնները հրատարակելուց առաջ յանձնել մի գիտնական հայկարանի, որ սխալներն ուղղէ: Պէտք է գիտենալ որ ուղղած տեղերը թանաքով չէին ջնջւում այլ ամէն մի սխալ համարուած բառի կամ նախագատութեան վերայ սպիտակ մոմ էր քրտւում եւ տողի վերեւը գրւում էր ուղիղը:

Պատրիարքներից մէկը իւր գրութիւնը ուղարկելով այսպիսի մի պատուելի վարժա-

պետի, վերջինս կարգալուց յետոյ՝ ամբողջ ձեռագիրը թաթախեց հալած մոմի մէջ եւ վերագործրեց պատրիարքին, կամենալով հասկացնել թէ նորա գրուածքի մէջ այնքան սխալ կայ, որ ուղղելը անհնարին լինելով պէտք է նորից գրել:

Այեկոծութեան ժամանակ նաւորգներից շատերը խեղտուեցան: Իսկ ազատուողներից երկուսը՝ հայր ու որդի մի տախտակի կտորի կպած՝ լողում էին ալիքների վերայ:

—Ի՞նչ դժուար գրութիւն է, տէ՛ր Աստուած, յուսահատութեամբ բացագանչեց որդին, մի կտոր տախտակից է կախուած մեր կեանքն ու մահը:

—Դժուարն այս չէ, պատասխանեց հայրը, այլ այն է դժուարը, որ սեղանիդ վերայ շարուած լինեն ամէն տեսակ սիրած կերակուրներդ, բայց գինի չունենաս:

Հիւանդը կտակում էր իւր եղբորը.

—Պահանջիր Կարապետից 10 ռուբլի:

—Պլպլա՛ գէ՛, պլպլա՛, ասում էր եղբայրը, պլպլիկի՛ գ ղուրպան:

—Թորոսից ասացիր 20 ռ:

—Պլավա՛, դէ՛, պլավա՛, պլավիկի՛դ զուր-
պան։

—Մինասից՝ 5 ռ.։

—Պլավա՛, դէ՛ պլավա՛, պլավիկի՛դ զուր-
պան։

—Մարտիրոսից՝ 40 ռ.։

—Պլավա՛, աղպէ՛ր ջան, դէ՛, պլավա՛,
պլավիկի՛դ զուրպան։

—Քաւոր Մարգարին տո՛ւր 250 ռ.։

—Դէ՛, դէ՛, հերիք է՛ խփի՛ր աչքերդ՝
փչի՛ր հոգիդ, պապանձուի՛ պլավիկդ. առաց,
վերմակը քաշեց եղբօր գլխին ու գուրա
գնաց։

*
* *

Ուսուցիչն ասում էր աշակերտներին.

—Լսեցէ՛ք. ես «միջանկեալ» նախագա-
սութիւնը կրկին բացատրեմ։ «Միջանկեալ»
ասում ենք այն նախագասութեանը՝ որ մէջ է
ընկած մի պարբերութեան մէջ եւ կախում
չունի «գլխաւոր» նախագասութիւնից։

—Ուրեմն, թո՛ղ ձեզնից մէկը մի օրի-
նակ ասէ։

Մի ծոյլ աշակերտ բարձրացաւ տեղից
եւ ասաց.

—Ես կ'ասեմ վարժապետ։

—Ասա՛, պատասխանեց ուսուցիչը։

Նա նայեց առաջեւը բացուած դասա-
գրքին եւ ասաց.

—«Դեղձանիկը չոր թակարդի Դջ ըն-
կաւ»։ ահա՛ այստեղ մէջն է ընկել, միջան-
կեալ է։

*
* *

Մայրը աղջկան հարցրեց.

—Մտրիամ տագերդ անունն ինչ է։

—Ես մարդուս անունը չգիտեմ՝ տա-
գերս ես հարցնում պատասխանեց աղջիկը.
երեք Գրու երկուսին, չորս Գրու քեզ՝ որ ինձ
փողով ծախեցիր։

*
* *

Մէկը ցանկանում էր իւր 15 տարեկան
որդին ուսումնարան տալ. բայց տարիքի
շատութիւնը արգելք էր լինում։ Ուստի
խնդրեց քահանային, որ մի վկայական գրէ,
թէ՛ որդին 8 տարեկան է։

Քահանան գրեց այսպիսի վկայական.
«Մկրտիչ Կարապետեան Կիրակոսեանցը ծը-
նուեց 1865 թուին. մինչեւ 1880 թիւը լի-
նում է 15 տարեկան. բայց 7 տարին Պ.

Կարապետի համար անենք հէշ Մկրտիչը կը մնայ ուղիւ 8 տարեկան»:

* * *

Քաղցած աշուղը իւր աշակերտի հետ անց էին կենում ջրաղացի մոտովը: Փաժայ հացի հոտ առաւ եւ աշակերտին ասաց.

—Ո՛րդի, ես որպէս թէ քեզ ուզում եմ ծեծել, դու փախի՛ր, մտի՛ր ջրաղացը. ջրաղացպանին խնդրի՛ր, որ քեզ ազատէ ձեռքիցս: Երբ նա դուրս գայ, դու հացերը գողացի՛ր:

Յետոյ սկսեց բարձրաձայն հայհոյելով վազել աշակերտի ետեւից. իսկ նա փախաւ մոտաւ ջրաղացը եւ խնդրեց ջրաղացպանին, որ ազատէ իրան: Ջրաղացպանը դուրս գնաց, դուռը փակեց եւ դրսից արգելում էր աշուղին ջրաղացը մտնել: Իսկ աշակերտը տաք տաք հացերը թոնրից հանեց. բայց տեղ չունենալով պարտակելու, շուարած կանգնած էր:

Աշուղը դրսից հայհոյում էր: Ներսից աշակերտը ասաց.

—Ա՛խ, ուրտայ, քո այդ մեծ մեծ ու տաք տաք հայհոյանքների համար տեղ չունեմ պարտակելու:

—Թէ ես ներս մտնեմ պատասխանեց աշուղը, կտոր կտոր կ'անեմ քեզ ու սաղի տոպրակը կը գցեմ:

Աշակերտը խսկոյն տաք հացերը կտրատեց, լցրեց սաղի տոպրակը եւ միւս դրնից դուրս փախաւ:

Աշուղը տեսնելով՝ վազեց ետեւից:

Իսկ ջրաղացպանը մոտաւ ջրաղացը՝ ասելով.

—Ձեր ոտքը կտորուի՛. ո՛վ գիտէ՛ հացերս էրուեցան:

* * *

Մեծ հարսին մեղադրում էին, որ նա թոնրում գրած գիշերեփածից (ոտն գլուխ) լաւ տեղերը անուշ է արել: Իսկ հարսն ասում էր.

—Մեծ հարսը հի՞նչ ա կերել. էրկու խըլշտան, էրկու պըռշտան, չորս գեաչագան, էլ էնտեղ մի էւել բան խօմ՝ չի՞ կերել...:

* * *

Ծառան կերակուրը քիչ ուշ տարաւ. տէրը բարկացած ձեռքիցն առաւ, ձգեց

պարտէզը: Մառան ոչինչ չասելով հեռացաւ: Փոքր ժամանակից յետոյ նա տարաւ երկրորդ կերակուրը. բայց փոխանակ տիրոջը տալու ուղղակի պարտէզը ձգեց:

—Տօ՛, անիծուած, այդ ի՞նչ արիր, գոռաց տէրը:

—Ազն, ես հէնց գիտէի, թէ բաղչումն էք ուզում ուտել, հանդարտ պատասխանեց ծառան:

* *

Մի խեղճ չին ինքն իրան մխիթարելով ասում էր.

—Է՛հ, փառք Աստծու. մենք ամենեւին նեղութիւն չենք քաշում: Միշտ չոր հացը դնում ենք կակուղի մէջն ու փլաւի տեղ ենք ուտում:

* *

Մի հայ՝ տաճիկ փաշայի որդուն խրատելով ասում էր.

—Խելօք կաց, որդի. հօրդ պէս հայվան մի լինի:

Փաշան լսելով՝ ուղեց պատժել հային. բայց նա պատասխանեց.

—Տէ՛ր իմ, ես որդուդ անկարգութիւնը տեսնելով՝ խրատում էի, թէ.

«Խելօք կաց հօրդ պէս. հայվան մի լինի». մի՞թէ դուք բարի խրատի համար է՞լ մարդ էք պատժում:

Փաշան սորա համար պարգեւ տուեց հային:

* *

Գիւղացին շերամէր պահում: Երկու շաբաթից յետոյ շերամները թթան տերեւները պրծան: Գիւղացին սկսեց ուռի տերեւներ ձգել նոցա առաջը, ասելով. «Նս ապրեշում ուղեցի. թէ չէ՞ բուրգ կամ բամբակ հօ կա՞յ ու կայ. դէ՛ կերէ՛ք, բուրգ ու բամբակ պատրաստեցէ՛ք»:

* *

—Ի՞նչ է նշանակում «բանակ», հարցրեց աշակերտը:

Ուսուցիչը ճակատը շփելով՝ ծոծրակը բորեց ու պատասխանեց.

—Մեռնի՛ գրաշարը. դու տառի տեղը չէ գրել: Փոխանակ դանակ գրելու քանակ է գրել:

— 100 —

Քաջանան ուղղում էր ջրաղացը գնալ։
Հենց որ ճանապարհ ընկաւ, եկեղեցու զան-
գերը խփեցին։

— Թո՛ւ, հա՛. ասաց նա, ի՛նչպէս միշտ
չարը բարին հակառակ է։

*
* *

Մի քանի մարդ ուխտ էին գնացել եւ
մի հորթ էին տարել մատաղ անելու։ Հորթը
կապեցին գոմումը, իշի կողքին։

Գիշերով իրանք հարբեցին եւ ցանկա-
ցան խորոված ուտել։ Մէկը վազեց գոմը,
մորթեց էշն ու դուրս քաշեց եւ լուսնի լու-
սով քերթում էր։ Հասնելով ոտքերին՝ նա
զարմանալով ասաց․

— Միթէ վաճի հորթերն է՞լ ե՛ն նա-
լում։

*
* *

Երկու աշակերտ վիճում էին։ Մէկն
ասում էր, «ՆոյնաՀապետը Չ հատ հաւ ա-
ռաւ տապանի մէջ»․ իսկ միւրը պնդում էր
թէ. «Ո՛չ, Չ հատ հաւ կիթ վեր առաւ»։

Հարցրին ուսուցչին։

— Աւելի հաւանական է, ասաց ուսու-
ցիչը, որ հաւ կիթ լինի վեր առած․ եթէ
ոչ՝ հաւերի համար կուտ էլ էր հարկաւոր։

Մէկը մի քաջանայի ճաշի հրաւիրեց։

— Ո՛րդի, ասաց քաջանան, այսօր ճաշ
եմ կերել․ չի՞ կարելի, որ մնայ եգուցուայ
համար։

— Տէ՛ր հայր, զազ եմ խորովել, այսօր
համեցէք, կրկնեց հրաւիրողը։

— Բէ՛ր, բէ՛ր, ո՛րդի, ասաց քաջանան,
բէ՛ր, ուտենք․ թո՛ղ չասեն, թէ «Անիծեա՛ր
լինի էն փորը, որ մի զազ էլ չի կարողա-
նում պարտակել»։

*
* *

Քաջանան մեծ դժուարութեամբ աւե-
տարան էր կարդում։ «Ե՛ աստ պատանեակ
մի, որ ունի հինգ նկանակ գաթեղէն», եւ
բարձր ձայնով ասաց․ «Անիծուի՛ անհաւատ
տպագրիչը․ գաթեղէն նկանակը գարեղէն է
շինել»։

*
* *

Տփխիսեցի քաջանան կամենալով ժո-
ղովրդին հասկացնել, թէ ի՛նչպէս մեծ-
պատին պէտք է իրանց սրտները մարրեն,
ասաց․

— Մի՛րելի ժողովուրդ, պղինձը վուր
պղինձ է՝ տարին մէկ երկու անգամ՝ կրկ-

չու մօդ ին տանում: Վուր կլեկէ: Հիմի սիրե՛լի ժողովուրդ, միր սիրտը վուր է՝ պղինձ է. ամէն վուխտ ժանգոտում է ջուրայ ջուրայ միգքերէմէն. կլեկչին վուր է՝ էտ իս իմ. նիշագիր, կալայ վուր է՝ էտ իմ քարոզն է: Հիմի, սիրե՛լի ժողովուրդ, դուք ձիր սրտիրը պիտի բերիք, վուր պղինձի օրինակի պէս կլեկիմ: Ետքան քարոզութիւնը ապաշխարութենի վրայ հերիք է. մէկ էլ կիրակի թողութենի վրայ կու խօսիմ՝ Սուրբ Հոգու զօրութեանով՝ օրհնեալ լիցիք. ամէն:

*
* *

Վանայ Ալիւր գիւղի Ռէս Կարապետը յայտնի էր իւր սրախօսութեամբ: Տաճկաց Գուրբան-Նայրամի օրը կուտակալ փաշան ասաց.

— Ռէս Կարապետ, ինչքան այսօր այս քաղաքում զոհ է լինում, այնքան հայ կուտորուի. լաւ չի լինի՞:

— Շատ լաւ կը լինի, պատասխանեց Ռէս Կարապետը, այն հայերը, որոնք տաճկացել են, եթէ բոլորն էլ մեռնեն՝ մի զոհ էլ ես կ'անեմ: Եւ եթէ որքան մեր Զատիկին հայերի տներումը կարմիր հաւկիթ է կոտրը-

ւում, մի օրում այնքան տաճիկ մեռնի, լաւ չի լինի՞, փաշայ:

*
* *

— Ո՛րդի, պառ կերել ե՞ս, հարցրեց քահանան:

— Աստուած մի՛ արասցէ, պատասխանեց խոստովանողը:

— Մարգ սպանել ե՞ս:

— Վա՛, փեշակս ի՞նչ է:

*
* *

Երկու մարդ ուղեցին ստեր խօսել.

— Ես մէկ այնպիսի մեծ օձ տեսայ, որի գլուխը Սեւանայ ծովումն էր, տուտը Քրուսմը, առայ մէկը:

— Այդպէս սուտ չեն խօսի, ասաց միւսը:

— Տուտը Արփաշայումն էր, սրան ի՞նչ կ'ասես:

— Քիչ էլի կարճ կը լնէր:

— Դէ, մի սաժէն երկայնութիւն ունէր, հմի ի՞նչ կ'ասես:

— Հա՛, էդ կարելի է:

— Դէ, հմի քո սուտն տա՛, ասաց առաջինը:

—Մի տարի էնքան ձիւն եկաւ որ, ասաց երկրորդը, բարձրացաւ մինչեւ երկինքը եւ ասողերը ցած եկան, ձեան վերայ ման էին գալիս:

—Տօ՛ ախմախ, պատասխանեց առաջինը. քու սուտը որ էգբան մեծ պէտք է ըլնէ՞ր, էլ իմ սուտն ինչո՞ւ էնքան կտոր կտոր արիր:

*
* *

Թարուհ Բազդասարը քաղաքից դուրս պատահեցաւ մի աւաղակի, որ հրացանը գէպի ինքն ուղղած՝ ասաց.

—Սոյըն:

Բազդասարը պատասխանեց.

—Դի՛ր տեղը, զարգա՛շ, գրանից վնաս կը գոյանայ. սատանական բան է. խաթայ կ'անէ:

*
* *

Գիւղական հարսանիքում Թմբկահարը քահանայից «շաբաշ» խնդրեց: Իսկ քահանան դուրս փոխանակ՝ «պահպանիչ» ասաց նորա գլխին: Թմբկահարը կրկնեց իւր պահանջը:

—Ա՛յ որդի, ասաց քահանան, ես քեզ մի լաւ պահպանիչ ասի. բաւական է, էլ ի՞նչ ես ուզում:

—Շատ մի փշի՛, ձայն տուեց միւս կողմից փող փչողը (փողահար). պէտք չի մեզ քո «պահպանիչ»ը:

—Դէ՛, լաւ, ասաց քահանան. եթէ պէտք չի, քո փչածը քո հօր հոգուն, իմ փչածը իմ հօր հոգուն:

*
* *

Մի ափխիսեցի հայ, որ Մոսկուայում նշանաւոր վաճառական էր, սաստիկ փողի կարօտութիւն զգալով՝ դիմեց իւր ռուս պարտապանին եւ խնդրեց իւր 1000 ռուբլին. Իսկ նա ուրանալով իւր պարտքը՝ ասաց.

—Գնա՛ գանգատուի՛ր ո՛ւր ուզում ես:

Վաճառականը չկարողանալով տանել այս յանդուգն պատասխանին՝ մի փառաւոր ծեծ տուեց ռուսին: Նա գանգատուեց հաշտարար դատաւորին, որ եւ վճռեց երեք ամիս բանտարկել հային:

Իսկ սա այդ ծանր պատժից ազատուելու համար մի քանի միջնորդ ու զարկեց

ռուսի մօտ եւ 100 ռ. նորան ընծայելով՝
ազատուեցաւ բանտից:

— Մի քանի օրից յետոյ տիխոնեցին
տօնավաճառումը դարձեալ պատահեցաւ մի
ուրիշ պարտապանի եւ իւր փողը պահանջեց:

Բայց երբ նա ծանր հայհոյանքներ թա-
փեց նորա գլխին, տիխոնեցին հեգնու-
թեամբ պատասխանեց.

— Այ, տօ զնւրումնադ, 10 թումնի
ձէն իս լսի, հա՛ն. վուր սատկիս, էլ չիմ խփի:

* *

Մի խեղճ մարդ ասում էր.

— Եթէ ուզե՛նամ՝ շատ կը հարստա-
նամ: միայն թէ՛ փող չունենմ:

* *

Մէկը խոստովանում էր.

— Օրուայ պատ կերել ե՞ս, ասաց քահա-
նան:

— Կերել եմ, տէ՛ր տէր:

— Ասա՛ «մեղայ Աստուծոյ»:

— Մեղայ Աստուծոյ:

— Շաբաթուայ պատ կերել ե՞ս:

— Կերել եմ, տէ՛ր տէր:

— Դէ՛, ասա՛ «մեղայ Աստուծոյ»:

— Մեղայ Աստուծոյ:

— Մեծ պատ կերել ե՞ս:

— Կերել եմ, տէ՛ր տէր:

— Դէ՛ ասա՛, թուրքացել ես, էլի՛, ասաց
քահանան նեղանալով:

— Թուրք եմ՝ բաս հայ եմ՝ պատաս-
խանեց խոստովանող տաճիկը:

* *

Մի նախապաշարուած հայ գրպանից
20 կոպէկանոց հանելով՝ կանգնեց նորածին
լուսնի դիմացը եւ բերնով ծվծրվացնում էր,
որ ամբողջ ամիսը փող ստանայ: Մի ռուս
խփեց նորա վզակիթին եւ ասաց.

— Развѣ это твоя собака?.

* *

Թարաւհ Բաղդասարին քաղաքից դուրս
պտտահեցաւ մի աւաղակ եւ ասաց.

— Մի՛ շարժուի:

Իսկոյն Բաղդասարը ձիու սանձը քա-
շեց:

Աւաղակը մօտենալով՝ ասաց.

— Յա՛ճ արի:

— Դու ասիր՝ «մի՛ շարժուի» եւ ես չեմ՝
շարժուի, պատասխանեց Բաղդասարը. կա-
րելի է, դու ինձ փորձում ես:

Աւագակը ծիծաղելով հեռացաւ:

* * *

Տաթեւու վանքի միաբանութիւնը վան-
քումը մի ծաղրածու մարդ էր պահում
«Վանէս» անունով: Մէկ անգամ սորան
փողոցումը լաւ ծեծել էին եւ սա «վայ՛ վայ՛»
կանչելով՝ գնում էր դէպի վանքը: Ամէն
կողմից տեսնողները վազում էին ու պատ-
ճառը հարցնում: Իսկ Վանէսը ամէն պա-
տահովի առանձին պատասխանելուց յոգ-
նելով՝ եւ երբ մէկն էլ միւս կողմից ձայն
տուեց, թէ.

— Էգ հի՞նչ ա՛յ Վանէս,

— Այ ախմախներ, ձայն տուեց Վա-
նէսը. լոխ էլ վհաքուեցէք վանքին դեօռնը,
մին դեօնուման ասեմ՝ պրծնեմ ինձանից
հի՞նչ էք օգում:

* * *

Եկեղեցում հարեցողը դողդոջուն ձեռ-
քով աշխատում էր մոմ կպցնել սուրբի

պատկերի առաջեւը: Մօտին կանգնողը մոմը
ձեռքից առաւ եւ ինքը կպցրեց:

— Է՛. դրա փողը գժւ տուիր, հարցրեց
բարձր ձայնով հարեցողը:

* * *

Արեւելեան լեզուների պրոֆեսոր Ստե-
փանոս Նաղարեանցը մի հեցկերոյթի վերայ
բաւական յագեցնալուց յետոյ նկատեց, որ
կրկին կերակուրներ են բերում: Նա գփգո-
հութեամբ դարձաւ դէպի կերակուր բերողը
եւ ասաց.

— Եղբայր պատուական, ի՞նչ վայրենի
երեւակայութիւն էք ունեցել իմ որովայնիս
յայնատարածութեան վերայ:

* * *

Մի հասարակութեան մէջ մէկը պատ-
մում էր.

— Ես այսօր մի զարմանալի բան տե-
սայ. հարիւր գայլ միասին էին ման գալիս:

— Եղբայր, ուստ մի՛ ասի, ասացին նո-
րան, 100 գայլը միասին չեն ման գայ:

— Եանի, ճշմարիտն ասեմ՝ 50-ը կը լի-
նէր:

— 50-ն էլ միասին չեն ման գայ:

— Դրուստն ասեմ, 25-ը անպատճառ
կը լինէր:

—Այ ջանքում 25-ն էլ միասին չեն ման գայ:

—Ճշմարիտը կ'ուզէք՝ ասեմ: 10 հատ կը լինէր:

—Այ բարեկամ արի՛ գու գըուստն ասա՛, 10-ն էլ չի լինի, ասացին՝ մի քանիսը:

—Վա՛լլահ, ասաց ստախօսը, մի զարալթու անց կացաւ չիմացայ՝ շո՛ւն էր, թէ՞ գայլ:

*
* *

Թարուհ Յաղգասարը հիւանդացաւ եւ բժիշկ հրաւիրեց: Բժիշկը բռնեց նորա ցաւոզ ոտքը. բայց յանկարծ Բաղգասարը կանչեց.

—Վա՛յ, գլո՛ւխս:

—Ես խօմ ոտքդ եմ տեսնում, ասաց բժիշկը:

—Է՛, չգիտե՞ս, որ քո բռնած երակի մի ծայրը գլխումն է, ասաց Բաղգասարը:

*
* *

Էշ գնողը հարցրեց ծախողին.

—Աղբէ՛ր, ի՞նչ տամ էս իշին:

—Իրեք թուման, ասաց ծախողը:

—Հէ՛ր օրհնած, բացագանչեց գնողը, էս ի՛նչ ա, որ երեք թումանն ես գին դը՛

նում: Ես էսքան մարդ եմ գառել, իշու-
ների մէջն եմ պառաւել ու ինձ ես ուղում
խաբե՛լ:

*
* *

Ծննդեան գիշերը տիրացուն մտաւ մի տուն «Այսօր տօն»ը երգելու: Բայց տես-
նելով, որ տան բնակիչները սգի պատճառով սեւեր ունեն հագած՝ մտածեց երգել մի տխուր երգ. եւ սկսեց «Հեռացե՛լ եմ իմ մայրենի աշխարհից»:

*
* *

Երկու գինեւէր վարդապետ ճաշին մի-
այն մի շիշ գինի ունէին: Նոցա ծանր էր թւում, երբ տեսնում էին, որ շշի մէջ հեռ-
զհետէ ցած էր իջնում գինու մակերե-
ւոյթը: Ուստի եւ ո՛չ մէկը աչքը չէր հե-
ռացնում շշի վերայից:

Երբ արդէն շշի կէտը խմել էին, հայր սուրբերից մէկը ցանկաւալով մի քանի բա-
ժակ աւելի կուլ տալ՝ վեր առաւ շիշը եւ լցրեց բաժակը, գինին իջաւ, այնտեղ կանգ-
նեց, որտեղից երեւում է յատակի սուր ծայրը. եւ ասաց սաղմոսից.

—Երեւեցան գլուխք լերանց:

Իսկ միւս վարդապետը շիշը իւր բա-
ժակում գատարկելով շարունակեց առա-
ջինի խօսքերը.

— Եւ յայտնեցան հիմունք աշխարհի:
Ասաց ու կուլ տուեց:

* *

Թարուհի Բաղդասարը հոգեվարք ժա-
մանակ շրջապատուած էր իւր բարեկամնե-
րով: Մեռնելիս նա դարձաւ գէպի բարե-
կամներից մէկը եւ ասաց.

— Ե՛ղբայր, ես մեռնում եմ: Կա՛նգիւն-
դին քեզ մօտ:

* *

Մէկը ներս մտաւ իւր բարեկամի տունը
եւ շունը սկսեց հաջել: Նա ձեռքի գաւա-
ղանով խփեց շան գնչին եւ ասաց.

— Անպիտան, ի՞նչ ես հաջում:

— Ա՛ղբաթի խեր, ձայն տուեց տան-
տէրը. փէտը ձեռիդ տուն ես մտնում: Շուն
չըլի. դո՛ւ ըլիս՝ չես հաջի՞:

* *

Մէկը երազ տեսաւ, որպէս թէ երկինքը
ամէն տեղից պատուել է եւ քորեն է թափ-
ւում: Մի տեղից՝ շատ, միւս տեղից՝ քիչ,

երրորդ տեղից՝ աւելի քիչ. իսկ մի տեղից
էլ մի ժամում հազիւ թէ 10 հատիկ ցո-
րեն է վայր ընկնում:

— Այս ի՞նչ բան է, հարցրեց նա իւր
մօտ կանգնած մարդուն:

— Այդ՝ մարդկանց բաժինն է, պատաս-
խանեց նա:

— Բաս էս քիչը ո՞ր խեղճ ողորմելու
բաժինն է:

— Այդ հէնց քո՞ բաժինն է:

— Մի՞թէ այդքան քիչ է իմ բաժինը, ա-
սաց նա. հրկու ձեռքը ազահուլթեամբ ձգեց
երկնքի փոքրիկ պատառուածքի մէջ եւ բո-
լոր ուժով քաշեց, որ աւելի լայն պատա-
ռուածք բանայ եւ իւր բաժինը առատու-
թեամբ թափուի:

Եւ այց այն բողէին այնքան ոյժ տուեց,
որ յանկարծ արթնացաւ եւ տեսաւ, որ իւր
երկու մատները ձգել է իւր բերանը եւ ու-
զում է բերանը ճղել:

* *

Մատթէոս կաթողիկոսին մէկ առաւօտ
խոհարարը հարցրեց.

— Այսօր ի՞նչ կերակուր պատրաստեմ:
Վեհափառ Տէր:

— Ճաշին կը շինես՝ հաշլամայ, չորբայ
եւ մախարնայ, ասաց կաթողիկոսը:

— Իրիկունը:

— Իրիկունը. — մախարնայ, չորբայ եւ
հաշլամայ:

* *

Բագուի «Մարգասիրական ընկերու-
թեան» գահշիճում նախաճաշիկ էր պատ-
րաստուած: Ստորագրութիւն բացուեցաւ
յօգուտ ընկերութեան եւ ներկայ եղողները
առատօրէն ստորագրւում էին:

Մի չքաւոր ծերունի ասաց.

— Ի՞նչ ունիմ չունիմ՝ բոլորը նուի-
րում եմ ընկերութեանը:

— Ի՞նչ ես նուիրում: հարցրին նորան:

— Իմ բոլոր օրհնութիւնը, պատասխա-
նեց ծերունին:

* *

Հիւրը մի բաժակ օղի խմեց եւ սպա-
սում էր, որ մի պատառ բան տան ուտե-
լու: Բայց համբերութիւնը հատնելով՝ ձայն
առուեց.

— Հէ՛ր օրհնածներ, շնորհոտը փորս
գցեցիք, դէ՛, մի պատառ հաց էլայ տուէք,
որ ըռեխը գցեմ է է է:

* *

Ծագկազարդի շաբաթում մեռաւ մի
պառաւի որդի՝ Ղազարոս անունով: Շա-
բաթ օրը եկեղեցում քահանան կարդում էր
աւետարանի հետեւեալ խօսքերը.

— Ղազարոս մեռաւ եւ ես ուրախ եմ:

Պառաւը նեղանալով այդ խօսքերից
ձայն տուեց կանանց դասից.

— Ը՛ր, վարձմ՝ առնեմ բերնէդ, յորի՞
ուրախ չես էղնի. հալբաթ, իմ թառւան
Ղազարոս տարար թաղիւր մըջ հողին, կողո-
պուրտ լէ յըմէն տարար քու ճրզկըներուն
խագցուցիր: Խմկայ լէ չես ամէրնայ՝ խալխի
մէջ կ'ըսիս. «Ղազարոս մեռաւ, ես ուրախ
եմ»: օրթէ յըմալ է, տառոս քեզի ու քու
ճրզկըներուդ:

* *

Թնդանթների ձայները աւետում էին
Արգահանի առումն:

— Էս զարբազանները ինչի՞նն գցում,
հարցրեց մէկը մի խմբի մէջ:

— Կարելի է, էլի ռսները մի քաղաք են
վեր առել, կամ թագաւորին որդի ա ծը-
նուել, պատասխանեց միւսը:

— Զէ՛ է՛, ձայն տուեց մի քահանայ,
թագաւորին որ որդի ծնուած ըլի՝ օրացու-
ցումը գրուած կ'ըլնէր:

* *

Մէկը գրում էր. միւսը հարցրեց.

— Ինչո՞ւ, երբ խօսքը «ա» տառով է
վերջանում, մօտը «յ» էք գրում:

— Այն պատճառով, որ այժը վեր չընկնի.
«յ»-ն այժի զամինն է, պատասխանեց գրողը:

* *

Տիրացուն երկու կռուող տեսներով մօ-
տեցաւ, հարցրեց.

— Զի՞ վիճէք ընդ միմեանս, եղբարք:

Բայց տեսներով, որ իւր վերայ ուշա-
գրութիւն չեն դարձնում, ասաց.

— Ն'ղբայր, սիրեսցես զընկեր քո՝ իբրեւ
զանձն քո:

Կռիւն աւելի սաստկանում էր: Տիրա-
ցուն մէջ ընկաւ եւ մէկին մի կողմը ձգե-
լով, միւսին՝ միւս կողմը, ասաց.

— Նրանի՛ խաղաղարարաց՝ զի նոցա է
արքայութիւն երկնից:

Կռուողները արգէն միմեանց երես-
ները արնոտեցին:

Իսկ տիրացուն է՛լ չկարողանալով համ-
բերել՝ մէկ մէկի գլխին խփեց, մէկ՝ միւսի
գլխին եւ ասաց.

— Որ ո՛չ լսէ ունկամր, տան նմա լսել
թիկամբ: Դէ, հմի իրար միս կերէք:

* *

Երկու հոգի սկսեցին սուտ խօսել. Մէկը
ասաց.

— Մեր գոմը այնքան երկայն է որ՝ երբ
ձին մի ծայրումը յղանում է, մինչեւ միւս
ծայրը հասնելը ծնում է:

— Իսկ իմ հայրը մի այնպիսի մզրախ
ունի, որ նորանով երկնքի ամպերը գէս ու
գէն է քշում, պատասխանեց միւսը:

— Բայց այդքան երկայն մզրախը ո՞ր-
տեղ է պահում:

— Զեր գոմումը:

* *

— Դու ի՞նչ ես ցանկանում ամենից
շատ, հարցրին յիմարին:

— Ես ուզում եմ որ թագաւոր ըլիմ
ասաց նա. խաղինից 10 թուման գողանամ
ու փախչեմ:

* * *

Քուրդը կօշկակարի խանութի առա-
ջեւից անցնելով՝ տեսաւ մի ամանում թրք-
ջած կաշիների կարմիր ջուրը եւ կարծելով
թէ գողար է՝ (քաղցու) ասաց.

— Խնդրեմ՝ ինձ 5 կոպէկի գողար տաք:

— Համեցէ՛ք, ասաց կօշկակարը. մի ամանում լցրեց այն ջրիցը եւ տուեց: Քուրդը
նստեց, հացը մէջը բրդեց եւ սկսեց ուտել:
Երբ կերաւ վերջացրեց, ասաց կօշկակարին.

— Ուստաց, չկարծես թէ ես յիմար էի,
բան չհասկացայ. գողարդ ամենեւին քաղց-
րութիւն չունէր:

* * *

Մի աղջիկ խօսելիս «մանաւանդ» ասաց:
Ծանօթը այդ բառի նշանակութիւնը չհաս-
կանալով՝ ասաց.

— Ամօթ չէ՞. աղջիկն էլ «մանաւանդ»
ասի:

Մի քանի աբարանցի երիտասարդ մի
ձորի եզերքում նստած՝ խօսում էին այդ
ձորի լայն տեղից թռչելու մասին: Ամէն
մարդ իրան էր գոլում թռչելու մէջ: Իսկ
մէկն ասաց.

— Ե՛յ տղերք, հե՛չ նաչառնիկը (նա-
չայլնիկ) չի կրնայ թռնել էղբան՝ գուք ո՞նց
կրնաք թռնել:

* * *

Ստախօսին հարցրին.

— Իսկի ուղիղն ասում ե՞ս:

— Որ ասեմ՝ հա՛ հաւատացէ՛ք, որ իմ
«հա»ն էլ սուտ է, պատասխանեց:

* * *

Ուստաց Աղաջանը նոր տուն էր շինում:
Մի երկրաչափ անց կացաւ եւ հարցրեց.

— Դու պլան ունե՞ս:

— Ես ինքս պլանչի եմ՝ պատասխանեց
նա:

Այդ խօսքերը Աղաջանին դատաստանի
մատնեցին:

— Ի՞նչ իրաւունքով դու ասում ես, թէ՛
«ես պլանչի եմ», հարցրին ոստիկանները:

— Զէ՛, ազգայ՛, պատասխանեց Ուստայ Աղաջանը. ես ասեցի թէ՛ «եռ ինքս ինչա՛ն է եմ»:

* *

Մէկն ասում էր, թէ՛ երեխայ պահելը դժուար է, իսկ միւսը՝ թէ՛ հեշտ է, ինչ ուզի՞ կը տան ու ձայնը կը կտրի:

— Որ էգպէս է՛, ասաց առաջինը՛, ես երեխայ դառնամ՝ դու պահիր:

— Շատ լաւ, ասաց միւսը:

— Ը՛ր, ը՛ր, մածուն եմ ուզո՛ւմ ասաց առաջինը:

Երկրորդը բերել տուեց մի աման մածուն:

— Ը՛ր, ը՛ր, կաթն եմ ուզո՛ւմ:

Բերին կաթը:

— Ը՛ր, խառնիր միասին:

Խառնուեցաւ:

— Ը՛ր, էգպէս փխ է. ջուկը միմեանցից:

* *

Հարեցողին շատ խրատեցին, որ հրաժարուի շատ խմելուց եւ խոստանայ որ էլ

չի հարբի: Նա էլ երգուեց եւ երգումը անխախտ պահելու համար իւր արծաթէ թասի վերայ փորագրել տուեց. «Երգւում եմ, որ այսօր խմեմ էգուց՝ ո՛չ»:

* *

Հարսը իւր ծուլութեամբ համբերութիւնից հանել էր սկեսրայրին ու սկեսրոջը: Կամենալով հասկացնել նորան, որ տունը ինքը պէտք է աւելի, մի առաւօտ սկեսրայրը աւելը վեր առաւ ու սկսեց աւելել սենեակը: Սկեսուրը մօտեցաւ նորա ձեռքից աւելը խլելուց եւ նեղանալով ասաց.

— Ի՛նչ քու բանն է տուն աւելելը:

Իսկ հարսը, որ աչքի տակից նկատում էր այս խորամանկ արարմունքը՝ անհոգութեամբ ձայն տուեց.

— Ի՛նչ էք կոտորւում: Էսօր դու սրբի էգուց՝ նա:

* *

Երկու գիւղացի ճանապարհորդում էին: Նոցանից մէկը մեռաւ: Միւսը նորա գիակը գրեց եզան վերայ եւ շարունակեց ճանապարհը: Երբ եղբ մի տեղ յեխի մէջ կանգ-

նեց ու էլ առաջ չէր գնում գիւղացին ձայն տուեց մեռած ընկերոջը.

— Աղա, ախմախ, հէնց մեռել ես, որ մի «օհօ» էլ չես կարում ասել:

* *

— Ո՛րդի, ի՞նչ ես արել, հարցրեց քահանան.

— Տէ՛ր հայր, պատասխանեց խոստովանողը, մի մեղք եմ արել ու չորս բարեգործութիւն:

— Ի՞նչպէս:

— Մի կով գողացայ, չորս ոտը չորս աղքատի բաժնեցի:

* *

Քերականութիւնը դաս տալիս ուսուցիչն ասում էր.

— Աթակահ. — ածականը ցոյց է տալիս մի բանի ռանգը. իսկ բանը ինքը գոյական է: Բայէրբ. — ինչ որ մենք ենք անում՝ ներգործական է, ինչ որ «բիշ» է անում՝ կրաւորական է: Այս ինքն՝ եթէ մենք սպանենք, «ներգործական է». եթէ ուրիշը սպանի, «կրաւորական է»:

Մէկը փողոցում մի փախուած հայելի գտաւ. բայ արեց ու տեսնելով մէջը իւր պատկերը՝ երկիւղով փայր ձգեց ու ասաց. «Կը ներէք. չէի կարծում որ դուք այդ տեղ էք»:

* *

Երկու տիրացուի հարցաքննում էին. Մէկին ներս կանչեցին կոնսիստորիան եւ հարցրին.

— Աստուածային անձինք քանիս են:

— Քառասուն, պատասխանեց տիրացուն:

Երբ նա անպատուած դուրս գնաց, դուրսը սպասող տիրացուն հարցրեց.

— Ինչի՞ էդպէս շուտ դուրս եկար:

— Ի՛նչ անեմ. ասի՛ աստուածային անձինք 40 են, չհաւատացին, դուրս արին:

— Ինչի՛ չասիր՝ թէ՛ երեք են, ասաց ընկերը:

— Տօ՛, ի՛նչ կը՛սես, պատասխանեց առաջինը, 40 ասացի, որ այնքան նեղացան, հապա որ երեք ասէի՛, ի՛նչ կ'անէին:

* *

Երեսօտն գինու կարասն ընկաւ խեղտուեցաւ: Մնողները լաց էին լինում: Իսկ

մի դրացի կին կարծելով թէ գինու ապակա-
նուելու պատճառով են լաց լինում՝ ասաց.

— Վնաս չունի՛. մաքուր տղայ էր. ի՛նչ
կայ, որ... էլի կը խմուի:

Անցեալ օրը մեր քաւորոջ յակոտն ըն-
կաւ կարասը խեղտուեց. բայց էլի տէրտէր
բերին, օրհնել տուին, խմեցին:

* *

Մարգասպանին դատաւորը հարցրեց.

— Ինչո՞ւ սպանեցիր:

Նա պատասխանեց.

— Նրա փորը որ փտած ըլի, ես ի՛նչ
մեղաւոր եմ: Խանչալիս ծէրը դիպաւ թէ
չէ՛, վէր ընկաւ:

* *

Աղբակցին իւր սպիտակ էջը տարաւ
Խոյ ու ծախեց: Գնողը տարաւ, սեւ գոյնով
ներկեց եւ կրկին թանգ գնով ծախեց աղ-
բակցուն: Նա տուն վերադարձաւ: Բայց
մի քանի օրից յետոյ, երբ անձրեւ եկաւ,
թրջեց իշին ու ներկը վայր բերեց: Այդ
ժամանակ աղբակցին ճանաչեց, որ դա իւր
էջն է եւ ասաց.

— Նա լսել էի, որ խոյեցիք էջ են ներ-
կում: Բայց չէի կարծում, որ իմ էջը էլի
ինձ կը ծախեն:

* *

Գիւղացի քահանան բուն-բարեկենդա-
նին 50 հատ լոբի էր ածում գրպանը եւ
մեծ-պատի պռաջին օրից մէկ մէկ հանե-
լով՝ գտնում էր Ձատիկը:

Նրէցկինը կարծելով, թէ տէրտէրը լոբի
շատ է սիրում, մէկ անգամ մի բուռը լոբի
լցրեց նորա գրպանը: Իսկ գիւղացիք նկա-
տելով, որ Ձատիկը շատ է ուշանում մէկ
անգամ, հարցրին քահանային.

— Տէ՛րտէր, ախրը Ձագիկը ե՛փ պըտի
գայ:

— Է՛է, օրհնածներ, պատասխանեց քա-
հանան, ես որ իմ ջերիս լոբիքը տեսնում
եմ ես տարի Ձատիկ չի գայ:

* *

Հայր ու որդի գնացին բանջարանոցը՝
ձմերուկ գողանալու: Հայրը շալակել էր որ-
դուն. իսկ որդին քաղում էր: Նրբ տէրը
իմացաւ գանգատեց դատաւորին:

Հայրը սկսեց երգուիլ, թէ. «Իմ ձեռս
ձմերուկին չէ գիպել»:

Իսկ որդին երգւում էր, թէ. «Իմ ոտս
բոստանի հողին չէ գիպել»:

Դատաւորը երկուսին էլ արդարացրեց:

* *

Այր ու կին միշտ կուռում էին: Երբ մե-
ռան, երկուսին էլ մի տապանաքարի տակ
դրին եւ վերան գրեցին. «Այստեղ մեծ հը-
րաշք է երեւում: Իմ մարդ ու կին չեն կը-
ւում»:

* *

Բարսեղ Հայրապետը մի նշխար ուղար-
կեց Յուլիանոս Ուրացոյ կայսրին: Նա էլ
մի խուրձ խոտ ուղարկեց նորան:

— Ե՛հ, ասաց Հայրապետը, ես իմ կե-
րածից ուղարկեցի, նա՛ իւր կերածից:

* *

Երեք գիւղացի առաջին անգամ քա-
ղաք մտնելով՝ տեսան որ մի երեխայ իրանց
դրանը նստած է, մի դանակ ձեռքին:

— Տղէ՛րք, ասաց մէկը, ի՛նչ անենք,
որ էս դանակը խլենք էս տղու ձեռքից:

— Կամաց կամաց մօտ գնա՛, մի բաշ
բղաւի, ասաց միւսը. նա կը վախենայ, գա-
նակը գէն կը գցի, մենք էլ վեր կառնենք,
կը գնանք:

Երբ մօտեցաւ երեխային ու բղաւեց,

— Մի՛ վախենայ, ասաց երեխան, ականջ-
ներդ չեմ կտրի:

* *

Ներսէս Ե. կաթողիկոսը եպիսկոպոսու-
թեան ժամանակ Եջմիածնում էր, երբ գնաց
այնտեղ Աբաս Միրզայ պարսից թագաժա-
ռանգը: Աբաս Միրզան մտնելով վանքը՝
պահանջեց սաղմոսը եւ առաջարկեց, որ իւր
համար վիճակ բաց անեն:

Ներսէսը «Հայր մեր» ասելով բաց ա-
րեց խգ. գլուխը, Տ համարը, կարգաց ու
թարգմանեց.

— «Ա՛ժ զսուր ընդ մէջ քո հզօր, վա-
յելչութեան եւ գեղոյ քո»:

Իսկոյն կաթողիկոսական տեղապահ
Բարսեղ արքեպիսկոպոսը վեր առաւ սուրը
եւ իւր ձեռքով կապեց Աբաս Միրզայի մէջ-
քին:

Մահամերձ հիւանդը կտակում էր քահանայի մօտ իւր հարստութիւնը:

— 1000 մանէթ ընծայում եմ ձեր եկեղեցուն, ասաց նա:

— Աստուած օրհնեցէ, ասաց քահանան:

— 1000 մանէթ ընծայում եմ ձեր ուսումնարանին:

— Աստուած օրհնեցէ:

— 1000 մանէթ էլ ընծայում եմ քեզ:

— Ո՛րդի, հարցրեց քահանան, քո մահուանից յետոյ սրտեղից պէտք է ստանանք էգ փողերը:

— Ո՛րտեղից ուզում էք՝ ստացէ՛ք, ասաց հիւանդը, շրջուելով միւս կողքի վերայ. իմ հիւանդութիւնս ինձ բաւական չէ՞. դրա համար էլ դո՛ւք նեղացէ՛ք:

*
* *

1812 թուի մարտի 6-ին Ներսէս Ե. կաթողիկոսը եպիսկոպոսութեան ժամանակ գտնւում էր Ղազրիժում, ուր նորա ներկայութիւնը սաստիկ շարժեց տեղական մահմեդական բարձրագոյն հօգնւորականութեան հետաքրքրութիւնը: Մի օր Բազաւորազն Աբաս Միրզան հրաւիրեց նորան

Շէյխ-Ուլ-Իսլամ Միրզայ Ահմէտի մօտ, որ մահմետականների մէջ մեծ համբաւ ունէր իւր ուսումնականութեամբ:

— Խալիֆայ, ասաց Շէյխ-Ուլ-Իսլամը՝ Ներսէսին, յսել եմ որ՝ քո բոլոր ազգի մէջ երեւելի գիտուն եւ հասկացող անձն ես եւ քո բոլոր ազգը քեզ ունկնդիր է լինում ու հետեւում Գեղ այստեղ հրաւիրելու եւ նեղութիւն տալու պատճառն այն է, որ ահա այս հանդիսականների առաջ կ'ուղեմ, որ ես ու դու վիճենք ու քննենք. եթէ ձեր հաւատն է՝ ճշմարիտ՝ մե՛նք հաւատանք, եթէ մերն է՝ ճշմարիտ՝ դուք հայրդ մուսուլմանութիւն ընդունէք:

Ներսէսը քմծիծաղ ժպտաց, բայց չը պատասխանեց:

— Այս մի երեւելի ծառայութիւն կը լինի իմ եւ քո կողմից մեր եւ ձեր ազգի համար, շարունակեց շիտթուած Շէյխ-Ուլ-Իսլամը:

Ներսէսը դարձեալ լուռ էր:

— Խօսի՛ր, խալիֆայ, ասաց Շէյխ-Ուլ-Իսլամը մի քիչ ստիպողական ձեւով:

— Ազայ Շէյխ-Ուլ-Իսլամ, վերջապէս պատասխանեց Ներսէսը. նախ քան մեր այս առարկայի մասին խօսելը՝ ես այսօր կը կանգ-

նեմ հայոց եկեղեցւոյ պարսպի վերայ ու ձայն
կը տամ՝ «Հայեր, ես քննեցի, տեսայ որ մոլ-
սութեամբ թիւնը ուղիղ հաւատ է, եկէք գը-
նանք մոլսութեամբանանք. գու էլ գնա՛ Պաղ-
րէթ սհաբի հրապարակը, կանգնիր ու ձայն
տո՛ւր՝ «Մոլսութեաննէ՛ր, ես հայերի հա-
ւատը քննեցի ու տեսայ, որ նոցա հաւատը
ուղիղ է, եկէք գնանք հայանանք»։ Յետոյ
գնանք ու նստենք, որը ճշմարիտ գտնենք,
երկուսս էլ այն ընդունենք։

Սորանով վերջացաւ լէճը։

* *

Ներսիսեան դպրոցի աշակերտները ի-
րանց հոգաբարձուին խնդրել էին, որ մի
աշխարհագրական աստիճանէ. բայց հո-
գաբարձուն չէր հասկանում այդ բառի նշա-
նակութիւնը։

Զրօրհնէք օրը նոյն աշակերտները նոյն
հոգաբարձուի հետ գնացին Տփլիսի առաջ-
նորդարանը՝ Ներսէս կաթողիկոսին Քրիս-
տոսի Մկրտութիւնը շնորհաւորելու։ Աշա-
կերտները ցանկանալով կաթողիկոսի մօտ
մի փոքր զուարճանալ՝ ասացին.

—Վեհափառ Տէ՛ր, մենք խնդրում ենք
մեր հոգաբարձուին, որ ատլաս առնէ մեզ
համար. բայց չէ առնում։

—Հիմի ատլաս որ չըլի ու ֆեպիալ ըլի,
չի ըլի՞, ասաց հոգաբարձուն։

* *

Մի մարդ գնաց պարսից Նահաբաս թա-
գաւորի մօտ եւ առում էր.

—Թագաւոր, որդիս իւր հաւատը թող-
նում թուրքանում է. հրամայիր որ այդ
բանը չանէ։

—Է՛հ, ասաց թագաւորը, բառ Նահա-
բասը ինչ անէ, որ եօթր որդի ունի, եօթն
էլ թուրք են։

* *

Մի անշնորհք մարդ տեսաւ որ իւր այ-
գին մի կով է՝ մօել։ Իսկոյն կանգնեց կովի
մօտ, նշան գրեց, խփեց ու կովը վայր ըն-
կաւ։ Յետոյ ինքնիրան պարծենալով ասաց.

—Մալադե՛ց Վարդան ազայ. կովին
խփեց, վէր գցեց։

* *

Մի ուսումնարանի պատրաստական դա-
սաւորից արձակեցին մի աշակերտի իւր ծու-
լութեան եւ ստահակութեան պատճառով։

Միւս օրը աշակերտի մայրը իւր որդու հետ գնացին նոյն դասատան ուսուցչի մօտ եւ խնդրում էր, որ կրկին ընդունեն իւր որդուն:

— Անկարելի է, պատասխանեց ուսուցիչը, դուրս հետ պարապել չէ կարելի:

— Ախրր ես իմ որդուս ուսումնարանի արժանի շորեր եմ հագցնում ինչի՞նչ չէք ունդունում ասաց մայրը:

— Մենք շորերին չենք մօտիկ տալիս, այլ գլխին ենք մօտիկ տալիս, ասաց ուսուցիչը:

— Գլխին էլ հէնայ ինչ քնէ՞մ, միայն թէ ունդունէք, ասաց մայրը:

* *

Քահանան պսակուող հարսին հարցրեց.

— Ո՞րդեակ, հնազանդ ես:

— Թէ սա կը հնազանդի, ես էլ կը հնազանդեմ, պատասխանեց աղջիկը, թէ չէ՝ ես իմ անեղիքը վաղուց մտածել եմ:

* *

Հայոց Թաթուլ քաջ իշխանը պարտից Տուղրի թագաւորի դէմ քաջութեամբ պատերազմելուց յետոյ՝ գերի ընկաւ: Պատե-

րազմի ժամանակ Թաթուլը վիրաւորեց մի պարսիկ իշխանի աղայի, որ Տուղրիի սիրելին էր:

— Եթէ այս տղան առողջանայ, ասաց նորան թագաւորը, քեզ կ'ազատեմ: Իսկ եթէ մեռնի, քեզ սորան կը զոհեմ:

— Եթէ հարուածը իմն է, չի ապրի, պատասխանեց Թաթուլը:

Շուտով իշխանի տղան մեռաւ: Թագաւորը Թաթուլին սպանել տուեց եւ նորա աջ ձեռքը կտրելով ուղարկեց մեռնողի հօրը ատելով:

— Որդիդ, վատ բազկից չէ մեռած:

* *

Տէրը հարցրեց նոր վարձած ծառային.

— Գու ի՞նչ բանի շնորհք ունես:

— Ես շատ հաւոտարիմ եւ քաջ ծառայ եմ, պատասխանեց նա. միայն տարին մի անգամ մի սուտ եմ խօսում:

— Վհաս չունի, ասաց տէրը. մի սուտը ներելի է:

Ծառան 11 ամիս լուծ ծառայեց. երբ սուտ խօսելու օրն եկաւ, լալով գնաց տիրոջ խանութը եւ ասաց.

— Տունը կրակ է ընկել. մեծ ու փոքր էրևում են:

Տէրը շտապով տուն էր վազում. իսկ ծառան նորանից առաջ տուն հասնելով՝ տանտիկնոջն ասաց.

— Ի՞նչ էք հանգարտ նստել, դուքանը քանդուեց, աղան տակը մնաց:

Ամէնքը յեղապատառ դուրս փախան եւ լացով ու աղաղակով վազեցին գէպի խանութը:

Ճանապարհին մարդ ու կին միմեանց հանդիպեցան, գրկախառնեցին եւ ուրախութեամբ ու արտասուքով փառք էին տալիս Աստծուն իրանց ազատութեան համար:

Ծառան մօտեցաւ տիրոջն ու տիրուհուն եւ ասաց.

— Ազայ, ոչինչ վտանգ չէ պատահել, հանգիստ կացէք. էսօր իմ սուտ խօսելու օրն էր. ներեցէք ինձ:

— Ա՛յ, փո՛ւշ կենդանի, ասաց տէրը, օրը տասը սուտ տտա՛, ո՛չ թէ տարին մէկն ու էն էլ էգպէս պողաւոր ու պոչաւոր սուտ:

* *

Քահանան ճանապարհին հանդիպելով իւր ուսումնարանի աշակերտուհիներին մէկին, հարցրեց.

— ձեւարակեան, ինչո՞ւ այս ամբողջ շաբաթ ուսումնարան չես գալիս:

— Վախենում եմ: որ ինձ էլ Շէխոյեանի պէս ծեծես, պատասխանեց օրիորդը երկիւղով:

Քահանան խփելով աշակերտուհուն՝ ցած գլորեց նորան ասելով՝

— Թշուառական, դու չե՞ս իմանում, որ ես է՛լ աղջիկներին չեմ՝ ծեծում:

* *

Մի քանի հարուստ կանայք ճաշի էին նստոտած: Երբ խաղող բաժանեցին, նոցանից մէկը երկու մատի ծայրովը մէկ փոքրիկ ողկոյդ ձեռքն առած՝ նազելով հատիկները քաղում էր ու բերանը դնում: Յետոյ գարձաւ, հարցրեց իւր գիւղացի ծառային.

— Կրպոյ՛, ձեր երկրումը խաղոյն ի՞նչ պէս են ուտում:

— Ինչպէս որ դուն անցեալ օրը սարգափումն էիր ուտում: աղջիկ պարոն, պատասխանեց ծառան:

* *

Ուսուցիչը աշակերտներին տարել էր դաշտը դրօսցնելու: Հետեւեալ օրը աշակերտուհիներին մէկը հարցրեց ուսուցչին.

—Պ. Ն., չէ՞ որ դուք խոստացաք, որ երկու օր մէջ տղաներին տանէք գաշտը՝ մէջ օրիորդներին. հապա ինչո՞ւ երեկ տղաներին տարաք:

—Ի՞նչ անեմ: պատասխանեց ուսուցիչը, նորա այնքան ասացին ու խնդրեցին, որ հոգիս հանեցին:

—Մենք է՛լ կը հանենք, ասաց աշակերտուհին, առանց մտածելու:

*
* *

—Էն ի՞նչ ա, ծառի վրէն, անիւմէ, հարցրեց որդին հօրը:

—Ակռաւ ա, բալայ ջան, պատասխանեց հայրը:

—Էն ի՞նչ ա, անիւմէ, հարցրեց որդին երկրորդ անգամ:

—Ակռաւ ա, անիւմն քեզ զուրբան, պատասխանեց հայրը առանց նեղանալու:

—Էն ի՞նչ ա, անիւմէ, հարցրեց որդին երրորդ անգամ:

—Ակռաւ ա, անիւմն չարդ տանի, պատասխանեց հայրը:

Երբ որդին մեծացաւ, հայրը ուզենալով նորան փորձել՝ մի անգամ հարցրեց.

—Գէ'որդ ջան, էն ի՞նչ ա, ծառի վրէն:

—Ակռաւ ա, պատասխանեց որդին:

—Գէ'որդ ջան, էն ի՞նչ ա, կրկնեց հայրը:

—Ակռաւ ա, պատասխանեց որդին կոշտութեամբ:

—Գէ'որդ ջան, էն ի՞նչ ա, հարցրեց հայրը երրորդ անգամ:

—Ակռաւ ա, էյի՛ր, չե՞ս տեսնում աչկաքոռ ան, պատասխանեց որդին բարկութեամբ:

*
* *

Տիրացուի նամակը.

Ի: 1881 ամի 25. հոգտեմբերի.

Նախ. Եւ առաջին.

Պատուելի Պարոն. Զաքարիայ.

Գիր'իգորեանց.

Հայրենասէր Հայկազանց.

Եւ. Արամեանց.

Խնդր'իք.

Պարոն. Զաքարայ. խնդրում եմ ձեր. հայրենասէր. տպարան'ից. մ'ի գ'իրք. որ. ասում են. տնաին. բժշկական մարմնամարդու թիւն.

Գրնն է. 40 կօպէկ.

Ուրեմն, կանխիկ-ձեր խոտակայ
ողորկում եմ: ձեզ, որ անպատճառ,
ողորկէք. նամակս. առանց. պատասխանի
չթողնէք. խնդրես եմ:

Պարոն. Զաքարայ.

Եւ. էլ. այսուհետեւ.

Ճիշտ. կարօղենք. ձեր.

Հայրենասէր. տպարանից

նոր. նոր. Գրքեր. ձեռք. բերել.

Հեշտութեամբ.

Եթէ. որ. մեզ. նամակ.

խրկելու. ըլաք. պէտք է.

այսպէս. գրէք.

Վ. ք. Գօռտ. Նօյս-չերկասի.

Նա աստառի բազառ.

Ֆրուգտալօի պօղրեք.

Օվանես. Պապաեօլու.

Մնամ ձեզ. բարի

Կամեցող. եւ ձեր. նամակին.

Ըսպասող. (Տ'իրացու)

յՕհաննէս. Պապաեօլ.

յՕհաննէսեանց (այլ եւ այլն)....

(Այս քանս բաւ լիցի. քոյին յայտնու-
թեամբ.)

Բ. Մ Ա Ս Ն

ՕՏԱՐԱԶԳԻ ԱՆԵԿԴՕՏԵՆԻ

Մի հացկերութի ժամանակ խօսք ըն-
կաւ ձկներին պատահած զանազան դի-
պուածների մասին: Օրինակներ էին բե-
րում ինչպէս ձկան փորում մարգարիտ-
ներ եւ ուրիշ թանկագին բաներ են գտել:

Մի ծերունի, որ հանգիստ ականջ էր
գնում այդ պատմութիւններին, վերջապէս
ասաց.

— Թոյլ տուէք, որ պատմեմ ձեզ ինձ
պատահած մի անցք: Իմ երիտասարդու-
թեան ժամանակ ես Նիւ Եորքում մի հա-
րուստ վաճառականի մօտ գործակատար
էի եւ, ինչպէս պատահում է երիտասար-
դական հասակում եւ ծանօթացայ մի գե-
ղեցիկ աղջկայ հետ եւ նշանուեցայ:

Հարսանիքից երկու ամիս առաջ ինձ
անակնկալ կերպով շատ հարկաւոր գործով
ուղարկեցին Բիրմինգհամ: Ես շտապով եւ
քնքշաբար բաժանուեցայ իմ նշանածիցս:

խոստանալով հետը շարունակ նամակագրու-
թիւն ունենալ: Բայց այնտեղ ինձ կարծա-
ծիցս աւելի երկար պահեցին: Վերջապէս
տուն վերադառնալու պատրաստութիւն
տեսնելով՝ ես իմ նշանածի համար գնեցի
մի գեղեցիկ ու թանկագին ագամանդեայ
մատանի: Հստակելով նիւ Եւրոյ, յանկարծ
լրագրի մի յայտարարութեան մէջ կարդում
եմ: որ իմ նշանածս պսակուել է ուրիշի
հետ: Ես բարկութեամբ մատանին ծովը ձը-
գեցի:

Պատահեցաւ, որ մի քանի ժամանակից
յետոյ ես ճաշում էի լաւ հիւրանոցներից մե-
կում: Բերում են ձուկը. ես սկսում եմ ու-
տել եւ յանկարծ զգում եմ որ մի ինչ որ
պինգ բան ատամիս տակն ընկաւ... եւ ի՞նչ էք
կարծում: Ի՞նչ էր այն:

— Ագամանդեայ մատանի՞ն, միաձայն
աղաղակեցին ունկնդիրները:

— Ո՛չ. սառնութեամբ պատասխանեց
պատմողը, յիշանալով էր:

* *

Շիլլերը երիտասարդութեան ժամանակ
սովորում էր քնար ածել: Դրացին որ շատ

ձանձրացել էր նորա երաժշտական վարժու-
թիւններից՝ ասաց նորան.

— Պարոն Շիլլեր, դուք ածում էք՝ ինչ-
պէս Դաւիթը. բայց ո՛չ այնքան լաւ:

— Իսկ դուք, պատասխանեց Շիլլերը,
խօսում էք, ի՞նչպէս Սոլոմոնը, բայց ո՛չ այն-
քան խելօք:

* *

— Ա՛հ, բարձր, պ. Պետրոսեանց, ի՞նչ-
պէս էք:

— Հիմա քիչ լաւ եմ:

— Շատ ուրախ եմ:

— Ներողութիւն, պարոն, իմ մակա-
նունս Պօղոսեանց է:

— Ա՛խ, դուք Պօղոսեանցն էք. ի՞նչքան
նմանութիւն: Միեւնոյն է. շատ ուրախ եմ
որ այժմ մի քիչ լաւ էք:

* *

Մի մարդ ունէր երկու ծառայ: Մի օր
նա կանչեց.

— Մարտիրոս, ի՞նչ ես շինում:

— Ոչինչ:

— Իսկ դու, Կարոպետ:

— Ոգնում եմ Մարտիրոսին:

— Երբ վերջացնէք, կօշիկներս բերէ՛ք:

* *

«Кіево - Брестская» երկաթուղու մի կայարանում մի հրէայ ճանապարհորդ ցոյց տալով կառավարին (conducteur) շոգեկառքի վերայ գրուած «К. В. Ж. Д.» տառերը՝ հարցրեց.

— Ի՞նչ են նշանակում այս տառերը:

— «Какая-то Большая Жидовская Дорога», պատասխանեց կառավարը:

— Ո՛չ. այդպէս չէ՝ արաց հրէան:

— Հապա ի՞նչպէս է, հարցրեց կառավարը:

— «Кондукторомъ Быть Желаетъ Дуракъ», ասաց հրէան:

* *

Մոլլայ Նասր-Էֆֆինը ուղւում էր նրստել իշի վերայ. բայց այնպէս ուժով վեր ցատկեց, որ իշի վերայովը միւս կողմը վայր ընկաւ:

— Ա՛խ, խայտառակուեցանք, ասաց ինքն իրան մոլլան:

Բայց, երբ իւր չորս կողմը նայեց ու տեսաւ որ տեսնող ոչ ոք չկայ, ասաց.

— Տօ, ե՛ղբայր, առաջ էլ գետնին չէի՝. էլ ի՛նչ եմ ասում, թէ խայտառակուեցայ. գետնին էի, էլի գետնին եմ. սրանում էլ ի՛նչ ամաչելու բան կայ.....

* *

— Գէորգ, հարբած ես, հարցրեց տէրը:

— Ո՛չ, հարբած չեմ: պատասխանեց ծառան:

— Ճշմարիտ, հարբած ես:

— Ճշմարիտ, հարբած չեմ:

— Ուրեմն կօշիկներս հանի՛ր:

— Բայց.... գուք սրտեղ էք, պարոն:

* *

Մի քաղաքի պատերի վերայ քաղաքային փարչութիւնը կպցնել տուեց յայտարարութիւններ հետեւեալ բովանդակութեամբ.

«Նախագգուչացնում են մութացկաններին, որ եթէ նոքա կը շարունակեն յամառութեամբ ոգորմութիւն խնդրել անցնողներից, այն ժամանակ իւրաքանչիւր այսպիսի յանցանքի համար կ'ենթարկուեն 3 ռուբլի տուգանքի: Տուգանքներից գոյացած

եկամուտը նշանակում է յօգուտ աղքատ-
ների»:

* *

Թագաւորը փողոցում պատահեցաւ մի
ծեր ուսուցչի եւ հարցրեց նորան.

— Դու ո՞վ ես:

— Ե՞ս, ասաց ուսուցիչը, ես հրամայողն
եմ ես տէրութեան գլուխն եմ:

Թագաւորը ժպտաց:

— Մի՞թէ, ասաց նա, իսկ ես մինչեւ օրս
կարծում էի, թէ հրամայողն ու տէրութեան
գլուխը ես եմ:

— Այո՛, բայց ահա՛ բանը ինչո՞ւմն է,
Ձերդ Մեծութիւն, ասաց ուսուցիչը: Ես հրա-
մայում եմ մանուկներին, մանուկները հրա-
մայում են մայրերին, մայրերը հրամայում են
իրանց ամուսիններին, եւ բանից գուրս է
գալիս, որ ամենքի հրամայողը ես եմ:

* *

Հրէայ բժիշկը շատ հուշակուած էր եւ
շատերի տներն էր այցելում, հէնց շաբաթ
օրերն էր:

Ռարբին ասաց նորան.

— Ես կասկածում եմ ձեր ուղղափառ-
լինելու մասին:

— Ինչո՞ւ, հարցրեց բժիշկը:

— Ձէ՞ որ դուք շաբաթ օրերը այցելե-
լով ձեր հիւանդներին՝ ստիպուած պէտք է
լինէք պատուէրներ (recette) գրել: Դորա-
նով դուք ոչնչացնում էք այն օրէնքը, որ
հրամայում է շաբաթ օրը ոչինչ չշինել:

— Ո, ո՛չ. հանգարտուեցէ՛ք, հայր, պա-
տասխանեց բժիշկը, պատուէրները ես միշտ
ուրբաթ օրերն եմ գրում:

* *

Մէկը մի հրէայ գրպանի-գողի բռնեց
հէնց այն րոպէին, երբ նա ձեռքը մոցնում
էր նորա գրպանը: Երկուսն էլ ոստիկանա-
րանի զինուորի հետ գնացին ոստիկանա-
րանը:

— Դուք ուզում էիք այս պարոնի գըր-
պանից հանել իւր փողի քսակը, հարցրեց
ոստիկանապետը գողին:

— Աստուած վկայ, ո՛չ, պատասխանեց
հրէան:

— Հապա ի՞նչ բան ունէք դուք սորա
գրպանումը:

— Ներեցէ՛ք, պարոն, ասաց գողը. եթէ
ես կարող եմ ձեռքս մոցնել իմ գրպանը,
ուր այս պարոնը իրաւունք չունէ իւր ձեռքը
մոցնելու. ուրեմն սորա գրպանը, ուր ինքն
էլ իրաւունք ունի ձեռքը տանելու, ես աւելի
իրաւունք ունեմ ձեռքս մոցնելու:

*
* *

Մի աւազակի գատում էին: Նորա մտա-
ւոր ընդունակութիւնները որոշելու համար
իբրեւ քննիչ հրաւիրուած էին չորս բժիշկ:

Բժիշկներից երկուսը մեղադրեալին խե-
լագար էին համարում: միւս երկուսը պըն-
դում էին, որ նա առողջ գատողութեան
տէր է:

Իսկ գատաւորը բոլոր բժիշկներին միա-
օին գատապարտեց երեք ամիս գժանոցում
նստելու:

*
* *

Երկաթուղու գնացքը թռչում է ամե-
նայն արագութեամբ: Առաջին կարգի (կը-
լաս) օթեակում նստած են՝ մի ծերունի, իւր
մատաղահաս աղջիկը եւ մի երիտասարդ:

Երիտասարդը նայում է աղջկան եւ
հաւանում է:

ԱՌԱՋԻՆ ԿԱՅԱՐԱՆ

— Դուք ամուսնացած չէ՞ք, հարցնում է
երիտասարդը ծերունու աղջկան:

— Ոչ, պատասխանում է աղջիկը:

— Ես ձեզ հաւանում եմ:

— Ես էլ ձեզ:

— Կամենում էք իմ կինը լինել:

— Այո:

— Ես կը խօսեմ ձեր հօր հետ:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՐԱՆ

— Պարոն, ես հաւանում եմ ձեր աղջը-
կան:

— Իսկ նա ձեզ:

— Նայեալէս:

— Լաւ: Ես այս րոպէին կը կանչեմ քա-
հանային, նա նստած է հետեւեալ օթեա-
կում:

Քահանան գալիս է եւ պսակի արարու-
ղութիւնը կատարում է:

ԵՐԿՐՈՐԴ ԿԱՅԱՐԱՆ

— Ես ու ձեր աղջիկը կը մնանք այս-
տեղ:

— Աստուծոյ օրհնութիւնը լինի ձեզ վե-
րայ, սիրելի որդիք:

Մերունին օթեակում մէնակ է մնում:

Գնացքը շարժւում է եւ նորապսակ աղջկայ հայրը բոլոր ուժով վազում է գէպի օթեակի յուսամուտը, գլուխը դուրս է հանում եւ ձայն է տալիս.

— Ե՛յ, պարոն, փեսան: Մոռացայ որ հարցնեմ ի՞նչպէս է ձեր աղգանունը

* *

Հասարակական պարտիզում զբօսնելիս մի երիտասարդ զգաց, որ մի օտար ձեռք մտաւ իւր գրպանը: Նա բռնեց այդ ձեռքը, հանեց իւր դատարկ քսակը եւ գողին ցոյց տալով՝ ասաց.

— Շատ կարելի է, դուք ուզում էիք լըցնե՞լ իմ քսակը:

* *

Ուսուցիչը նոր էր բացատրել շոգեկառքի շինուածքը եւ գործողութիւնը:

— Յոյս ունեմ որ հասկացաք, ասաց նա:

— Ես ամէն բան հասկացայ, ասաց մի աշակերտ. միայն մի բան չհասկացայ:

— Ո՞րը:

— Այն, թէ ի՞նչպէս է լինում, որ շոգեկառքը առանց ձիաների է շարժւում:

* *

— Ի՞նչ ես փնտռում այդ բառարանում: Ա՛նհա, հարցրեց մայրը:

— Իմ կօշիկը պատասխանեց յից տարեկան աղջիկը:

— Կօշի՞կդ:

— Այո՛: Հայրիկը երեկ ասաց որ այս գրքումը ամէն բան կարելի է գտնել:

* *

Երկու քարեկամ կէս գիշերին տուն էին վերադառնում, կողք է կողք ընկնելով: Յանկարծ նոցանից մէկը սահեցաւ եւ ընկաւ մի փոսում:

— Դէ՛հ, եղբայր, վեր քաշիր ինձ, ասաց նա իւր քարեկամին, որ գեռ եւս կանգնած էր ոտքի վերայ:

— Իսկ նա նորան պատասխանեց.

— Է՛, բարեկամ, ես քեզ վեր քաշելու ոյժ չունեմ: Բայց ցոյց տալու համար թէ որքան քեզ սիրում եմ ես պատրաստ եմ այս փոսումը քո կողքին պառկելու:

— Այս խոզը որքան արժէ:

— Հինգ ռուբլի:

— Թանկ է. տե՛ս, ինչքան լիար է:

— Աբա մէկ դու էլ այնքան ժամանակ
հիւանդացի՞ր, որքան սա հիւանդ է եղել,
դու աւելի շատ կը լղարես...:

*
* *

Այն միջոցին, երբ ժամտախօր բազմա-
թիւ կոտորածներ էր անում Վեննայում:
Ֆրանսուա կայսրը քաղաքի փողոցներում
շրջելիս հանդիպեցաւ մի ննջեցեալի, որին
մի պատգարակի վերայ գրած՝ գերեզման էին
տանում: Բայց հետը ս'չ ոք չէր գնում:

Կայսրը այս արտաքոյ կարգի պատահ-
ման վերայ զարմանալով՝ բացատրութիւն
խնդրեց եւ իմացաւ, որ հանգուցեալը մի
խեղճ սղքատ էր, որ մեռել էր ժամտախ-
օից եւ, որ իւր ազգականները վախենա-
լով՝ չէին ուզեցել նորան մինչեւ գերեզ-
մանատուն յուղարկաւորել:

Ֆրանսուան ասաց.

— Նս չեմ՝ կամենում, որ իմ սղքատ
հպատակները այսպէս առանց որեւիցէ յար-
գանաց նշանի թաղուեն:

Կայսրը մինչեւ գերեզման նսրա ետե-
ւից գնաց: Այնտեղ գլուխը բաց, ոտքի վե-
րայ կանգնած մնաց, մինչեւ որ ամէն կրօ-
նական արարողութիւնները ամբողջապէս
կատարուեցան:

*
* *

Ագահ մարդու որդին մեռաւ: Հայրը
չկամենալով գազաղի համար աւելի ծախ-
սեր անել՝ ննջեցեալը պառկեցրեց իւր նուա-
գարանի պատեանի մէջ եւ այնպէս ուղար-
կեց թաղելու:

*
* *

Մէկը ձի էր գնում: Չիու տէրը 40 ռ.
պահանջեց:

Գնողը հանեց 25 ռ. տուեց եւ ասաց.

— 15 ռ. էլ պարտքս լինի:

Չիու տէրը համաձայնեց, բայց մի քանի
օրից յետոյ գնաց մնացած փողը պահան-
ջելու:

— Չէ. այդ չեղաւ, ասաց գնողը. մեր
խօսքի վերայ հաստատ կենանք:

Նս ի՞նչ ասացի քեզ. չասացի՞, որ
մնացած 15 ռ. պարտքս լինի: Նի՞ք հիմա
վճարեմ, էլ ի՞նչպէս պարտքս կը լինի:

Ամառանոցում հիւանդի մօտ հրաւիրուած էր մի բժիշկ:

— Պարոն բժիշկ, ասաց հիւանդը, արդեօք չէ՞ք նեղանում ամէն օր ինձ մօտ դալով:

— Ո՛հ, ո՛չ. պատասխանեց բժիշկը, ես այստեղ մի հիւանդ էլ ունեմ եւ այսպիսով ես կարող եմ մի անգամից ելի՝— ճանճ պահել:

* *

Մի անգամ երբ Հենրիկոս Հէյնէն տուն էր վերադառնում, կինը հենգերորդ յարկից յանդիմանելով ասաց.

— Այսօր մի ծեր պարոն քեզ այցելութեան եկաւ. անվայել բան է՝ ստիպել այդպիսի մարդկանցը վեր ելնել այսքան բարձրութիւն:

Հէյնէն նայեց հիւրի այցատումին (ВИЗИТНАЯ КАРТОЧКА) եւ պատասխանեց կնոջը.

— Հանգստացիր, սիրելիս, այս պարոնը սորանից աւելի շատ Բաբլը տեղերումն է լինում:

Այցատումի վերայ տպուած էր «Աղեքսանդր Փոն-Հումբոլդ»:

Վարժուհին մի 6 տարեկան աղջկայ մի տիկին ընծայեց: Բայց երբ մի օր հարցրեց.

— Ո՞ւր է տիկինդ,

— Կրակը գցեցի, պատասխանեց երեսան:

— Ինչո՞ւ:

— Ի՞նչ անեմ, ասաց երեսան արտասուելով, ես նորան ասացի որ իրան սիրում եմ: Իսկ նա ինձ պատասխան չտուեց:

* *

Բաւարիայի թագաւոր Լուդովիկոսը Միլնիսենի փողոցներում զբօսնելով՝ տեսաւ մի նոր տուն, որի գեղեցիկ ճարտարապետութեանը (architecture) այնքան հաւանեց, որ ցանկացաւ տեսնել նաեւ շինութեան ներքինը:

Տանտէրը ուրախանալով թագաւորի երեւալովը իւր տան մէջ՝ շտապեց ներկայանալու մեծ այցելուին, եւ նորին Մեծու-թիւնը իսկոյն ճանաչեց, որ նա իւր արքունիքի շաքարեղէն շինողն էր (confiseur):

— Ա՛հ, ուրեմն ձեր տունն է, հարցրեց թագաւորը:

— Այո, այդպէս է, Զերդ. Մեծութիւն:

— Լաւ, տուն է. բայց մի պակասութիւն ունի:

— Կը համարձակեմ հարցնել, Զերդ. Մեծութիւն:

— Ջրին չի գիմանայ, սիրելիս, ասաց թագաւորը. չէ՞ որ իմ շաքարովն է շինուած:

* *

— Տիկին Մարկոսեանը տանն է:

— Գնաց հանգստարանը՝ իւր քրոջ գերեզմանը օրհնել տալու, պատասխանեց աղախինը:

— Շնորհ կը վերագառնայ:

— Ձգիտեմ. կարելի է, եթէ տեղը հաւանի, մնայ այնտեղ:

* *

Խեղճ մարդը մօտենալով մի ժլատ հարուստի՝ ասաց.

— Ես մի բան պէտք է խնդրէի ձեզնից:

— Ես էլ ձեզնից պէտք է խնդրէի, ասաց ժլատը. միայն առաջ դո՛ւք կատարեցէք իմ խնդիրը:

— Ուրախութեամբ, ասաց խեղճը, ասացէ՛ք, ի՞նչ անեմ:

— Ինձնից փող մի՛ք խնդրի, պատասխանեց ժլատը:

* *

Մէկը իւր բարեկամին մի նամակ գրեց եւ յետ-գրութեան (Post-Scriptum) մէջ աւելացրեց թէ. «Ներեցէ՛ք, տիկին, որ այս նամակը առանց փողակապի (halstuch) եմ գրում. անտաննի շոգ է»:

* *

Մի պրուսիացի սպայի (officier) կին գանդատում էր Ֆրեդերիկոս Մեծին՝ իւր ամուսնի անգթաբար վարուելու մասին:

— Այդ իմ գործը չէ, պատասխանեց թագաւորը:

— Բայց նա Զերդ. Մեծութեան վերայ էլ վիրաւորող կերպով է խօսում. շարունակեց կինը:

— Այդ ձեր գործը չէ, պատասխանեց Ֆրեդերիկոսը:

* *

«Փուտ» անունով մի երիտասարդ ճանապարհորդելով Արեւմտեան Անգլիայում՝

իջաւ ճաշելու մի հիւրանոցում: Պանդոկապետը ներկայացնելով նորան հաշիւը՝ ցանկացաւ տեղեկանալ, թէ նա ինչպէս հաւանեց ճաշը:

— Ես այնպէս լաւ կերայ այստեղ, ինչպէս ո՛չ ոք դեռ չէ կերել ողջ Անգլիայում: ասաց գերասանը կատակի ձեւով:

— Բացի լորդ-մերից (քաղաքագլուխ), շուտով վրաբերեց տէրը:

— Ես ո՛չ ոքի բացառութիւն չեմ համարում, ասաց զարմացած Ֆուտը:

— Այսուամենայնիւ գուք պէտք է բացառութիւն համարէք լորդ-մերին, ազադակեց պանդոկապետը սաստիկ վրդովուած:

— Բայց չառնելով մինչ անգամ՝ լորդ-մերին, պատասխանեց գերասանը շեշտելով իւրաքանչիւր խօսքը:

Վէճը հետզհետէ սաստկացաւ եւ վերջապէս պանդոկապետը գերասանին տարաւ տեղական գատաւորի մօտ: Սա լսելով երկու կողմի ասածը, ասաց գերասանին.

— Պ. Ֆուտ, գուք պէտք է գիտենայիք, որ մեր քաղաքում շատ հին ժամանակներից սովորութիւն է մնացել միշտ լորդ-մերին բացառութիւն համարել: Եւ որպէս զի գուք միշտ մտաբերէք մեր կանոնը, ես ձեզ

ենթարկում եմ մէկ շիլլինգ տուգանքի կամ հինգօրեայ բանաարկութեան: Բնորութիւնը ձեզ եմ առաջարկում...:

Զայրացած Ֆուտը վճարեց տուգանքը եւ գուրս գալով գատարանի դահլիճից, ասաց.

— Ամբողջ աշխարհում ես չեմ տեսել մէկ այնպիսի յիմար, ինչպէս այս պանդոկապետն է... Բայց լորդ-մերեց, աւելացրեց նա:

*
* *

Փլատի ազջկայ թաղումից յետոյ ծախսարարը յայտնեց մեռնողի հօրը, որ 300 ռ. ծախս է գնացել թաղման վերայ:

— Ի՜նչ էք ասում, ձայն տուեց փլատը, 300 ռուբլի... ա՛խ, երանի՜ չմեռնէր որդիս:

*
* *

Անտիգոնոս թագաւորի զինուորները իւր վրանին խիստ մօտ կանգնած՝ բամբասում էին իրան: Թագաւորը նոցա խօսքերը լսելով՝ վարագոյրը յետ քաշեց եւ ասաց.

—Գննէ մի քիչ հեռու գնացէ՞ք, որ
թագաւորը չլսի:

* *

—Մի՛ խմիր այդ գինին, որ այդպէս
ամէն քայլափոխիդ գլորում է քեզ, առաց
մէկը իւր հարբած բարեկամին:

—Ո՛չ, պատասխանեց հարբածը, գինին
մեզ չունի. ես վա՛ռ եմ ման գալիս:

* *

—Ի՞նչ բան է կինը:

—Գիւղացու համար ընկեր է, միջակ
քաղաքացու համար՝ բեռը, հարուստի հա-
մար՝ պատիժ:

* *

Դիողինէս փիլիսոփան քարոզում էր
բարկութեան վերայ: Մի ստահակ երիտա-
սարդ ուզենալով փորձել նորան՝ թքեց ե-
րեսին:

Դիողինէսը ասաց նորան.

—Քո այդ աներեսութիւնը դեռ ինձ չէ
զրգուում բարկանալու. բայց ես սորա վե-
րայ եմ տարակուսել, թէ արդեօք պէ՞տք է
որ ես բարկանամ, թէ ո՛չ:

Իտալիայի Ֆրեդերիկոս Բարբարոսա (չի-
կամօրուս) կայսրը Վիչենցա քաղաքը պա-
տերազմով առնելով՝ երկրորդ օրը պէտք է
քաղաքից դուրս գնար եւ ասաց.

—Տեսնեմ ո՞ր աստեղագէտը կարող է
գուշակել, թէ ես ո՞ր դրնից պէտք է դուրս
գնամ:

Աստեղագէտը իւր արհեստի մէջ վար-
պետութիւն բանեցնելով՝ Ֆրեդերիկոսին մի
կնքած նամակ տուեց եւ խնդրեց, որ քա-
ղաքից դուրս գնալուց յետոյ բաց անի:

Կայսրը այն գիշերը պարսպի մի կտորը
փլցնել տուեց եւ այն խրամատից դուրս գը-
նաց: Յետոյ բաց արեց նամակը եւ մէջը
կարդաց այս խօսքերը. «Կայսրը նոր դրնից
պէտք է դուրս գնայ»:

* *

Տաճիկ դատաւորը, որ 5000 ու. փող
ունէր՝ ամէն օր արկղը բանալով համարում
էր ու կրկին փակում, կարծելով թէ աշխար-
հիս երեսին ո՛չ ոք այնքան հարստութիւն
չունի:

Մէկ օր նորա մօտ երկու մարդ գնա-
ցին գանգատելու:

—Այս մարդն ինձ 5000 ռ. փող է պարտեւ չէ տալիս, ասաց գանգատողը:

—Սո՛ւտ ես ասում: աշխարհիս երեսին 5000 ռ. կայ, այն էլ իմ արկղումն է, ասաց դատաւորը եւ վերջացրեց դատաստանը:

* *

Ոլտեր Սկոտը ուսումնարանում ստահակ աշակերտ էր, միշտ կռւում էր եւ շատ սակաւ կը պատահէր, որ նա դասերը կարգար: Այս պատճառով Եգիմբուրգի համալսարանի «Դալցէլ» անունով ուսուցիչն ասում էր նորա մասին. «Յիմար եկել է. յիմար էլ կը գնայ»:

* *

Մի շատախօս իւր ծանօթի տունը շատ գնալ գալով՝ ձանձրացրել էր նորան: Մի առաւօտ էլ, երբ գնաց՝ ծանօթը իւր ծառայի բերանով ասաց որ ինքը դեռ եւս անկողնումն է:

—Վնաս չունի, ասաց եկողը, կը սպասեմ որ վեր կենայ:

—Գնա՛ ասա, որ՝ հիւանդ եմ, ասաց տէրը:

—Ասա՛ ես գեղ կ'անեմ: պատասխանեց եկողը:

—Ասա՛ որ՝ սաստիկ հիւանդ եմ:

—Ափսո՛ս, ուրեմն գոնէ վերջին բարեւտամ իրան:

—Գնա՛ ասա, որ՝ մեռայ:

—Գոնէ մի աղօթք ասեմ վերան:

ձար չկար. ներս մտաւ:

* *

Մէկը, որ սովոր էր միշտ ականջ դնել ուրիշների ծածուկ խօսակցութեանը՝ մի անգամ պատահմամբ քիթն այնպէս սաստիկ խփեց գրանը, որ շատ ցաւ զգաց:

Երբ ցաւը սաստկացաւ, նա գնաց ըլժղի մօտ, որ եւ խորհուրդ տուեց քիթը կտրել:

Լսելով այդ սարսափելի վճիռը՝ նա գրնաց արտասահման, որ այնտեղ երեւելի բժշկապետների մօտ աւելի հեշտ կերպով ազատուի այդ ցաւից:

—Արդեօք ձեր քիթը որեւիցէ բժշկիցիցից էր տուել, հարցրեց նոր բժշկապետը:

—Ի՛նչպէս չէ, պատասխանեց նա, ցոյց եմ տուել մեր բժշկապետին:

— Եւ ի՞նչ ասաց ձեզ:

— «Պէտք է կտրել» ասում է:

— Ձեր բժշկապետը ոչինչ չէ հասկանում:

— Ահ, ի՞նչպէս դուք ուրախացրիք ինձ պարոն բժշկապետ. ուրեմն չպէ՞տք է կրտրել:

— Յայտնի բան է, չպէտք է կտրել, պատասխանեց բժշկապետը, եւ կամաց մատով խփեց, վայր ձգեց խեղճի քիթը:

* *

Մի անմիթար ամառին հետեւեալ տապանագիրը շարադրեց իւր նոր վախճանուած կնոջ համար:

— «Իմ արտասուքները քեզ չեն կարող յարութիւն տալ. այս պատճառով եւ ես չեմ թափում ո՛չ մի կաթիլ»:

* *

Քուրզը, որ ամենեւին ընկուղի ծառ չէր տեսել, մի օր մի ընկուղենի տեսաւ եւ զարմանալով ասաց. «Եթէ ընկուղի ծառն այսչափ մեծ է, ձմերուկները ի՞նչքան կը լինի»:

Ողբերգութեան հեղինակը շատ տգեղ էր. եւ հասարակութիւնը միշտ ծաղրում էր, երբ նա բեմէր դուրս գալիս: Մի անգամ երբ նա դուրս էր եկել եւ ճառ էր խօսում ժողովրդի միջից լսուեցաւ.

— Ա՛յ քեզ քիթ. հապա չրթմընք: Ի՛նչ գեղեցիկ է:

Ճառախօսը չշփոթուելով՝ մօտեցաւ հանդիսականներին եւ ասաց.

— Պարոններ, կարծեմ՝ ձեզ համար աւելի հեշտ է ընտելանալ իմ գէմքին, քան թէ ինձ համար՝ փոխել իմ գէմքը:

Հասարակութիւնը ծափահարեց եւ այն օրից սկսած՝ էլ ո՛չ մի ծաղրական խօսք չըլսուեցաւ նորա մասին:

* *

Բարոն Ջեմս Ռոտշիլդը յայտնի էր ամբողջ Փարիզում իւր ժլատութեամբ:

Մի հրաւերքում յօգուտ խեղճերի փող էին ժողովում: Մի կին, որ տուփ էր շրջեցնում հիւրերի մէջ, մօտեցաւ նայնպէս Ռոտշիլդին, բայց շփոթուած լինելով՝ չկարողացաւ նկատել, որ նա էլ փող ձգեց տփի մէջ. ուստի մի քանի րոպէից յետոյ կրկին պարզեց տուփը գէպի նորան:

— Ես արդէն տուի, ասաց Աստուծոյը
դժգոհութեամբ:

— Ներողութիւն, ասաց փոք խնդրողը:
Ես հաւատում եմ ձեզ, բայց չտեսայ:

— Իսկ ես տեսայ, բայց չեմ հաւատում,
ասաց մօտի կանգնողը:

* *

Շողեկառքի օթեակում մէկը մօտեցաւ
իւր կնոջն ու հարցրեց.

— Հը՛, տեղդ լաւ է:

— Շատ լաւ է, ասաց կինը:

— Լուսամոնտից քամի չէ՞ փչում:

— Ամենեւի՛ն:

— Գռնակն էլ լաւ է փակում:

— Հիանալի՛ կերպով:

— Աւրեմն, դու գնա՛ իմ տեղը նստի՛ր:

* *

Դատարանում:

— Պարո՛ն դատաւոր, ահա՛ ձեզ մի վկայ,
որ տեսել է սորան ձին գողանալիս, ասաց
ձիւ տէրը:

— Իսկ ես 20 վկայ կը բերեմ, որոնք չեն
տեսել ձին գողանալիս, ասաց գողը:

— 20 վկան ասելի ընդունելի է, քան
1ը, վճռեց դատաւորը, եւ գողն արգարա-
ցաւ:

* *

Մի զինուոր ցանկութիւն յայտնեց մա-
կեղոնացւոյ Փիլիպպոս թագաւորի մօտ ծա-
ռայութեան մօտեցաւ, ասելով թէ՛ ինքն այն-
քան հմուտ նետաձիգ է. որ կարող է խփել
թռչունին թռչելու ժամանակ:

— Լա՛ւ, պատասխանեց թագաւորը, երբ
ես ծտերի գէ՛մ պատերազմելու գնամ, քեզ
կը կանչեմ:

* *

— Հայրիկ, ասաց որդին, ես պարտի-
զում կազամք ցանեցի, գիտե՞ս՝ ի՛նչ պո-
ւեալ:

— Յայտնի բան է, կազամք, պատասխա-
նեց հայրը:

— Այ, չ'իմացար, ասաց որդին. գոմիցը
մի խոզ գուրս եկաւ եւ բոլոր կարտօֆիլը
կերաւ:

Քահանան քարոզից յետոյ հարցրեց մի ժողովրդականի.

— Դուք ի՞նչ կ'ասեք իմ քարոզի մասին:

— Մի քիչ կարճ էր:

— Բայց, սոսաջ քարոզիչը, աւելի լաւ է կարճ, քան թէ ձանձրացուցիչ:

— Այդ այդպէս է, սոսաջ նա. բայց ձեր քարոզը երկուսիցն էլ էր:

* *

Նաւորդը առաւօտը նախաճաշում էր շոգենաւում:

— Պանդոկապետ (բուֆետյիկ), ձայն տուէջ նա, եւ ցոյց տալով մի բաժակ պղպտոր հեղանիւթ՝ հարցրեց. «Այս ի՞նչ է»:

— Կարծեմ՝ թէյ է, պարոն, պատասխանեց պանդոկապետը:

— Ա՛յ. սոսաջ նաւորդը, ուրեմն վեր առ, կորցրո՛ւ. եւ եթէ այդ թէյ է, ինձ համար մի բաժակ սուրճ բեր. իսկ եթէ սուրճ է, մի բաժակ թէյ բեր:

Պարսից գետաւանը ուզում էր կաշառել սպարտացւոյ գիւցաղն եպամինոնդասին:

Բայց նա սոսաջ.

— Բարեկամ եթէ քո թագաւորի մոագրութիւնները օգուտ են հայրենիքիս, ես առանց ընծաների կը կատարեմ: Իսկ եթէ ո՛չ, Պարսկաստանի բոլոր ոսկին ու արծաթը չեն կարող ինձ դաւաճան շինել:

* *

Մի փարիզեցի կին ամարանոցում մի տնակ ունէր, որին անուանել էր «Իմ Առողջութիւն» (Ma Santé):

— Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը, հարցըրեց նորան իւր բարեկամը:

— Առաջուայ պէս է, պատասխանեց կինը. միայն քամին մի փոքր տեղ ծածկը (կրիշայ) գլխի է:

* *

Մի անգլիական քահանայ ասում էր.

— Երեք բարեկամ ունենք, որոնց հետ միշտ պէտք է լաւ վարուենք՝ կինը, ստամոքսը եւ խղճմտանքը:

Նկարչին հարցրին.

— Ի՞նչպէս կարելի է նկարել երկու գտն-
գատաւոր, որոնցից մէկը տարել է գատը,
իսկ միւսը տանուլ է տուել:

— Ես առաջինին կը նկարէի շապկով,
պատասխանեց նա, իսկ միւսին՝ մերկ:

* *

Մի երիտասարդ հրէայ խնդրեց Ռոտ-
շիլդից նորա յիշատակարանը:

Ռոտշիլդը խօսոյն կատարեց խնդիրը եւ
հրէան նորա մի երեսի վերայ գրեց.

— Տուէ՛ք ինձ 1000 գուլդէն եւ մոռա-
ցէ՛ք ինձ:

Ռոտշիլդը կարդաց, ծեծաղեց եւ միեւ-
նոյն գրածի տակը աւելացրեց.

— Ես ընծայում եմ ձեզ 1000 գուլդէն
եւ ձեզ էլ եմ մոռանում փողն էլ:

* *

Հիւրանոցում ճաշի ժամանակ կորաւ
արծաթէ զրգալը: Ճաշողներից մէկը առա-
ջարկեց հիւրանոցի կառավարչին, որ ամենքի
գրպանները քննութեան ենթարկէ: Բայց
կառավարիչը չուզենալով զիմել այդպիսի
անքաղաքավարութեան, ասաց.

— Իրգալը առանց դորան էլ կը գտնուի:
Ես խոնարհաբար խնդրում եմ բոլոր այս-
տեղ ներկայ եղողներէդ, որ մի րոպէ գըլ-
խըներդ դնէ՛ք այս սփռոցի տակը:

Երբ առաջարկութիւնը կատարուեցաւ,
կառավարիչն ասաց բարձր ձայնով.

— Ուրեմն, պարոններ, ամենքդ զրի՛ք
ձեր գլխները սփռոցի տակը:

— Այո՛, պատասխանեցին ամենքը:

— Նա էլ, որի գրպանում գտնուում է
զրգալը:

— Այո՛, մերենայաբար ձայն տուեց գո-
ղացողը:

* *

Մի մարդ պէտք է ձիով ճանապարհոր-
դէր: Բայց այնքան շտապում էր, որ ճանա-
պարհի պատրաստութիւնը տեսնելիս ձիու
թամբը իւր միջքին կապեց եւ աշխատում էր
թամբի վերայ նստել: Իւր օխալը նա այն ժա-
մանակը նկատեց, երբ շատ չարչարուելուց
յոգնեց:

* *

— Պարոն Կարապետը տանն է, հար-
ցրեց մէկը:

— Տաննէ, բայց... ասաց ծառան շը-
փոթուած:

— Զբաղուած է:

— Ո՛չ. բայց....:

— Հրամայել է ոչոք չընդունել:

— Ո՛չ. բայց....:

— Ուրեմն ի՞նչ է պատահել:

— Նա բարեհաճեց մեռնել:

* *

Մակեդոնացւոց Փիլիպպոս թագաւորի համար բերել էին մի ամեհի ձի: Ամենափաթ ձի-հեծնողները փորձեցին, բայց չկարողացան սանձել նորան:

Նա ոտոտտում էր ու ցատկում եւ վերան հեծնողին գետին էր գլորում: Երբ ուզում էին ձին դարձնել՝ թագաւորի որդի Աղեքսանդրը խնդրեց որ իրան տան փորձելու: Ոչ մի կերպով չէին կարողանում յետ պահել նորան այդ ցանկութիւնից: Վերջապէս հայրը նորա կամակորութիւնը պատժելու համար՝ թոյլ տուեց:

Ութ տարեկան Աղեքսանդրը հեծաւ ձին, կպաւ նորա միջքին. իսկ ձին սարսափելի արագութեամբ արշաւեց: Ամենքը կարծում էին, թէ նա կորաւ: Բայց, երբ վերադարձաւ, ամենքը ստուած մնացին: Իսկ Փիլիպպոսը ուրախութիւնից լաց եղաւ եւ գրկախառնելով որդուն, ասաց.

— Արդեակ իմ ուրիշ թագաւորութիւն որոնիր. Մակեդոնիան շատ փոքր է քեզ համար:

* *

Անգլիայի մի ճանապարհի վերայ կանգնած է մի սիւն, որի վերայ գրուած է. «Այս ճանապարհը տանում է գէպի Ֆեւերշամ: Բայց եթէ դուք չէք կարողանում կարգաւ այս գրութեանը՝ աւելի լաւ է, մեծ ճանապարհով գնացէք»:

* *

Երբ Մարկիոս Կորնոլանտին աքսորանքի դատապարտեցին, նա Հռոմից դուրս գնաց, գնաց ոյոկիացւոց մօտ եւ խոտացաւ Հռոմը նոցա ձեռքը մատնել: Այդ կիացիք նորան զօրապետ նշանակեցին եւ նա մօնելով Հռոմի սահմանները՝ սկսեց աւերել երկիրը: Անպատրաստ ժողովուրդը շատ աղաչեց նորան որ ներէ, բայց իզուր:

Վերջապէս Կորնոլանտը լսելով որ գալիս են իւր մայրն ու կիներ, ընդ առաջ գնաց եւ մօտեցաւ մօրը համբուրելու: Իսկ մայրը յետ քաշուեցաւ, ասելով.

— Համբուրեիւնց առաջ ինձ ասա՛. թը-
նամու մ՞տ իմ՝ եկած, թէ՛ որդուս. այս-
տեղ, բանակիդ մէջ գերլն՞դ եմ՝ թէ՛ մայրդ:
Ի՞նչ սրտով ես աւերում այն երկիրը, որ
մեծացրեց քեզ ու սննդեց. եւ միթէ՛ ես
քեզ հայրենիքի դաւաճան ծնայ:

Այս սրտակոտոր տեսարանը, շարժեց
Կորիթլանտին. նա գրկեց իւր սիրելի մօրը
եւ արտասուելով ասաց.

— Ո՛հ, մայր իմ, դու ազատեցիր Հռոմը,
բայց որդիդ կորցրիր յախտեան:

Որովհետեւ ոյսկիացւոց թագաւորը
սպանեց նորան:

*
* *

Մի շատ տգեղ մարդ նկատեց, որ քանի
ինքը անց է կենում մի մրգափաճառի խա-
նութի առաջնից, մրգափաճառը միշտ ըսկը-
սում է ծիծաղել:

— Ինչո՞ւ իմ անց կենալու ժամանակը
դու միշտ ծիծաղում ես, հարցրեց նա մի
անգամ բարկացած:

— Ձարմանք է, պատասխանեց մրգա-
փաճառը. ինչո՞ւ դուք միշտ այն ժամանակն
էք անց կենում, երբ ես ծիծաղում եմ:

Մի լրագրի տշխատակից գնեց շաքա-
րաւազ, որի մէջ խառնեկ էին նաեւ սպի-
տակ աւազ. նա տպագրեց լրագրում հե-
տեւեալը.

— «Նա քաղաքիս մի շաքարափաճառից
շաքարաւազ գնեցի, որի մէջ կէս գրուան-
քան սպիտակ աւազ էր: Նիթէ ինձ խաբող
մարդը 24 ժամում չի բերի իմ տունը 5
գրուանքայ մաքուր շաքար, ես կը հրատա-
րակեմ նորա անունը»:

24 ժամում 5 շաքարափաճառ քաղաքի
զանազան կողմերից ուղարկեցին նորան իւ-
րաքանչիւրը 5 գրուանքայ լաւ շաքարաւազ:

*
* *

Վանդակից դուրս թռաւ գեղձանիկը,
եւ տան տիկինը նախազգուշութեան հա-
մար ամենից առաջ փակեց վանդակի դռ-
նակը, որ թռչունը բռնէ:

*
* *

Երբ Եպիրոսի թագաւոր Պիւրոսը պա-
տերազմում էր հռոմայեցւոց դէմ, նորա
զօրքի առաջնորդը Կայիոս Ֆաբրիկիոսն էր:
Պիւրոսի բժիշկը մի նամակ ուղարկեց Ֆաբ-

րիկիոսին եւ առաջարկեց, որ եթէ լաւ վարձատրէ իրան, պատրաստ է թունաւորել Պիւրոսին:

Փարրիկիոսը սրամտեցաւ այս ցած անհաւատարմութեան վերայ եւ նամակն ուղարկեց Պիւրոսին, որ տեսնէ թէ ինչ մարդկանց է հաւատում իւր կեանքը: Պիւրոսը Փարրիկիոսի վեհանձնութեան վերայ զմայլած՝ բացազանչեց.

— Աւելի հեշտ է արեգակը իւր ընթացից դարձնել, քան թէ այս հռոմայեցուն՝ արդարութեան ճանապարհից:

* *

Մի հարուստ, բայց դատարկագլու խերտասարգ ձի հեծած՝ քշում էր ուղղակի մի խեղճ մարդու վերայ: Նա վայր ընկաւ. բայց խելոյն ոտքի կանգնեց, բռնեց ձիու սանձից, խլեց ձիաւորից մտրակը եւ փորձեց նորա ճկունութիւնը տիրոջ մէջքին: Մեծ բազմութիւն ժողովուեցաւ:

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին միմեանց եկողները:

— Ոչինչ. պատասխանեց մէկը, հպտրտին ձի հեծնել են սովորեցնում:

Մի անգլիական քարոզիչ 1655 թուին մի հարսանիքում լաւ կնոջ մասին ասաց հետեւեալ խօսքերը.

— Լաւ կինը պէտք է 3 բանի նման լինի՝ բայց նոցանից ոչ մէկի պէս չպէտք է լինի: Առաջին՝ նա պէտք է լինի խիռունջի (улитка) նման՝ միշտ իւր տանը. բայց խիռունջի պէս չպէտք է ման ածի իւր միջքի վերայ իւր բոլոր ունեցածը:

Երկրորդ՝ նա պէտք է լինի արձագանգի նման եւ պէտք է պատասխանի միայն այն ժամանակը, երբ իրան են հարցնում: Բայց չպէտք է լինի արձագանգի պէս, որ միշտ վերջին խօսքն է կրկնում:

Երրորդ՝ նա պէտք է լինի քաղաքական ժամացույցի նման, միշտ նայող ժամանակին եւ կարգ ու կանոնին. բայց չպէտք է լինի քաղաքական ժամացույցի պէս, որ ամբողջ քաղաքում աղապակ է բարձրացնում:

* *

Մանրավաճառ Հրէան մի գրան մօտ մի աղջիկ տեսնելով, ձայն տուեց.

— Յ'րիորդ, գնեցէք մի որ եւ իցէ բան. հոտաւէտ ջուր, օծանելիք, կանաչի իրեղէններ...:

— Գնդատեղ ունե՞ս, հարցրեց օրիորդը:

— Գնդատե՞ղ, ունեմ: Խնջքան կուզէք:

— Հարիւր հատ:

— Հարիւր հատ. բռնեցէք ձեր փեշը, ես կը համարեմ:

Աղջիկը բռնեց փեշը եւ հրէան սկսեց ձգել նորա մէջ գնդատեղները, համարելով ամենայն արագութեամբ:

— 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8... այսօր ամսի քանի՞սն է, օրիորդ:

— 14 է:

— 14: Արդէն շուտով ամիսը կը վերջանայ ուրեմն... 15, 16, 17, 18, 19, 20: Դուք քսո՞նի տարեկան էք:

— 24:

— Այդպէս երիտասարդ գէմք ունէք եւ 24 տարեկան էք: Զարմանալի է: 25, 26, 27, 28, 29... Եղբայր է՞լ ունէք:

— Եղբայր, ունեմ:

— Քանի՞ տարեկան է:

— 35 տարեկան:

— Այդքան մե՞ծ եղբայր. 35 տարեկան... 36, 37, 38, 39... Իսկ մայր ունէ՞ք:

— Ունեմ:

— Քանի՞ տարեկան է:

— 56:

— 56... Այդքան պառաւ է եւ դեռ կենդանի է... 57, 58, 59, 60, 61...

Իսկ հայր ունէ՞ք:

— Ունեմ:

— Քանի՞ տարեկան է:

— 80 տարեկան:

— 80 տարեկան, հարցրեց հրէան զարմանալով: Այդպէս ծեր է եւ դեռ կենդանի է: 81, 82, 83, 84, 85, 86... Ես մի հայր ունէի. նա էլ այդպէս ծեր էր, 90 տարեկալեց եւ 98 երորդ տարումը մեռաւ... 99, 100, 101, 102, 103, 104, 105... Ահա ձեզ այս 5 գնդատեղն էլ ընծայ ինձնից:

Աղջիկը տուեց փողը, առաւ գնդատեղներն ու հեռացաւ:

*
* *

Մի լրագրի աշխատակից հարբած ներս մտաւ պատկերահանդ իսի գահլիճը եւ կանգնելով մի հայելու գիմացը, բացազանչեց.

— Տէ՛ր Աստուած, ի՞նչ կանոնաւոր ու ճիշտ է նկարուած այս հարբածի պատկերը: Քիթը՝ կապոյտ — կարմիր, աչքերի տակը բըշտած, մազերին ամենեւին սանր չէ գիպել:

երեսը ճմրթած... Արթեմ մի տեղ պատահել է ինձ այս ռեխը թէ՛ սրտեղ՝ միաքրա չէ գալիս:

Այս ասելով՝ նա հանեց իւր յիշատակարանը եւ նշանակեց այսպէս.

— «Զախակազմը կախումը, անյայտ հեղինակի նկարած հարկածի պատկերը շատ լաւն է»:

* *

Հաշտարար գատարանում կանչուած էր մի գող:

— Պ. գատարար, ասաց գողը, խնդրեմ՝ յետաձգէք իմ գործը՝ սրովհետեւ իմ փառտաբանը հիւանդութեան պատճառով այսօր չէ կարող ներկայանալ:

— Բայց ի՞նչ կարող է ասել ձեր փառտաբանը, բանի որ ձեզ բռնեցին գողութիւն անելիս, ասաց գատարարը:

— Բանն էլ այդ է է՝ պատասխանեց գողը, որ ինձ էլ հետաքրքիր է իմանալ թէ այդ յիմարը ի՞նչ ստեր պէտք է փչի իմ մասին:

* *

Մէկը պանդոկ մտնելով՝ մի շիշ գինի խնդրեց:

— Ե՛ր, պարոն, ձայն տուեց նա մի քիչ խմելու յետոյ՝ սրբան արժէ ձեր գինին:

— 25 կոպէկ, պատասխանեց պատասարը:

Նա հանեց գրպանից 10 կոպէկ եւ տալով պատասարին՝ շտապով դուրս գնաց:

— Բայց, պարոն, պատեցէ՛ր, ձեզ պէտք է 15 կոպէկ յետ տանք:

— Հարկաւոր չէ՛, հարկաւոր չէ՛, ասաց խմողը դուրս գնալով. այդ 15 կոպէկն էլ տար նորան, ով կը համաձայնի այդ գինին խմել:

* *

Աշխարհահանդիսում անցնելով Ֆրեդերիկոս Բ. ի եւ Նապոլէոն Ա. ի կիսարձանների մօտովը՝ գլխաւոր խօսեց ինքն իրան.

— Ի՞նչ համեստաբար թագաւորը իրան երկրորդ է անուանում եւ ի՞նչ հպարտութեամբ կայսրը իրան առաջին է անուանում:

* *

Գոսկոնացին վիճեց փարիզեցու հետ եւ բանը այն տեղը հասաւ, որ նոյա բաժանեցին միմեանցից:

— Դեհ, շնորհակալութիւն արձ բարի մարդկանցը, ձայն տուեց գաղտնացիին հեռացող հակառակորդին, եթէ ոչ ես այնպէս կը խրէի քեզ պատումը, որ՝ միայն ձեռքդ կը մնար գուրսը, որ իմ առաջ գըլհարկ վեր առնէր

* *

Կենդանիների հոլանաւորութեան հոսարակալութեան մէջ փոխ-անդամը վիճում էր անդամի հետ:

— Ասեցէք, պարոն, ձայն տուեց համբերութիւնը հատած անդամը՝ եթէ ես կենդանիների հոլանաւորութեան ընկերութեան անդամ չլինէի, ձեր երեսին մի լաւ ապտակ կը հասցնէի:

— Իսկ ես դեռ չեմ ընդունուել անդամների շարքումը, ասաց փոխ-անդամը, եւ իւր հինգ մատը գրոշմեց հակառակորդի գէմքի վերայ:

* *

Աղքեսանոր Մակեդոնացիին Տրովադայում այցելեց Աքիւլլեսի գերեզմանը, ծաղիկներ ցանեց վերան եւ բացազանչեց:

— «Երանի՜ քեզ, Աքիւլլէ՛ս, որ կենդա-

նութեանդ ժամանակ Պատրակլեսի նման ընկեր առնէիր, իսկ մեռնելուցդ յետոյ՝ Հոմերոսի նման երգիչ»:

Մի անշնորհք բանաստեղծ շողորորթելով նորան՝ ասաց:

— Սենք էլ քո գործերը պէտք է գովաբանենք:

— Ա՛ւա է Հոմերոսի երգերում Թերսիգէս լինեմ քան թէ՛ քո երգերում՝ Աքիւլլէս, պատասխանեց Աղքեսանորը:

* *

Մի երիտասարդ մինչեւ այն սատիճան նիհարացել էր կեանքի զանազան փոթորիկների մէջ, որ իւր նիհարութիւնը ծածկելու համար ստիպուած էր հագնել երկու բաճկոնակ (ֆուֆայկայ) եւ չորս զոյգ սռնապան (չուլիկ):

Նա վարձեց մի շատ առողջակազմ ծառայ: Սա առաջին անգամ հանելով իւր հարուստ տիրոջ կօշիկները՝ բնականաբար հանում էր առաջին զոյգ սռնապանը: Երկրորդ զոյգը հանելիս նա սատիկ զարմացաւ, երրորդը հանելիս մտածեց՝ մի գուցէ կախարդ է իւր նոր տէրը, Բայց երբ բանը

Հաստ: չորրորդ զոյգին, նորա համբերութիւնը հասնելով՝ ձայն տուեց:

— «Աջն ու խաչը ինձ պահապան»: Աւերջապէս պարսնն ուր եւն ձեր ստղերը:

*
* *

Յարակոյէ — Սելոյի լիցէյի ուսանողներին, որոնց թւումն էր եւ երեւելի Պուշկինը, առաջարկուած էր մի շարագրութիւն գրել «Արեւի ծագման» վերայ:

Արգէն բոլոր ուսանողները վերջացրել էին շարագրութիւնները եւ տուել էին ուսուցչին: Բայց նոցանից մէկը տրամադրուած չլինելով այգալիսի բարձր բնարանի համար՝ իւր թղթի վերայ միայն հետեւեալ տողն էր գրել:

— «Արեւ մութից գալիս է բնութեան թագաւորը»:

— Ինչո՞ւ չես վերջացնում: Հարցրեց Պուշկինը:

— Ի՞նչ գրեմ: ոչինչ միտքս չէ գալիս, պատասխանեց այդ տղի հեղինակը: Խրնդրեմ՝ օգնիր, արգէն ամենքը տուել են միայն էս եւ մնացել:

— Համեցէք, ասաց Պուշկինը եւ այսպէս վերջացրեց շարագրութիւնը:

«Եւ զարմացած բնակիչները

«Չը գիտեն, թէ ինչ անեն»:

«Պառկեն քրնե՞ն,

«Թէ վեր կենան անկողնից»:

*
* *

«Стрекоза» լրագրում տպուած էր հետեւեալ յայտարարութիւնը՝ «Շուտով լոյս կը տեսնի այս անունով մի հեղինակութիւն.— «Очеркъ Опытъ Исторіи Возникновенія Понятія объ Понятіи Возникновенія Исторіи Опытъ Очерка»:

*
* *

Փաստընր լի էր բազմութեամբ: Առաւփարիչը (dériseur) գործ եկաւ բեմի եւ յայտնեց հասարակութեանը որ հետեւեալ օրը ճիլլերի սպերդութիւնը պէտք է ներկայացուի:

— Ինչո՞ւ պիտի անունը չլիշեցիր, ասաց նորան կարգադրիչը (entrepreneur):

— Ա՛խ, այս բոլէիս, ասաց նա եւ կրկին գուրս գալով հասարակութեան առաջ՝ ձայն տուեց «Աւաղակներ»:

Հեմսթիգ գիւղում բնակող մի ազնուական իւր իրլանդացի ծառայի ձեռքով Լոնգոնում բնակող մի բարեկամի մի կենդանի նապաստակ ընծայ էր ուղարկում:

Գիւղը Լոնգոնից հինգ մղոն հեռու լինելով՝ ծառան կիսաճանապարհին մի պանդուկ մտաւ, որ յոգնութիւնը անցնի եւ մի գաւաթ գարեջուր խմի:

Մի քանի կատակասէր մարդիկ, որոնք միեւնոյն պանդուկում խմում էին, իրլանդացու պարկի միջինը խմանալով եւ ցանկանալով մի կատակ անել, նորան խօսեցնելով՝ նապաստակը պարկից հանեցին եւ նորա փոխանակ մի կատու գրին:

Իրլանդացին գարեջուրը խմելուց յետոյ պարկը վեր առաւ ու հեռացաւ: Հասնելով Լոնգոն, ընծան տարաւ տուեց իւր տիրոջ բարեկամին եւ ասաց.

— Պարոն, իմ տէրը ձեզ մի կենդանի նապաստակ ուղարկեց:

— Շատ լաւ, ասաց բարեկամը, բայց արա, տեսնեմ:

Ծառան պարկը բաց արեց եւ ապշած մնաց, երբ մէջը մի կատու տեսաւ:

— Տէ՛ր Աստուած, ասաց նա, Հեմսթի-

գումը սա նապաստակ էր, պարկումն գնելիս էլ տեսայ:

— Բանիգ գնան ասաց բարեկամը, ուղեցել են ծաղրել քեզ:

Իրլանդացին կրկին պարկը շալակեց եւ դէպի գիւղը վերադառնալիս դարձեալ մրտաւ նոյն պանդուկը եւ պատահածը պատմեց այն կատակ անողներին:

Իսկ նորա խաղը աւելի կատարեալ անելու համար պարկից կատուն հանեցին եւ տեղը կրկին նապաստակը գրին:

Իրլանդացին այնտեղից հեռանալով՝ հասաւ տուն եւ տիրոջն ասաց.

— Պարոն, գիտե՞ք, որ ձեր ուղարկածը նապաստակի փոխանակ՝ կատու էր:

— Ի՞նչ ես ասում, յիմար, պատասխանեց ազնուականը:

— Ահա՛, ձեր աչքովը տեսե՛ք, ասաց ծառան, պարկը բաց արեց եւ նապաստակը գուրս ցատկեց:

* * *

Կանգաս — Սխալում մի դերձակի խանութի ճակատին կախ էր արած մի յայտագիր (վիվեսկայ), որի վերայ միայն մի չափազանց մեծ խնձոր էր նկարուած:

—Այս ի՞նչ գարմանալի յայտագիր ու-
նէք դուք: Հարցրեց մէկը գերձակին:

—Հապա ի՞նչ պէտք է անէինք գեր-
ձակներս: Եթէ մեր նախամայր Յւան խնձոր
չառաջարկէր Ագամին, պատասխանեց գեր-
ձակը:

*
* *

Փրանսիական «Figaro» լրագիրը մի քա-
նի անգամ իւր յարձակմունքների պատճա-
ռով նկատողութիւնների ենթարկուելով՝ քիչ
մնաց, որ դադարէր: Խմբագրի գլխումը մի
համարձակ ու տարօրինակ միայր ծագեց: այն
է՝ խնդիր մատուցանել Աւագովիկոս-Նա-
պոլէոնի նորածին արքայսրդուն եւ փրկու-
թիւն գտնել թագաւորական օրօրոցի մէջ:

Նամակը ներփակուած էր ծրարում հե-
տեւեալ մակագրով.

—«Նորին Բարձրութեան թագաժա-
ռանգ արքայսրդուն, Տիւրիւն պալատում
սեղհական ձեռքը»:

Կայսրը կարգալով մակագիրը՝ «Սեպհա-
կան ձեռքը» խօսքերի վերայ յանկարծ ծի-
ծաղեց ու կանգ առաւ: Նթէ սպասէր, որ
նամակը բաց անէ նա՛, ում ուղղուած էր,
չառ երկար կը տեւէր. այս պատճառով

կայսրն ու կայսրուհին խորհուրդ արին եւ
ասացին իրանց մէջ, որ ծնողները կարող են
կոտորել կնիքը, չզիպչելով բազարաւարու-
թեան կանոնին:

Նամակը կարգաւորեցաւ եւ խմբագրի
խնդիրը կատարուեցաւ:

*
* *

Մի հեղինակ ցանկանալով խմանալ թէ
հասարակութիւնը ինչպիսի տեղ է տալիս
իրան բոլոր միւս հեղինակների շարքում:
մտաւ կիսարձանների (buste) վաճառանոցը,
որտեղ մի երկայն սեյանի վերայ շարուած
էին աւագութեան կտրգով՝ Քիմոն, Թի-
էրը, Վիկտոր, Հիւգօն եւ նուցա ետեւից 50ի
չօսի երկրորդ կտրգի հեղինակներ:

—Ի՞նչ արժէ այս կիսարձանը, հար-
ցրեց հարցասէր հեղինակը, ցոյց տալով իւր
կիսարձանը:

—Մէկ ուրիշը գնեցէք, իսկ այդ ձրիա-
բար կը տանք ձեզ, պատասխանեց վաճա-
ռանոցի տէրը:

*
* *

Աղեքսանդր Մակեդոնացին Հնդկաստան
արշաւած ժամանակը բռնեց հնդկացի թա-

գաւոր Պոլիրոսին, որ մինչեւ վերջին շունչս
առիւծարար իւր դէմ կռուելուց յետոյ՝ անձ-
նատուր եղաւ:

Ազեքսանդրը հիանալով նորա վայել-
չակազմ հասակի, գեղանի դէմքի եւ ազնիւ
շարժումներին վերայ՝ հարցրեց.

— Ի՞նչպէս ես կամենում որ վարուեմ
քեզ հետ:

— Ինչպէս թագաւորի հետ, պատաս-
խանեց Պոլիրոս:

— Եւ ուրիշ ոչինչ չե՞ս ուզում հար-
ցըրեց կրկին Ազեքսանդրը:

— Արդէն ամէն բան պարունակում է
առաջին պատասխանիս մէջ, ասաց Պոլիրոսը:

Ազեքսանդրը ոչ միայն վերագարծրեց
նորան իւր իշխանութիւնը, այլ եւ ուրիշ
երկրներ էլ տուեց:

* *

Դատաւորը կասկածելով վկայի ստորա-
գրութեան ճշտութեան վերայ, շատ դժուա-
րանում էր վճիռ կայացնել: Իսկ փաստա-
քանը, որ հաստատ համազուած էր, որ ստո-
րագրութիւնը կեղծ է, հարցրեց վկային.

— Դուք կարո՞ղ էք գրել «Վարապետ
Մարտիրոսեանց»:

— Յայտնի բան է, կարող եմ պատաս-
խանեց վկան:

— Ուրեմն, շուտով այս թղթի վերայ
գրեցէք ձեր տնունը:

Վկան գրիչը ձեռքն տռաւ եւ նորա
մատները երկար ժամանակուայ սովորու-
թեամբ շարեցին «Գրիգոր Վարդանեանց»:

* *

Ազախինը ցանկանալով առուտուրի մէջ
փոքր ինչ գողութիւն անել, իւր տիրուհուն
այսպիսի հաշիւ ներկայացրեց.

1 գրուանքայ ալ, գրուանքան	1՝ 2 կո-
պէկով	2 կոպէկ,
1 հաց 1 կոպէկով	2 կոպէկ.

ընդ ամէնը՝ 4 կոպէկ:

* *

Ֆրեդերիկոս Մեծի պալատական քահա-
նան մեռաւ եւ նորա տեղը թագաւորը նոր
քահանայ էր որոնում: Թագաւորը յայտա-
րարեց, որ ինքը առաջուց կամենում է վերա-
հասու լինել այդ տեղը ցանկացող քահա-
նայի արժանաւորութեանը, որի համար եւ
նա պէտք է առաջարկի իւր ցանկացած բնա-
քանը, իրրեւ քարոզի նիւթ:

Այդ լրի տարածուելուց յետոյ շուտով մի քահանայ պատրաստահանութիւն յայտնեց թագաւորի առաջարկութիւնը կատարելու:

Նկեղեցում պատրաստեալ աւարտելուց յետոյ յիշեալ քահանան կանգնեց քարոզչի տեղը եւ թագաւորի թիկնապաշտերից մէկը առեց նորան մի ծրար, որի մէջ պէտք է ամփոփուած լինէր նորա քարոզի բնարանը:

Քահանան կտրեց կնիքը, բայց արեց ծրարը. բայց մէջը սխնչ չգտաւ: Ասկայն նա չգիտէր, այլ ծրարը առաջ մի կողմը շրջելով, յետոյ միւս կողմը, առայ:

— «Սիրելի ժողովուրդ, այստեղ սխնչ չկայ, այստեղ էլ սխնչ չկայ. բայց Աստուած ամէն բան սչնչից ստեղծեց»:

Եւ մի գեղեցիկ ատենարանութիւն արեց աշխարհի ստեղծագործութեան վերայ:

* *

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Դուք գիտէ՞ք, որ հայրս շատ աղաւնի ունէր:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ լաւ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, լաւ չէ. նորա վշապընում էին մեր տանիքը:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ վատ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, վատ չէ. հայրս սրպանեց բոլորը եւ հրամայեց, որ տապակեն:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ լաւ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, լաւ չէ. հայրս կերտեւ ստամբսալաւով մեռաւ:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ վատ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, վատ չէ. նա մեռաւ եւ ինձ համար մեծ հարստութիւն թողեց:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ լաւ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, լաւ չէ. ես չգիտեմ թէ ինչ անեմ իմ հարստութիւնը:

ՕՐԻՈՐԴԸ: Այդ վատ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Ո՛չ, վատ չէ. ես առաջարկում եմ բաժանել ձեզ հետ:

ՕՐԻՈՐԴԸ: Ահա, այդ լաւ է:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ: Եթէ լաւ է, ուրեմն գլխանք ձեր մօր մօտ: Գիտէ՞ք, օրիորդ, ես յանկարծ սիրտ չափի ձեզ տեսիլու:

Մէկին ասացին.

— Ինչո՞ւ դու բազանիք չես գնում:

— Ախիսենում եմ մի գուցէ ժամացոյցս կորչի այնտեղ, ասաց նա:

— Կարծեմ, դու երբէ՛ք ժամացոյց չես գործածում:

— Հէնց այդ է պատճառը, որ չեմ գործածում: Եւ վախենում եմ որ բազանիքում մոռանամ ու կորչի:

*
* *

Մի մօտենագիր, որ Ֆրանսիայում տրւաւորութիւններ էր ժողովում իջաւ մի հիւրանոցում: Երեսնայնորեք տարեկան մի աման արգանակի (bouillon) համար երկու ֆրանկ առան: Նա ոչինչ չասաց. բայց հետեւեալ քաղաքից գրեց հիւրանոցի տիրոջը.

— «Ձեր արգանակը շատ լաւն էր, բայց մի քիչ թանկ էր»: Որովհետեւ նամակի ծրարի վերայ գրուած էր, որ հասցէի տէրը (adressant) վճարէ, ուստի հիւրանոցի տէրը վճարեց նամակի ծախսը եւ ծիծաղեց այս կատակի վերայ:

Մի շաբաթից յետոյ Բորդոյից եկաւ երկրորդ նամակը, որ գրուած էր ուրիշ ձեռքով (պոչերկ), բայց առաջին քաղաքապարա-

կան յանդիմանութեամբ: Հիւրանոցի տէրը յօնքերը կնճռեց:

Մի ամսից յետոյ եկաւ նորա մօտ մի ահագին ծրար (պոսիլիայ), որի ճանապարհածախսի համար հարկաւոր էր վճարել 20 ֆրանկ: Նա բաց արեց արկղը եւ մէջը գտաւ անպէտք թղթերի մի ահագին կոյտ միեւնոյն երգով. «Ձեր արգանակը շատ լաւն էր. բայց մի քիչ թանկ էր»:

Այսպէս, ճանապարհորդ մօտենագիրը 10 տարուայ ընթացքում աշխարհի ամեն կողմերից նամակներ ու ծրարներ էր ուղարկում հիւրանոցի տիրոջը:

*
* *

Մի կոմսուհի հարցրեց Տալէյրանին.

— Դուք ո՞ւմն էք աւելի հաւանում. ի՞նձ թէ՛ տիկին Դին:

— Երկուսից էլ հաւասարապէս, պատասխանեց Տալէյրանը, չվիրաւորելով կոմսուհուն:

— Բայց եթէ մենք երկուսս էլ մի անգամից գետն ընկնէինք. խոստովանեցէ՛ք, առաջ ո՞ւմն կ'ազատէիք. Դ. ի՞ն:

— Յայտնի բան է, պատասխանեց Տա-

լէյրանը, ես կարծում եմ որ գուք աւելի
լաւ էք լսողում քան թէ՛ նա:

* *

Մի անգլիական քահանայ բարձրանալով
ամբիոնը, սկսեց իւր ատենաբանութիւնը
հետեւեալ բնաբանով. «Ես եմ հովիւն բարի»:
Բայց մի հայեացք ձգելով ժողովրդի բազ-
մութեան վերայ՝ այնպէ՛ս շփոթուեց, որ
ստիպուած էր մի քանի անգամ կրկնելու
«Ես եմ հովիւն բարի»:

Լիւտերը, որ նստած էր նորա մօտ,
համբերութիւնը հատնելով, վերջապէս ձայն
տուեց.

— Դու ի՛նչ հովիւ ես, դու բարի ոչ-
խար ես:

Եւ նորան իւր տեղը նստեցնելով՝ ինքը
բարձրացաւ ամբիոնը եւ այդ բնաբանի վե-
րայ մի հիանալի ատենաբանութիւն արեց:

* *

Մի հարբած մարդ փողոցով անցնելիս,
այս այն կողմն էր ընկնում եւ յանկարծ դի-
պաւ մի տան երկաթէ վանդակին. նա կանգ-
նեց զարմայմամբ: Մի քանի քայլ փոխելուց

յետոյ կրկին դիպաւ վանդակին. մի քիչ էլ
առաջ գնաց, գարձեալ դիպաւ ու բարձրա-
ձայն աղաղակեց:

— Ի՛նչ ես բղաւում ասաց նորան մի
անցորդ:

— Ի՛նչպէս չբղաւեմ, ինձ վանդակա-
պատ բանտն են գրել, պատասխանեց հար-
բածը:

* *

Մի վարդապետ հիւր ընկաւ Ոլտերի
ժօտ Ֆերնէյեան կալուածքում եւ միտք ու-
նէր երկու երեք շաբաթ նորա մօտ մնալու:
Բայց որովհետեւ նորա խօսակցութիւնը իւր
շարագրութիւնների մասին շատ էր ձանձ-
րացնում Ոլտերին, ուստի փիլիսոփային
շատ անտանելի էր թւում նորա ներկայու-
թիւնը:

Առաջին օրը, ինչպէս եղաւ, Ոլտերը
գիմացաւ. հետեւեալ օրը նա խօսք բաց ա-
րեց նորա ճանապարհորդութիւնների մասին
դէպի Իտալիա ու Հոլլանդիա, եւ յանկարծ
առաջարկեց նորան հետեւեալ հարցը.

— Բայց գիտէ՞ք, հայր սուրբ, ի՛նչ զա-
նազանութիւն կայ ձեր եւ Դոն-Քիշոտի

մէջ... — Ձանազանութիւնը այն է, որ Գոն-Քիշտին բոլոր հեւրանոցները ամբողջ էին թւում իսկ դուք ընդհակառակը՝ բոլոր ամբողջները հեւրանոց էք համարում:

Վարդապետը հետեւեալ օրը ճանապարհ ընկաւ:

* *

Մի չքաւոր մարդ գնաց թատրոն, որտեղ ներկայացրած պիէսը նորան ամենեւին դուր չեկաւ: Թատրոնից վերադառնալիս նա գնաց իւր հարուստ բարեկամի տունը:

— Բարով, ո՞րտեղից ես գալիս այս փամանակ, հարցրեց բարեկամը:

— Թատրոնից, պատասխանեց նա:

— Ի՞նչպէս էր. լա՛ւ ներկայացում էր:

— Ո՛չ, սաստիկ ձանձրացուցիչ էր:

— Ուրեմն ինչո՞ւ վաղ դուրս չեկար:

— Հա՛, ձեզ պէս հարուստների համար՝ ոչինչ, բայց ես, գիտէ՞ք, ինչ գոժաւարութեամբ էի վատտակել տոմսակի փողը, առաց հիւրը:

* *

Գինեսէր հաշտարար դատաւորը մէկի տանը հրաւիրուած լինելով՝ բաւական հարբեց: Հիւրերից մէկը կամենալով նորա վերայ

զուարճանալ, մի արծաթէ դրգալ դրեց նորա գրպանը:

Հետեւեալ օրը, երբ դատաւորը իւր տանը արթնացաւ՝ պատահամբ ձեռքը գրպանը տարաւ: Հանեց դրգալը եւ զարմանալով բացաճանչեց:

Այդպէս զարմանալով իւր արարմունքի վերայ՝ նա վերջապէս գնաց դատարանը, որտեղ ներկայացրին նորան մի մարդ, որին մեղադրում էին, ասելով թէ մի տեղ հրաւիրուած է եղել եւ գողացել է տանտիրոջ արծաթէ դրգալը:

Մի քանի հարցմունք տալուց յետոյ՝ վերջապէս շփոթուած դատաւորը հարցրեց.

— Ո՞ւմ տանն էիք հրաւիրուած:

— Մարկոսեանցի տանը, պատասխանեց կեղծ գողը:

— Գնացէ՛ք, գնացէ՛ք, ասաց դատաւորը, ձեզ ներելի է: Մարկոսեանցի գինին այնպիսի գինի է, որ մարդ նորա տանը անպատճառ գողութիւն կ'անի...:

Ես ենքս երեկ հրաւիրուած էի նորա տանը եւ այնքան խմեցի նորա անպիտան գինին, որ ստիպուած էի նոյնպէս գողանալու նորա արծաթէ դրգալը:

Նկատերինա կայսրուհին Ոլտերին ընծայ ուղարկեց մի փղոսկրեայ տուփիկ, որ ինքն էր շինել: Ոլտերը սորան պատասխանելու համար շուտով իւր քրոջ աղջկանից ձեռագործի գասեր առաւ եւ կայսրուհուն ուղարկեց իւր ձեռքով գործած մետաքսէ սունապանի սկսուածքը մի հիանալի ոտանաւորով, որի մէջ բանաստեղծը ասում էր.

— Ստանալով կնոջից կնոջ ձեռքով շինած տղամարդու գործը, խնդրում եմ Ձերգ Մեծութեանը, որ ընդունէր տղամարդուց տղամարդու ձեռքով շինած կանացի գործը:

* *

Գիւղումը գոմէշներ էին կռուեցնում: Շատերը ժողովուել էին՝ հանդիսատես լինելու: Մի տաճիկ բէկ վազեց մտաւ ամբոխի մէջ, տեսաւ որ կռուողները գոմէշներ են, ասաց.

— Ե՛հ. ես կարծեցի թէ ագաղաղներ են կռուեցնում:

* *

Պրիսլօ պատմաբանը ասում էր.

— Մարգոս ռանի՝ հոգի, մարմին ու կայք. եւ սոցանից իւրաքանչիւրի վերայ մի մի վը-

տանգ կայ: Հոգուն սպառնում են փարիսեյիք. մարմինն՝ բժիշկները եւ կայքին՝ փաստաբանները:

* *

Դատաւորը հրամայեց, որ յանցաւորի քիթը ծակեն ու խեղտեն կախաղանի վերայ:

— Պ. դատաւոր, ասաց դատապարտուածը. իմ քիթը երկու ծակ ունի. երբորդը աւելորդ է. տես, սււմ քիթը մի ծակ ունի, նորանը ծակել տուր:

* *

Մէկ իշխան, որ ներկայ էր հարցաքննութեանը, մօտեցաւ պրոֆեսորին եւ ասաց.

— Թոյլ տուէ՛ք շնորհակալութիւն անելու ձեզ այն բոլոր բանի համար, ինչ որ ես գիտեմ:

— Օ՛հ, իշխան, պատասխանեց պրոֆեսորը. միթէ արժէ այդպիսի չնչին բանի համար շնորհակալութիւն անել:

* *

Երբ Զոնտրենիլ գրաքննիչ (censeur) գարձաւ, նորան ներկայացրին մի ձեռագիր, որի տպագրութիւնը նա արգելեց:

— Ի՞նչպէս, ասաց նորան հեղինակը

գուք ինքներդ գրեցիք «Պատգամախօսները»
եւ արգելում էք այսպիսի բան:

Փոնտրները սառնասրտութեամբ պա-
տասխանեց.

— Եթէ «Պատգամախօսների» գրաքըն-
նիչը ես լինէի, ամենեւին թոյլ չէի տալ
նորա տպագրութիւնը:

* *

Գողը մի գլխարկ էր գողացել եւ ու-
զում էր ծախել: Բայց նորանից էլ գողա-
ցան եւ նա դատարկաձեռն տուն գնաց:

— Ի՞նչ գնով ծախեցիր գլխարկը, հար-
ցրեց նորան իւր կինը:

— Հէնց իմ առած գնով, պատասխա-
նեց գողը:

* *

Հարսանիքում հիւրերից մէկը առանց
երկար մտածելու մօտեցաւ սպասաւորին
(laquais) եւ ասաց.

— Շնորհ արէք խնդրեմ ինձ հետ պա-
րելու:

— Շատ շնորհակալ եմ պատասխանեց
սպասաւորը:

— Ուրեմն. կարո՞ղ եմ յոյս ունենալ:

— Ո՛չ. ես այս րոպէիս տիկնանց չոր
միրգ պէտք է բաժանեմ:

* *

Մէկը ճանապարհի պատրաստութիւն
տեսնելով՝ ցանկանում էր իւր ոսկեղէնը
պահ տալ մի զրացի կնոջ, որին համարեա
չէր ճանաչում:

— Դուք ո՞ր կենդանուցն էք աւելի վա-
խենում, հարցրեց նորան:

— Մկնից, պատասխանեց նա:

— Նշանակում է, ձեր խիղճը մաքուր
է: Բայց աւելի ո՞ր կենդանին էք հաւանում:

— Շունը:

Ճանապարհորդը առանց երկար մտա-
ծելու տուեց նորան իւր ոսկեղէնը, համա-
զուած լինելով, որ չի կորչի: Եւ չսխալուեցաւ:

* *

Մէկը հասնելով Պետերբուրգ, այցելեց
իւր համաքաղաքացուն եւ ի միջի այլոց յի-
շեցրեց, որ արգէն 15 տարի է, որ իրան
10 ռ. է պարտ:

Պարտապանը իսկոյն վճարեց պարտքը

եւ հանելով պահադանից մի գիրք, տուեց նորան ասելով.

— Լաւ միտքս եկաւ. վեր առէք այս գիրքն էլ, որ ինձ տուել են ուսումնարանումը իբրեւ մրցանակ լաւ յիշողութիւն ունենալու համար: Դուք աւելի էք արժանի այս մրցանակին, քան թէ՛ ես:

* *

Լուգոյիկոս ԺԴ. մի ոտանաւոր գրեց եւ կամենալով ուրիշի կարծիքն իմանալ՝ ցոյց տուեց մի մարաջախտի (maréchal) եւ ասաց.

— Վարդացէ՛ք, եւ դուք կը տեսնէք, որ ձեր կեանքումը այգւիսի ցնորը կտրգացած չէք լինի: Սկսած այն ժամանակից, երբ իմացան, որ ես ոտանաւորներ եմ սիրում բերում են ինձ մօտ ամէն յիմար բան:

— Ձերդ Մեծութիւն, ասաց մարաջախտը կարգալուց յետոյ, ճշմարիտ որ այսպիսի յիմար ոտանաւոր իմ կեանքումն չեմ կարգացել:

— Հեղինակի ուղեղը խանգարուած պէտքէ լինէր, այնպէս չէ՞, ասաց թագաւորը ծիծաղելով:

— Յայտնի բան է, այդպէս է:

— Ա՛խ, ի՛նչ ուրախ եմ, որ դուք այդ-

պէս անկեղծաբար յայտնեցիք ինձ ձեր կարծիքը. որովհետեւ այս ոտանաւորը իմ սեպհական աշխատութիւնն է:

— Ներողութի՛ւն, թագաւոր, թո՛յլ տուէք նորից կարգամ, ես շատ շտապեցի:

— Ոչ, ո՛չ, մարաջախտ, պատասխանեց թագաւորը. աւելի լաւ է մնալ առաջին կարծիքի վերայ. առաջին դատողութիւնը ամենից ճիշտն է:

* *

ՏԷՐԸ: Աստեանեմ ի՞նչպէս հաւանեցիր թատրոնը:

ԾԱՌԱՆ: Ինչո՞ւ չէ. լաւ էր: Փառաւոր լուսաւորուած էր, զգեստները գեղեցիկ, բազմութիւնը լիքը:

ՏԷՐԸ: Բայց գերասանների խօսածները հաւանեցի՞ր:

ԾԱՌԱՆ: Ի՛հ, ո՛վ գիտէ՛ ի՛նչ են ասում: ամէն մարդ իւր գործի վերայ է խօսում: Ի՛նչ իմ գործն էր նոցա ասածներում խառնուիլը:

* *

Մոլլան արտի մի ծայրում «աղան էր

տալիս»։ յետոյ վազում էր միւս ծայրը՝ ա-
կանջ էր դնում։—Հարցրին նորան։

—Ի՞նչ ես անում։

—Ասում են, որ իմ ձայնը հեռուից
շատ քաղցր է լսւում։ փորձեւում եմ պա-
տասխանեց մոլլան։

* * *

Անգլիական հոգեւորականները սովորա-
բար իրանց գրպաններում ազօթագիրք են
պահում եւ բաւական սէր ունեն խմիչքների
հետ։

Մի հասարակութեան մէջ, որտեղ ներ-
կայ էին 10 քահանայ, մի կոմս կամենալով
հիւրերին զուարճացնել, գրաւ գրեց իւր
խօսակցի հետ, ասելով թէ ներկայ եղող
քահանաներից ո՛չ մէկի գրպանում ազօթա-
գիրք չի գտնուի։—Այս նպատակով նա
դիտմամբ մի կրօնական խնդիր յարուցեց,
որի ստուգութեան համար ազօթագիրք հար-
կաւորուեցաւ։ Խնդրեցին ազօթագիրք, եւ
յիրաւի ո՛չ մի քահանայի մօտ չգտնուեցաւ։

Փոքր ժամանակից յետոյ կոմսը կրկին
գրաւ գրեց, որ ներկայ եղող բոլոր քահա-
նաները կ'ունենան շշի խցահաններ։ Մա-
ռան խրատուած լինելով՝ դիտմամբ մի

գինու շիշ ձեռքին ներս մտաւ բազմութեան
մէջ եւ խցահան խնդրեց։

Իսկոյն բոլոր քահանաները մի մի խը-
ցահան հանեցին իրանց գրպաններից ու
դէմ արին ծառային։

* * *

—«Թանկագիրն Մարիամ», գրում էր
երիտասարդը իւր հետ նշանուածին։

—Ի՞նչպէս է թանկագին, հարցրեց նո-
րան բարեկամը։ արգեօք այն պատճառով,
որ դու նորան շատ ես սիրում։ Թէ՛ այն
պատճառով, որ նա քեզ թանկ է նստում։

* * *

Ժլատը շտապում էր գէպի ննջեցեալի
տունը։ Մանօթը ճանապարհին հանդիպելով
հարցրեց։

—Ո՞ր կողմն ես այգպէս շտապում։

—Այտեղ մեռել է իմ ծանօթներից
մէկը, որին ես պարտ էի 800 ռ., պատաս-
խանեց Ժլատը։ եւ ահա՛ գնում եմ վեր-
ջին պարտքս տալու։

* * *

Մի մարդ ասում էր։

—Սէրը մի շատ զարմանալի զգացմունք

է: Երբ ես ամուսնացայ, սիրուցս ուզում էի կնոջս ուտել, իսկ այժմ ավստոսում եմ, որ այն ժամանակը չկերայ նորան:

* *

60 տարեկան այրի կինը երկրորդ անգամ պսակուում էր մի 25 տարեկան երիտասարդի հետ: Ամենքը ծաղրում էին այս ամուսնութիւնը. պսակող քահանան էլ իւր քարոզի համար այսպիսի բնաբան ընտրեց.

— «Տէր Աստուած, ներիր սոցա: որովհետեւ չգիտեն թէ ինչ են անում»:

* *

— Ի՞նչ բան է կինը:

— Կինը ըստ Լեսինգի տիեզերքի օրինակիլի արտագրութիւնն է. իսկ ըստ Կալգերոնի՝ աստուածներին վայել մի հիանալի կերակուր է, եթէ միայն սատանայի ձեռքով չէ համեմուած:

* *

— Երբ պէտք է ամուսնանալ, հարցրին Ուտերին:

— Երիտասարդ ժամանակը՝ շատ վաղ:

պատասխանեց նա՝ իսկ ծերութեան ժամանակը՝ շատ ուշ:

* *

ԵՐԻՏԱՍԱՐԳԸ: Ա՜խ, օրիորդ, ես ձեզ սիրում եմ վերին աստիճանի ջերմ սիրով:

ՕՐԻՈՐԴԸ: Բայց ո՞ր ջերմաչափով. Ռէօմիւրի, թէ՞ Յելսիուսի:

* *

Մոլլայ-Նասր-Էդգինը փողոցով անցնելիս նկատեց, որ ազրիւրի բերանը փայտով խցել ծածկել են. մօտեցաւ, հանեց փայտը եւ ջուրն սկսեց մեծ արագութեամբ թափուիլ մոլլայի վերայ:

— Անպիտան, ասաց մոլլան, հէնց այդ խենթ-խենթ վազելուդ. համար է, որ բերանդ փայտով փակել են է՛...:

* *

Արիստոտելի աղջկան հարցրին.

— Դոյների մէջ ո՞ր գոյնը աւելի գեղեցիկ է:

— Այն գոյնը, որ ամօթխածութիւնից

է առաջ գալիս, պատասխանեց փիլիսոփայի ազջիկը:

*
* *

Մի մարդ, որ ամենեւին թատրոն չէր գնացել, մի անգամ մտաւ թատրոն, որտեղ ներկայացնում էին «Ottelo»: Գերաստը իւր դերը կատարելիս բեմից մի քանի անգամ կրկնեց «Թաշկինակ»: Անճանօթը որ մեծ ուշադրութեամբ ականջ էր դնում յուսահատուելով դերասանի «Թաշկինակ» կրկնելուցը, գոչեց բարձր ձայնով.

— Դուք շարունակեցէք ձեր դերը. մենք առանց Թաշկինակի կը սրբենք մեր քիթը:

*
* *

Պրանսիայի մատենագիր տաղանդաւոր Վէյլը ծնուեցաւ Էյլզաստում. եւ, ինչպէս ինքը պատմում է, մանկութեան օրերում խողեր ու կովեր էր արածեցնում: Մի լրագրի կրիտիկոս Վէյլի սրախօս գրչի դէմ զայրացած՝ իւր ֆելիէտոնում նորան անուանեց Էյլզասցի եւ ակնարկում էր նորա նախկին արհեստի վերայ:

— Այո, ողորմած տէր, պատասխանեց Վէյլը, ես խողեր ու կովեր էի արածեցնում:

Իսկ եթէ դուք լինէիք արածեցնելիս, հաւատացած եմ, որ մինչեւ հիմա էլ արածեցընելիս կը լինէիք:

*
* *

Մի լիանցի հարստ, բայց աւելորդապաշտ մարդ «Ախաարը» նայել տուեց, որ իմանայ թէ՛ ինքը երբ պէտք է մեռնի. եւ բոլոր ունեցածը կերաւ վերջացրեց, կարծելով թէ աստեղագետի գուշակած ժամանակից աւելի չպէտք է ապրի: Խեղճը այնչափ աղքատացաւ որ ստիպուեցաւ մուրալով ապրել, եւ այսպէս էր աւտում:

— «Ողորմեցէք խեղճիս, որ կարծածիցս աւելի երկար ապրեցայ»:

*
* *

Հռչակաւոր Տաւրիկեան-իշխան Պստեմ-կինը, որ Ղրիմը մի քանի ուրիշ քաղաքներով միացրեց Ռուսաստանին, Օչագովի պատերազմական բանակում լսելով, որ Մուկուլայում բնակում է մի մեծ յիշողութեան տէր պաշտօնաթող զինուորական, մարդ ուղարկելով՝ նորան իւր մօտ հրաւիրեց:

Զինուորականը անհանգիստ սրտով եւ

ուրախ յուսով մտաւ իշխանի վրանը եւ տեսաւ, որ նա տօնացոյցը ձեռքին՝ պառկած է անկողնում:

— Զշմարի՛ւ է, ասաց իշխանը նորան, որ դուք բոլոր սրբոց տօները անգիր գիտէք:

— Այո՛, Ձերդ Պայծառապայլութիւն, պատասխանեց զինուորականը:

— Ո՞ր սուրբի տօնն են կատարում մայիսի 18-ին, շարունակեց իշխանը նայելով տօնացոյցին:

— Թէ ոգոտոս նահատակի տօնը, պատասխանեց զինուորականը:

— Այդպէս է: Իսկ սեպտեմբերի 29-ի՞ն:

— Արժանապատիւ Նիրիակինի տօնը:

— Ուղիղ է: Իսկ փետրուարի 5-ի՞ն:

— Ագափիա նահատակի տօնը:

— Ուղիղ է, ասաց Պատեմիկինը ծածկելով տօնացոյցը, շնորհակալ եմ որ նեղութիւն կրեցիր, եկաք: Արող էք վերագառնալ Մոսկուա, եթէ կամենաք, հէ՛նց այսօր:

* *

Պատկուելուց յետոյ 10 տարի անցաւ, որ Պետրոսեանցը ունեցաւ անդրանիկ որդին. եւ ինքը ուրախութիւնից շփոթուած՝ ման էր գալիս սենեակում:

Այդ միջոցին տան դուռը բաղխեցին: Զոպասելով որ ծառան գնաց դուռը բանալու, ինքը հասաւ, բաց արեց:

— Պ. Պետրոսեանցին նամակ եմ բերել, ասաց մի անծանօթ:

— Բայց որին, «չգիտեմ», թէ՛ հօրը, ասաց շփոթուած հայրը:

* *

Լուգովիկոս Ժ. ի սրամիտ ծաղրածուն մի անգամ թագաւորի ընթրելու ժամանակ գտնուելով սեղանատանը, աչքը չէր հեռադնում ափսէի մէջ դրուած տապակած կաքաւներէից: Թագաւորը այդ նկատելով ասաց.

— Այս ափսէն Դոմինիկոսին տուէ՛ք:

— Ի՞նչպէս, թագաւոր, կաքաւներն էլ հետը, ասաց ծաղրածուն:

Թագաւորը գուշակելով կատակի միտքը՝ ասաց.

— Այո՛. կաքաւներն էլ հետը:

Այս ճարտար սրախօսութեամբ Դոմինիկոսը ստացաւ զուտ ոսկէ ափսէն կաքաւներով:

* *

Շոտլանդիայի Ինյոբէէնս քաղաքում մի քանի բարոսի ջերմ երկրպագու փճեցին

այլ եւս չյաճախել նորա տաճարը: Մի անգամ, երբ այդ ուխտի անգամները ժողովուած էին մի տեղ, նոցանից մէկը՝ ճառախօսեց հետեւեալ կերպով.

— «Բարեկամներ, սորանից երեք ամիս առաջ ես ժողովարարութեան խօսք տուի:

(Հասարակութիւնը ծափահարում է:)

Մի ամսից յետոյ իմ գրպանումը կար մի ոսկի (փող), որ ինչքան մտաբերում եմ, առաջ չէր պատահում: (Բարձրաձայն ծափահարութիւն): Դարձեալ անցաւ մի ամիս եւ ինձ վերայ երեւեցաւ մի լաւ վերնազգեստ, որի անունը անգամ չկար առաջ: (Աստիկ ծափահարում են:) Դարձեալ անցաւ երկու շաբաթ, եւ ինձ համար գնեցի մի դագաղ: (Այս խօսքերի վերայ ունկնդիրները սառեցան փայտ դարձան): Դուք զարմանում էք, բարեկամներ, շարունակեց ճառախօսը, եւ հարցնում էք, թէ ես ինչո՞ւ գնեցի դագաղը...: Ես դագաղը գնեցի՝ հաստատ համոզուած լինելով, որ այն ինձ կը հարկաւորուի, եթէ գարձեալ երկու շաբաթ հաստատ մնամ տուած խօսքիս»:

Զանազան բանաստեղծութիւններից կազմուած մի գիրք լոյս տեսաւ հեղինակի

կենդանագրով: Մի կրիտիկոս այսպիսի կարծիք յայտնեց դորա մասին:

— «Մի բանաստեղծութիւնները կարգայ, չի ցանականայ նայել հեղինակի կենդանագրին. եւ ո՞վ կենդանագիրը տեսնի, բանաստեղծութիւնները չի կարգայ»:

* * *

Վաշուածատէրը պարծենում էր, որ իւր անտառում արձագանգը 10 անգամ է կրրկրնում: Մի քանի հոգի ցանկացան ստուգել նորա ասածները. ուստի փորձը յետաձգուեց հետեւեալ օրուան:

Տուն վերադառնալով՝ կայսրածատէրը կանչեց իւր ծառային.

— «Կարծեմ՝ դու ամէն բանում չտա՞ս ես, Գրիգոր. կարո՞ղ ես արձագանգ ներկայացրնել»:

— Ի՜նչպէս չէ, պարոն, ասաց ծառան, դուք ասացէք է՛յ, խնդրե՛ք ես էլ կը գտնեմ է՛յ:

Տէրը հրամայեց ծառային, որ առաւօտը թագնուի անտառում լճակի մօտ եւ 20 անգամ աստիճանաբար ակարացող ձայնով կրկնէ այն, ինչ որ ձայն կը տան:

Հետեւեալ օրը հարցատէր մարդիկը ժողովուեցան անտառում:

Տէրը բարձր ձայնով գոչեց.

— Այստե՞ղ ես գու:

— Ժամի իննից սկսած, պատասխանեց արձագանգը:

*
* *

Լոնգսնից գէպի Դոււր տանող երկաթուղու վերայ մի քանի օթեակ գուրս ընկան երկաթագծերից (րէյս) եւ ճանապարհորդներից 10 հոգի զոհ գնացին այդ թըշուառութեանը. նոցա թուումներ եւ՝ այն լորդի ծառան, որ գնում էր առաջին կարգի օթեակում:

— Կառավար, ձայն տուեց լորդը՝ գըլուխը գռնակից գուրս հանելով. ո՞ւր է իմ ծառան:

— Աւա՛ղ, պարոն, չորս կտոր է եղել: Ի՞նչ էք կամենում անել:

— Տուէ՛ք ինձ այն կտորը, որի վերայ գտնուում է իմ ճամբրուկի (չեմոզան) բանալին, ասաց լորդը:

*
* *

Մի ֆրանսիացի կոմս ցանկացաւ, որ իւր հարսանիքի պատճառով Փարիզը ճրա-

գալոյց անելու (illumination) փոխանակ՝ նշանակուած գումարով մարդու տայ մի քանի խեղճ աղջիկ:

Լսելով այս մարգասիրութիւնը՝ մի 16 տարեկան աղջիկ նոյնպէս գնաց գրուելու:

— Իայց ո՞վ է ձեր փեսայացուն, հարցրեց քաղաքագլուխը:

— Փեսայացուն...: Ես փեսայացու չունեմ, պարզութեամբ պատասխանեց աղջիկը:

Ես կարծում էի, թէ փեսան էլ թագաւորական պէտք է լինի:

Եւ յիշաւի քաղաքը նորա համար փեսայացու ընտրեց:

*
* *

Պիշերով ստառիկ անձրեւ էր գալիս եւ տանտէրը խնդրեց հիւրին, որ գիշերը իրանց տանը մնայ: Հիւրը համաձայնեց. բայց յանկարծ անյայտացաւ սենեակից եւ մի ժամից յետոյ վերագարձաւ բոլորովին թրջուած:

— Ո՛ւր էիր, Պէ՛որդ, հարցրեց զարմացած տանտէրը:

— Մեր տուն գնացի, պատասխանեց նա, որ կնոջս յայտնեմ թէ անձրեւի պատճառով ես չեմ կարող տուն գնալ:

Մի շատախօս կենջ համար գրեցին հետեւեալ տապանագիրը.

— «Այստեղ հանգստանում է տիկին Բ. որ Ը-է 1864 թուի օգոստոսի 10-ին:

* *

Պատերազմից յետոյ մի խումբ տաճիկ գերիներ մի տաճիկ աստիճանաւորի հսկողութեան տակ ուղեւորուեցան գէպի Նաշա: Ճանապարհին գերիները իրանց առաջնորդի խորհրդով յարձակուեցան մի փոքրիկ խումբ կողակների վերայ, ջարդեցին նոցա եւ ցիր ու ցան փախան: Բայց շուտով ձերբակալուեցան եւ ուղարկուեցան Պոտեմկինին: Իշխանը կանչելով տաճիկ աստիճանաւորին, ասաց.

— Ի՞նչ կ'անէր ձեր գլխաւոր վեզիրը ռուսներին, եթէ նոքա էլ անէին այնպէս, ինչպէս դու արիր:

— Մեր գլխաւոր վեզիրը կը հրամայէր կտրել ռուս աստիճանաւորի գլուխը, պատախանեց տաճիկը գողգոջուն ձայնով:

— Իսկ ես ներում եմ քեզ, ասաց Պոտեմկինը:

Պարսից բանաստեղծ Համեդին մի անգամ լոգարան էր գնացել, թամերլանի եւ միւս պալատականների հետ: Հասարակութիւնը զրպուած էր սրախօսութիւններով, եւ փոզով գնահատում էին իւրաքանչիւր ներկայ եղողին:

— Ես քեզ գնահատում եմ 30 ասպր, ասաց բանաստեղծը թամերլանին:

— Աւելի չէ, ասաց նա. 30 ասպր միայն իմ երեսորրից արժէ:

— Ես քեզ էլ երեսորրից հեռ եմ հաշուում պատախանեց Համեդին:

* *

Զորերօրեայ պաշարումից յետոյ թաթարաց Բենդերեան ամրոցները անձնատուր եղան Պոտեմկինին, որ նորա մօտին յայտնեց Նկատերինա կայսրուհուն հետեւեալ ստանաւորով. —

«Nous avons pris neuf lançons
Sans perdre un garçon.
Et Bender avec trois pachas
Sans perdre un chat».

Հայերէն

«Մենք առանք իննը նաւ.
«Առանց մի երեխայ կորցնելու».

«Եւ Բենդերը երեք փաշայով՝

«Առանց մի կատու կորցնելու»:

* * *

Ծառան տալիս է իւր տիրոջը թատրոնի
տոմսակներ:

— Ինչո՞ւ երեքն ես առել, ասաց տէրը,
ես քեզ ասացի, որ մի բազկաթուռ վեր առ-
նես:

— Ահա՛ բանը ինչո՞ւմն է, ասաց ծառան.
երեք ռուբլանոց տոմսակները բոլորը ծա-
խուած են. այդ պատճառով ես վեր առայ
երեք հատ մի ռուբլանոց տոմսակ. էլի միեւ-
նոյն է:

* * *

Առաջինը: Ասում են, այս տարի խոտ
ու գարման քիչ կը լինի:

Երկրորդը: Քեզ ի՞նչ. միթէ վախենում
ես, որ քաղցած մեռնես:

Առաջինը չգիտէր, թէ արդեօք այս
պատասխանով վերաւորուի՞, թէ՛ ո՛չ:

* * *

Մի երիտասարդ թղթախաղում իւր
բոլոր ունեցածը տանուկ տալով՝ ջուրն ըն-

կաւ խեղտուեցաւ: Նորա գիակը հանել էին
ցամաքը: Մի մարդ այն տեղ այսպէս էր
խրատում իւր որդուն.

— Տեսնո՞ւմ ես, որդեակ. թղթախաղը
ամենավատ պարապմունքներից մէկն է: Այո
մեռած դիակը կենդանի ապացոյց է ասա-
ծիս:

* * *

Պրոֆեսորը հարցաքննում էր ուսանո-
ղին ժանտախտով վարակուած մարդուն
բժշկելու մասին: Ուսանողը մոտճում էր եւ
ձայն չէր հանում:

— Դէհ, ասաց պրոֆեսորը, եթէ դուք
ունենայիք մի ժանտախտով վարակուած հի-
ւանդ, ի՞նչ կ'անէիք, որ նա լաւ քրտնէր:

— Կ'ուղարկէի ձեզ մօտ հարցաքննուե-
լու, պատասխանեց ուսանողը:

* * *

— Ինչպէս կ'ինը քեզ ձեռնտու չէ, աս-
աց կ'ինը իւր ամուսնուն. լաւ կը լինէր, որ
ինձնից աւելի վատթար կ'ին ընտրէիր քեզ
համար:

— Շատ լաւ կը լինէր. բայց որ չկա-

բողացայ ճարե՛ր... պատասխանեց ամուսինը:

* *

Մի մարդու պարտատէրերը մի գիշեր ետեւից էին ընկել, որ բռնեն ու բանտարկեն: Երբ այն խեղճն էլ մի փողոցից միւսն էր փախչում, նորա առաջեւ մի գույ գուրս եկաւ:

— Կամ քսակդ տո՛ւր, կամ կեանքդ, ասաց:

— Կեանքս ան, ազատուեմ, պատասխանեց նա, որովհետեւ եթէ քսակումս 5000 ռ. ունենայի. ես այսպէս չէի փախչի պարտատէրերիցս՝ տունս տեղս երեսի վերայ թողած:

— Իրա՛ւ, ասաց գողը. այդ չգիտէի, ներիր, պարո՛ն. ահա քեզ իմ արած սխալմունքիս փոխարէնը:

Այս ատելոյ, նա 1000 ռ. գրեց խեղճ մարդու գրպանը եւ հեռացաւ:

* *

Մոլլայ-Նասր-է-գզինը իրանց տանը ճաշի էր նստած: Յանկարծ ներս մտաւ գրացին:

— Ի՞նչ նոր լուր ունե՛ս, հարցրեց մոլլան:

— Մեզ մի էշ ծնուեցաւ, բայց պոչը շատ կարճ է, պատասխանեց գրացին:

Մոլլան սաստիկ տրամեցաւ: Երբ գրացին գուրս գնաց, կիներ հարցրեց.

— Մոլլայ, ինչո՛ւ այդպէս տրամեցար. ի՞նչ անենք, որ իշի պոչը կարճ է:

— Ե՛հ, դու էլ ոչինչ չես մտածում, պատասխանեց մոլլան. եղաւ որ մի անգամ այն էշը ցեխն ընկաւ, պոչը որ կարճէ, ի՞նչ տեղից պէտք է բռնենք, որ ստքի կանգնեցնենք նորան:

* *

1789 թուի պատերազմում Պոտեմկինը պաշարելով մի ամրոց, ղեսպան ուղարկեց նորա վերայ իշխող փաշային, որ առանց արիւնհեղութեան անձնատուր լինի: Սպասելով մի գոհացուցիչ պատասխանի՝ նա պատրաստեց մի փառաւոր հացկերոյթ, որտեղ հրաւիրուած էին բոլոր ժեներալները եւ իշխանի մերձաւոր անձինք (suite): Իշխանի հաշուին նայելով՝ ղեսպանը պէտք է վերադառնար ճաշի ժամանակը: Բայց նա չէր երեւում: Իշխանը ճաշի նստեց շատ վատ

տրամագրուած. ոչինչ չէր ուտում միայն իւր սովորութեան պէս եզունդներն էր կրծոտում եւ անգաղար հարցնում, թէ արդեօք գետպանը չէ՞ գալիս:

Հացկերոյթը վերջանալու վերայ էր եւ Պոտեմկինի համբերութիւնը հետզհետէ հատնում էր: Վերջապէս ներս վազեց մի թիկնապաշ եւ յայտնեց, որ գետպանը գալիս է:

— Շուտ, շուտ, այստեղ բերէ՛ք նորան, աղաղակեց իշխանը:

Մի քանի րոպէից յետոյ գետպանը շրնչասպառ ներս մտաւ եւ իշխանին մի նամակ տուեց: Նամակը նոյն վայրկենին բացուեցաւ. բայց աւանդ տաճկերէն էր գրուած: Նո՛ր յուսահատութիւն:

— Շուտով թարգման կանչեցէ՛ք:

Եկաւ թարգմանը:

— Ա՛ռ, կարգա՛ւ եւ ասա՛ շուտով, ամբողջ անձնատուր է լինում թէ՛ ո՛չ:

Թարգմանը առաւ նամակը, կարգաց, շուրսմուր տուեց, նայեց, բայց ո՛չ մի խօսք չարտասանեց:

— Դե՛հ, ասա՛ շուտով, ամբողջ անձնատուր է լինում թէ՛ ո՛չ, բացաքանչեց իշխանը ռաստիկ զարմացած:

— Ի՞նչպէս յայտնեմ՝ Զերդ. Պայծառափայլութեանը, սառնութեամբ պատառխանեց թարգմանը. ես ո՛չինչ չեմ հասկանում: Ահա՛, բանը ինչո՞ւմն է: Տաճկերէն լեզուում կան այնպիսի բառեր, որ երկունշանակութիւն ունեն՝ դրական եւ բացասական, նայելով՝ թէ նոցա վերայ կէտ գրուած է, թէ ո՛չ: Այս նամակումն էլ կայ մի այդպիսի բառ: Եթէ այս բառի վերայ կէտը գրչով է գրուած, նշանակում է՝ ամբողջ անձնատուր չէ լինում իսկ եթէ այդ կէտը ճանճն է գրել, նշանակում է ամբողջ անձնատուր է լինում:

— Է՛հ, յայտնի բան է, ճանճն է նստել, բացաքանչեց Պոտեմկինը եւ խօսոյն եւ եթ սեղանի դանակով քերելով կէտը՝ հրամայեց որ շամպանեան գինի բերեն եւ առաջին անգամ ինքը առաջարկեց կայսրուհու կենաց բաժակը:

Երկու օրէց յետոյ ամբողջ անձնատուր եղաւ:

* * *

Մի առաքինի մարգու խնդրեցին, որ ներկայանայ մի ժողովում եւ դատէ մի մարգու, որին դատապարտում էին, որ-

պէս թէ ծանր յանցանքում: Առաքինի մարդը եկաւ, առնելով իւր հետ երկու ծակ տոպրակ՝ աւաղով լցրած, մէկը՝ մեծ, միւսը՝ փոքր: Գրեց ուսի վերայ՝ մեծը ետեւից մէջքի վերայ կախեց. իսկ փոքրը՝ առաջեւը, պարանոցից: Այգպէս մոտ ժողովր:

— Ի՞նչ է նշանակում այդ հարցրին նորան ամէն կողմից:

— Մէջքիս կապած մեծ տոպրակից թափուածը իմ մեղքերն է, ասաց նա, որ ես չեմ տեսնում: Իսկ առաջեւ կապած փոքր տոպրակից թափուածը՝ իմ եղբօր պակասութիւնն է, որ տեսնում եմ:

Այս լսելով՝ ժողովականք ամօթահարուած դուրս գնացին:

* * *

Հարուստ ժլատից մէկը օգնութիւն էր խնդրում:

— Սիրելի բարեկամ, ասաց ժլատը. եթէ փող չ'ունես՝ դու չես կարող ապրել. իսկ եթէ չես կարող ապրել, ի՞նչ հարկաւոր է քեզ փողը: Ուրեմն, բանից դուրս է գալիս, որ եթէ փող չ'ունես, փողի հարկաւորութիւն էլ չ'ունես:

Պատեմկին իշխանը իւր կեանքի վերջին օրերում՝ մինչեւ այն աստիճան յաղեցաւ խնջոյքներով ու քաղցր ուտելիքներով, որ միայն թթու կաղամբը, աղ դրած վարունքը եւ հաճարէ հացն էր բաց անում նորա ախորժակը:

Մի քաղաքում բնակիչները սպասում էին իշխանի գալուտեանը, որ մի շատ կարեւոր գործի համար խնդիր ներկայացնէին: Գիշերով երեւեցաւ Պատեմկինի կառքը, բնակիչները շրջապատեցին նորան. բայց նոցա տարաբախտութիւնից իշխանը նիրհում էր եւ հրամայել էր, որ անհանգիստ չանեն իրան եւ չիջեւանեն քաղաքում:

Այսպիսի գոռար գրութեան մէջ լինելով՝ բնակիչները գիմեցին իշխանի մարդկանցից մէկին, որ եւ նոցա արտասուքից սրտաշարժուած՝ յանձն առաւ գործը կարգադրել:

Երբ Պատեմկինը բարկութեամբ հարցրեց.

— Արդեօք շուտով կը պատրաստուին ձիաները, այն պարտաւորուած մարդը ասաց.

— Հէնց այն րոպէիս. եւ յետոյ որպէս թէ իրանից՝ աւելացրեց հառաչելով. բայց

որ գիտենաք, թէ ի՞նչպիսի կազմմբ, ի՞նչպիսի հաց կայ այստեղ...:

Իշխանը յանկարծ վեր ցատկեց ու ասաց.

— Ո՛ւր է, եղբայր, բեր այստեղ:

Մի ակնթարթում քաղաքացիք մծտ տա-
րան կազմմբն ու հացը եւ նոցա հետ էլ
խնդիրը: Իշխանը ճաշակեց, գովեց հացն
ու կազմմբը, ուշադրութեամբ քննեց քա-
ղաքացիներն խնդիրը եւ իրաւացի գտնելով
այն՝ այնտեղ եւ եթ կատարեց խնդրուածը:

* * *

Ֆրանկլինը միտ ուտելը մեղք համարե-
լով՝ բանջարեղէն էր ուտում: Մի անգամ
ովկիանոսի վերայ նաւաւարելիս նաւաստի-
ները մի ձուկ բռնեցին ու կտրտեցին: Ֆրանկ-
լինը կտրտած ձկան փորումը ուրիշ մանր
ձկներ տեսնելով՝ բացազանչեց.

— Դու մանր ձկներին ուտում ես, հա՛,
ուրեմն, ես էլ քեզ կ'ուտեմ:

* * *

Երկաթուղու կայարանում, շոգեկառքի
երկրորդ կարգի օթեակը ներս մտաւ մի

հրէայ եւ նստեց: Նա իւր հետ բերել էր
նա՛ եւ մի պղնձէ կոնք եւ մի փոքր սափո-
րով ջուր:

Գնացքը շարժուեցաւ: Հրէան կոնքը
գետնին գրեց, մէջը ջուր լցրեց, հանեց կո-
շիկները եւ ոտքերը գրեց կոնքի մէջ:

Օթեակում աղմուկ բարձրացաւ:

— Այս ի՞նչ զզուելի բան է, ձայն տուին
ամէն կողմից, ո՞ր է իմացել օթեակում ոտ-
քեր լուսնալ...: Ո՛ւր է կառավարը: Ան-
չեցէք կառավարին:

Կառավարը եկաւ:

— Պ.կառավար, ձայն տուեց մի ճա-
նապարհորդ, խնդրեմ՝ հրամայեցէք այս
պարոնին, որ ոտքերն իրան քաշէ. անտա-
նելի է նայել այս տեսարանին:

— Ձե՞ կարելի, որ հանէք ձեր ոտքերը
ջրից, հագնէք կոշիկները եւ գուրս թափէք
այս ջուրը, ասաց կառավարը գառնալով
գէպի հրէան:

— Ներեցէ՛ք, պ. կառավար, թող տուէք,
որ այսպէս նստեմ:

— Ձե կարելի: Օթեակում ոտքեր լուս-
նալը արգելուած է: Տանն էլ կարող էք լուս-
նալ:

— Պ.կառավար, Աստուած վկայ, ես

ոտքերս չեմ լուսնում: միայն այսպէս պահում եմ ջրումը:

— Զէ՛ կարելի չէ՛, հանեցէ՛ք ոտքներդ: Հրէան բարձրացրեց ոտքերը՝ կոնքի մէջ պահած:

— Թո՛ղ տուէ՛ք ինձ, որ այսպէս կենամ որովհետեւ ուրիշ տեսակ չէ կարելի:

— Ինչո՞ւ չէ կարելի:

— Որովհետեւ միայն միք բարկանայ լսեցէք, ինչ որ ասում եմ ձեզ: Այսօր մեր շաբաթն է, եւ օրէնքով արգելուած է շաբաթ օրով տեղ գնալ երկաթուղով: Ինչքան միայն կարող ենք ջրով գնալ: Այսպէս, երբ ես ոտքերս ջրումն եմ պահում, միեւնոյն է թէ՛ ջրի վերայ եմ ճանապարհորդում: Շնորհ տւէք, թո՛ղ տուէք, որ այսպէս նստեմ:

()Թեակում յանկարծ ծիծաղ բարձրացաւ. եւ հասարակութիւնը խնդրեց կառավարին, որ թո՛ղ տայ հրէային այդ գրութեան մէջ մնալ:

*
* *

Երբ Կարոլոս Ե. կայսեր եւ Ֆրանցիսկոս Ա. թագաւորի մէջ պատերազմ բացուեցաւ, կայսրը գութս Բուրբոնին իւր գործիք շինեց: Երբ այս գութսը գործը գլուխ հա-

նեց ընդգէմ իւր թագաւորի՝ եւ գնաց կայսեր մօտ, կայսրը նորան արտաքուստ շատ պատուով ընդունեց: Բայց երբ հեռացաւ, մարդ ուղարկեց եւ խնդրեց կայսրին, որ իւր պալատականներից մէկի տունը իրան տան բնակելու:

Կայսրը այսպիսի պատասխան ուղարկեց նորան.

— Այդ խնդիրը ես չեմ կարող չկատարել: Բայց Բուրբոնի գութսը թո՛ղ իմացած կենայ, որ այդ տնից գութս գալուն պէս ես պէտք է այրել տամ այդ տունը. որովհետեւ ես պղծուած եմ համարում այն տունը, որտեղ պէտք է բնակի նորա նման մատնիչը եւ անուանարկը:

*
* *

Տուրգաու Օպոլ ազգանունով մի շվեյցարացի, որ սաստիկ տաճկասէր է՝ (տուրկոֆիլ) իւր երեք որդիքը մկրտելիս անուանեց՝ Կոնստանդին, Աղբիան եւ Ֆիլիպ: Ուրեմն նոյա ազգանունն է՝ Կոնստանդին-Օպոլ, Աղբիան-Օպոլ եւ Ֆիլիպ-Օպոլ:

*
* *

Մեծ-պատի առաջին շաբաթը մի զինուոր սաստիկ հարբեց եւ չկարողանալով գիմա-

նալ այս աշխարհում գնաց գէպի յաւի-
տենականութիւն: Նորա եղբայրն էլ, որ նորա
հետ միասին միշտ հարբում էր, տեսնելով
իւր եղբոր յանկարծահաս մահը՝ ձեռք վեր
առաւ խմիչքներից:

Երկրորդ շաբաթը նա գնաց եկեղեցի եւ
հաղորդուելուց առաջ՝ խոստովանում էր
քահանայի մօտ: Քահանան սկսեց համոզել
նորան, որ կայ հանգերձեալ կեանք եւ ա-
սաց, որ միւս կեանքումը մենք ամենքս կը
տեսնուենք միմեանց հետ:

— Ուրեմն, տէ՛ր հայր, ասաց խոստո-
վանօղը, ես է՛լ կը տեսնուեմ եղբորս հետ:

— Յայտնի բան է, կը տեսնուէք, պա-
տասխանեց քահանան:

— Օ՛հ, բացագանչեց զինուորը, ես լաւ
գիտեմ՝ նորա բնաւորութիւնը. եղբայրս չի
համբերի, էլի կը սկսենք հարբել:

* *

Երբ Նապոլէոնին ասացին թէ իւր
բանակը չէ կարող յառաջ գնալ, որովհե-
տեւ Ալպեան լեռները անցնելը անկարելի
է, պատասխանեց.

— Է՛լ Ալպեան լեռները չլէտէ լեռն:

«Անկաշէլ»ն մէկ այնպիսի բառ է, որ միայն
յիմարների բառարանումն է գտնուում:

* *

Մօտ ժամանակներումս վախճանուած
Դը-Լինի (De-Ligne) իշխանազունի (prince)
պապը 1870 թուին իւր որդեքերանցից մէ-
կին ընծայեց մի ընդարձակ կալուածք եւ
Բողուր ամրոցը Էնոյի շրջակայքում: Բայց
որովհետեւ իշխանազունը ամենեւին չէր
ցանկանում որ ի վնաս միւս որդեքերանց՝
վարձատրէ այս որդուն, ուստի գրեց մի հա-
կակտակ (контръ-завѣщаніе), որով ոչըն-
չացնում էր առաջին իսկական կտակը:

Վերայ հասաւ յեղափոխութիւնը (ré-
volution) եւ Դը-Լինի գերգաստանք շատ
նշանաւոր թղթեր կորցրեց: Այդ միջոցին
վարձատրուած իշխանի ազջիկը ամուսնա-
ցաւ մի վեհգրիացի ազնուականի: Սա պա-
հանջում էր, որ իրան համարեն կտակի ժա-
ռանգօղը: Եւ գինէոս Դը-Լինի իշխանա-
զունը բոլորովին հրաժարուեցաւ այդ առա-
ջակիութիւնը կատարելուց. եւ այստեղից
ահա՛ գատ սկսուեցաւ:

Իզուր հաւատացնում էին, թէ հակա-
կտակ կայ, իզուր էր վկան յայտնում, թէ

ինքը իւր աչքովն է տեսել այդ կտակը: Իշխան Նը-Լինի տանուլ տուեց գատը:

Մի անգամ իշխանը գիշերով բնած էր Բողուր ամրոցում: Նա երազ տեսաւ, որ պէս թէ ման է գալիս ամրոցումը, որից գուցէ շուտով պէտք է զրկուի: Նա մըտնում է ամրոցի մի առանձին բաժանմունքը, որի գոյութեան մասին ամենեւին տեղեկութիւն չուներ. եւ այնտեղ տեսնում է մի կողպած արկղ: Այդ արկղի մէջ գտնում է հակակտակը, որ այնքան երկար որոնելով՝ ոչ մի տեղ չէին կարողանում գտնել:

Իշխանազունը՝ զարթելով՝ բնականաբար մտածում էր, որ այդ երազը իւր մտատանջութեանց հետեւանքն էր եւ նորան ոչինչ նշանակութիւն չտուեց: Բայց շուտով այդ անցքից յետոյ նորան այցելեց իւր ամրոցի գննապանը, որ գանգատում էր, թէ իւր բնակարանը փոքր է գալիս իրան, մանաւանդ, որ իւր բնտանիքը առաջուանից աւելի մեծացել է:

— Ես հաւատացած եմ, որ՝ ասում էր ծեր ծառան, եթէ իմ բնակարանի մի պատը վեր առնուի, այն ժամանակ այդ պատի եւ արտաքին պարսպապատի մէջ տեղում բա-

ւական տեղ կը բացուի, որով կարելի կը լինի մեծացնել բնակարանս:

Իշխանը համաձայնեց եւ հետեւեալ օրը ձեռք տուին գործին:

Բայց սրբան զարմացաւ նա, երբ գործին նայելու գնացած ժամանակը քանդուած պատի ետեւում եղած տեղը յիշեցրեց նորան այն տեղը, որ տեսել էր երազում: Սա մի գահի ճի նման տեղ էր, որի մէջ տեղում գրուած էր արկղը:

Բնիկան արկղի վերայ բաց արին եւ իհնչ: Նորա մէջ գտան հակակտակը:

Իշխանը վճռաջնջական դատարանում տարաւ գատը:

* *

Մի ժլատի հարցըին.

— Մի՞թէ, յիրաւի, գուք ոչ մի կողէկ չէք տալիս աղքատին:

— Ո՛չ, չեմ տալիս, պատասխանեց նա:

— Բայց ինչո՞ւ չէք տալիս:

— Որովհետեւ կատարում եմ աւետարանի այն խօսքը, որ ասում է. « Մի անիր ուրիշին այն, ինչոր չես ուզում որ ուրիշները քեզ անեն: » Իսկ ես ամենեւին չեմ ուզում որ ուրիշները ինձ սղորմութիւն տան:

— Ինչո՞ւ կարելի է չափել կնոջ խելքը:
— Նորա շրջագգեստի պոչով (շէյֆ):
Որքան երկայն է պոչը, այնքան կարճ է նո-
րա խելքը:

*
* *

Փարիզի մի գատարանում քննուում էր
մի գողի գործ: Իսկ գողը մեղադրեալի նըս-
տաքանի վերայ նստած ժամանակը դատար-
կում էր իւր փաստաբանի գրպանը:

*
* *

Մէկը ներս մտաւ հիւրանոցը՝ մի բա-
ժակ լաֆիտ (գինի) խնդրեց ու դրեց ա-
ռաջը: Բայց խմելուց առաջ՝ նա հանեց մի
ծխախոտ եւ սկսեց ծխել: Իսկոյն գրսից մի
ձայն լսուեցաւ, որ նորան կանչում էր:

Նա մի թղթի կտորի վերայ մատիտով
գրեց. «Նա մէջը թքեցի», ծածկեց թուղթը
բաժակի վերայ եւ դուրս գնաց:

Բայց ի՞նչ. երբ վերադարձաւ, տեսաւ
որ իւր գրածի տակը մի անյայտ ձեռք ա-
ւելացրել է. «Նա է՛լ թքեցի»:

*
* *

Ռուբիոս անուհնով մի երեւելի մարդ հը-
րամայեց, որ իւր գերեզմանի վերայ այսպիսի
տապանագիր գրեն.

— «Այս մարդը իւր էննինա անուհնով
կնոջ հետ ապրել է 43 տարի եւ 8 ամիս.
եւ ո՛չ մի անգամ չէ կռուել հետը»:

*
* *

Իշխան Մենշիկովը յաճախ այցելում
էր Պետերբուրգի կրկէսը (ցիրկ): Մէկ ան-
գամ գնաց այնտեղ ու հարցրեց դռնապա-
նին.

— Այսօր ի՞նչ են ներկայացնում:

— «АХВЫ», Զե՛րգ. Պայծառափայլութիւն,
պատասխանեց դռնապանը:

— Ի՞նչպէս թէ «АХВЫ», նո՞ր պիէս է.
ի՞նչ է. երեկ ներկայացրին «Взятіе Ах-
ты на Кавказѣ»:

— Այո, միեւնոյն պիէսն է. բայց ես
ի՞նչպէս կարող եմ համարձակել Զերգ Պայ-
ծառափայլութեանը տեսիլու «АХТЫ»:

*
* *

Հիւրը քաղցած փորով դուրս գնաց ժը-
լատի տնից: ժըլատը նորան ճանապարհ ձը-
գելով՝ հարցրեց.

— Մէկ էլ ե՞րբ շնորհ կը բերէք մեր տուն:

— Իմ կարծիքով, ամենայարմար ժամանակը հիմա է, պատասխանեց հիւրը:

* * *

Մի փրանսիացի՝ ասաց մի խաղանայու:

— Փարիզում սակաւ է պատահում օյն-պիտի սառնամանիք, որ կոնեակը (խմիչք) ռառչի յարկով շրջապատուած շշերում:

— Նո գորա վերայ ամենեւեւ չեմ զարմանում, պատասխանեց խաղանային, որովհետեւ Խաղանիայում շատ սատոիկ ցրտեր է լինում: Մի գիշեր թատրոն գնալիս շտապելուց ես մոռացայ մամը հանգցնել: Տուն վերադարձայ եւ ի՜նչ տեսնեմ: մամի բոցը սառել էր:

* * *

Տան տէրը ճաշի էջ նստած: Ներս մը տաւ մի ծառայ եւ եփած ձկներով մի աման գնելով սեղանի վերայ՝ ասաց:

— Պ. Գրիգորեանցը ուղարկեց ձեզ համար:

— Սպասիր, ձայն տուեց տան տէրը: միթէ այդպէ՞ս պէտք է կատարես քո պարտականութիւնը... Արի՛, գու՛ նստիր իմ

տեղը եւ փոխենք մեր զերերը: Նստե՛ղ կը սովորեցնեմ որ միւս անգամ աւելի քաղաքաւորի լինես:

Յետոյ ծառան բաղմեց աթոռի վերայ եւ տանտէրը քաղաքաւորութեամբ ձկները մօտ տարաւ ու ասաց:

— Պարոն, իմ տէր Պ. Գրիգորեանցը յայտնելով ձեզ իւր յարգանքը, խնդրում է, որ ընդունէք նորանից այս փոքրիկ ընծան:

— Շնորհակալութիւն արա՛ իմ կողմից քո արթը: հանգարութեամբ պատասխանեց ծառան. իսկ քեզ, սիրելիս, ահա՛ 20 կոպէկ՝ աշխատութեանդ համար:

Տան տէրը գոհ մնաց այս պատասխանով եւ ընծայեց ծառային 50 կոպէկ:

* * *

— Ասացէք խնդրեմ, ասում էր տանտի-կինը, ի՜նչպէս պէտք է նիւղումը մի տակաւ գարեջուր պահեմ որ ծառաներս ձեռք չտան նորան:

— Շատ հեշտ է, տիկին, պատասխանեց հիւրը. միայն հրամայեցէ՛ք, որ գարեջրի կոզքին մի տակաւ գինի գնեն:

Մի ժխատ, որ 2000000ռ. հարստութիւն ունէր, թողեց հետեւեալ կտակը.

— «Որովհետեւ իմ որդին վատ է պահում իրան եւ միշտ վշտացնում է ինձ, ուստի իմ բոլոր հարստութիւնս նուիրում եմ վանքին, որի վանահօրը յանձնում եմ որ իմ որդուն այնքան մասը տայ՝ որքան ինքը կը ցանկանայ»:

Վանահայրը նորա որդուն նշանակեց 10000 ռ.՝ նա դժգոհ մնաց եւ գործը փաստաբանի յանձնեց: Իսկ փաստաբանը այսպիսի ազդարարութիւն տուեց գատաստանին:

— «Կտակողի վերջին կամքն այն է, որ իանքի վանահայրը պարտաւոր է այնքան մասը տալու հանգուցեալի որդուն, որքան վնքը կը ցանկանայ: Բայց որովհետեւ ինչպէս գործից երեւում է, վանահայրը ցանկացել է 190000ռ., ուստի կտակողի խօսքերի բուն նշանակութեան համաձայն խրնդրում եմ որ հանգուցեալի որդուն շնորհէք 190000ռ., իսկ 10000ռ. թողնէք յօգուտ վանքի»:

Լուգովիկոս Ժ.Բ.ը իւր պալատի հանդիւնները աչքի անց կացնելիս այսպիսի տող կարգաց.

— «Նրազի համար 28000 լիրայ»:

Թագաւորը զարմացաւ այս ահագին ծախքի վերայ եւ բարկացաւ, որովհետեւ արգելուած էր արքունիքումը ճարպէ մօմ վառելը: Հրամայեց, որ շուտով քննուի այդ բանը. եւ իմացուեցաւ, որ Թագաւորի որդին մի ճարպէ մօմ է ուղել, որ իւր ճաթած շրթունքին մի փոքր իւղ քսէ:

Սենեկապետը մօմը գնելիս հաշուի մէջ գրել էր 4 գրուանքայ: Մախտարարը նորանից շինել էր 400 լիրայ, եւ հետզհետէ ձեռքից ձեռք անցելով՝ բոլոր գումարը գարձել էր 28000 լիրայ:

* * *

Լուգովիկոս Ժ.Բ.ը իւր պալատականներին հետ որսի գնալիս միշտ հետը 50 շիշ բուրգոնեան գինի էր տանում: Բայց որովհետեւ Թագաւորը շատ սակաւ էր գինի գործածում, ուստի պալատականները առաջուց դատարկում էին շշերը:

Մի անգամ Թագաւորը մրսեց եւ մի բաժակ գինի խնդրեց: Բայց գինի ամենե-

ւին չկար. բոլոր շշերը դատարկ էին: Պալատականները կարմրեցան ամօթից. իսկ թագաւորը ժպտալով՝ տապ:

— «Միւս անգամ 51 շիշ վեր տռէք. կարելի է, ես էլ ցանկանամ խմել»:

* *

Մահուան անկողնում պառկած՝ հոգեւորը գերմանացին երկու փաստաբան կանչել տուեց, ժողովեց իւր ոյժերի բոլոր մնացորդը՝ կանգնեց մահճակալի մօտ եւ իւր երկու կողմը կանգնեցրեց փաստաբաններին: Առջաւոր ուրիշ ակնկալութիւն ունէին մեռնողից, երկար սպասելուց յետոյ հարցրին.

— Ասացէք վերջապէս, մեզ ինչո՞ւ կանչեցիք:

— Ոչինչ, պատասխանեց հոգեւորը, ուզում եմ Յիսուսի պէս մեռնել:

* *

Հարցաքննութեան դահլիճում:

— Ինչո՞ւ «Հայր մեր»ի մէջ ասում ես. «Տուր մեզ այսօրուայ հացը» եւ ոչ՝ էգուցուայ կամ մի ամսուայ համար, հարցրեց կրօնաւարացի:

— Որովհետեւ իմ մեծ մայրը հին հաց չէ կարողանում ուտել, պատասխանեց աշակերտը:

* *

Բժիշկը առում էր.

— Իմ արուեստի գործադրութեան սկզբումը ես կարմրում էի, երբ ինձ փող էին տալիս: Իսկ այժմ կարմրում եմ, որ էլ չեն տալիս:

* *

— Նրեք տեսակ բարեկամ կայ:

— Ո՞րոնք են:

— Մէկը քեզ սիրում է, միւսը ամենեւին չէ մոտճում քեզ վերայ եւ երբորդը ասում է քեզ:

* *

Նրբ նապուլէսներ վերագարձաւ Աւստերլիցի պատերազմից, իւր թանգարանի վերատեսուչը այդ փառաւոր յաղթութեան յիշատակի համար՝ ներկայացրեց նորան մի գեղեցիկ շքանշան, որի մի երեսի վերայ գրուած էր կայսեր գլուխը, միւսի վերայ՝ մի ֆրանսիական արծիւ, որ իւր մագիլների մէջ սեղմնւմ էր մի անգլիական ընձառիւծ:

—Այս ի՞նչ է, հարցրեց նապոլէոնը:

—Ինքնակալ տէր, պատասխանեց վերադարձողը, ֆրանսիական արծիւն է, որ իւր մագլիկների մէջ բռնած՝ խեղդում է անգլիական ընձառիւծը:

—Յաճ շողորորթ, գոչեց մեծ մարդը, ի՜նչպէս ես համարձակում ասել, որ ֆրանսիական արծիւը անգլիական ընձառիւծ է խեղդում, մինչդեռ ես ոչ մի նաւ չեմ կորուզ ծովը իջեցնել, որին անգլիացիք չտիրեն: Այս բոլորի տար այդ շքանշանը հալիր, եւ միւս անգամ այդպիսի բան չտեսնեմ:

* *

Մի ուսումնական ասում էր.

—«Մարդուս կեանքը երկու դուռն ունի. մէկովը ներս է մտնում, միւսովը դուրս է գնում: Որքան մէկից հեռանում է, այնքան միւսին մօտենում է: Եւ ո՞րքան դուրս գնալու գրանը մօտենաս, այնքան աւելի մոտձիւր նորա վերայ»:

* *

Երեխային հարցրին.

—Հօրդ աւելի շատ ես սիրում, թէ՛ մօրդ:

—Հօրս ու մօրս աւելի շատ եմ սիրում, պատասխանեց երեխան:

* *

—Ձեր տուած գեղը բանի պէտք չէր:

—Բայց դուք արե՞ք ինչպէս ձեզ ասացի:

—Այո՛:

—Դեղը քսեցի՞ք հացի վերայ:

—Այո՛:

—Դիչերով գրի՞ք մկների բների մօտ:

—Դրի՛:

—Եւ մկները չկերա՞ն:

—Ո՛չ:

—Է՛, ձեր մկները շատ յիմար մկներ են:

* *

Ուսուցիչը պատմեց «անառակ որդու» առակը եւ նկարագրելով նորա թշուառ գրութիւնը, որի մէջ ընկած էր խողարած ժամանակը՝ հարցրեց աշակերտներից մէկին.

—Գէորգ, ի՞նչ կ'անէիր, եթէ դու նորա տեղը լինէիր:

—Ե՛ս... ես խողերը կը մօրթօտէի, պատասխանեց աշակերտը:

* *

—Ինչո՞ւ այսքան ուշացաք, հարցրեց վաշինգտոնը իւր քարտուղարին:

— Ժամացոյցս դադարած էր: պատասխանեց քարտուղարը արդարանալով:

— Եթէ այդպէս է, ասաց Վաչինգտոնը, կամ գուր պէտք է ուրիշ ժամացոյց գնէք, կամ ես պէտք է ուրիշ քարտուղար գտնեմ:

* *

ՌԻՍՈՒՅԻՉԸ: Ինչո՞ւ այս լեռներին «Պիրինեան լեռներ» ենք ասում:

ԱՇԱԿԵՐՏԸ: Ձգիտեմ:

ՌԻՍՈՒՅԻՉԸ: Այն պատճառով, որ գտնւում են «Պիրինեան թերակղզում»:

ԱՇԱԿԵՐՏԸ: Բայց ինչո՞ւ այս թերակղզուն «Պիրինեան թերակղզի» ենք անուանում:

ՌԻՍՈՒՅԻՉԸ: Որովհետեւ այդ թերակղզին գտնւում է «Պիրինեան լեռների» մօտ:

* *

ժլատը սուրճի հրաւիրեց իւր բարեկամին եւ նորա առաջը մի շատ հասարակ սուրճ գրեց:

Հիւրը մէկ ումպ խմելուց յետոյ արաց:

— Ձեր սուրճը մէկ արժանաւորութիւն ունի եւ մի պակասութիւն:

— Եւ ո՞րոնք են, հարցրեց ժլատը հարցասիրութեամբ:

— Արժանաւորութիւնը այն է, որ այս սուրճի մէջը ցիկոր կայ, պատասխանեց հիւրը. իսկ պակասութիւնը այն է, որ ցիկորի մէջը սուրճ չկայ:

* *

Գռեհիկ ռուսը մօտեցավ գրալաճառանոցը՝ տեսաւ, որ սեղանի վերայ դրած է «С. Петербургскія Вѣдомости» լրագիրը եւ սկսեց կարդալ այն՝ այսպէս հեգելով.

— «Be - ѣрѣ = Вѣ, де - о = до, вѣдо. ме - о - се = м о с, вѣ до м о с. те — п = пп, = ГАЗЕТА!».

* *

— Դուք ո՞րտեղ էք ծնուել, հարցրեց գաւառիկը:

— Անկողնում: պատասխանեց գանգատողը:

— Ն՞րբ էք ծնուել:

— Միտքս չէ. ես այն ժամանակը շատ փոքր էի:

Քաջանան երեխային մեկնեց Ս. Գրքի
հետեւեալ խօսքերը. «Քո երեսի քրտնքով ու-
տես քո հացը», յետոյ հարցրեց նորան.

— Ի՞նչ են նշանակում այդ խօսքերը:

— Նշանակում է, թէ այնքան շատ պէտք
է հաց ուտեմ որ քրտնեմ պատասխանեց
երեխան միամտութեամբ:

* * *

Իժիշկը մեռաւ եւ նորա գերեզմանա-
քարի վերայ փորագրեցին հետեւեալ տապա-
նագիրը:

«Այտեղ պառկած է նորա՛ մարմինը,

«Ո՛վ պառկեցնում էր ուրիշներինը:»

* * *

Մէկը մտնելով հացագործի խանութը,
վեր առաւ մի կրենդէլ եւ հարցրեց.

— Ո՞րքան տամ այս կրենդէլին:

— 5 կոպէկ, պատասխանեց հացագործը:

— Իսկ այս դատարկ տեղը սփռան արժէ,
հարցրեց գնողը՝ ցոյց տալով միջի գատարկ
տարածութիւնը:

— Ոչինչ չարժէ:

— Ուրեմն, խնդրեմ ինձ համար մի նոր
կրենդէլ թխէք. միայն այս դատարկ տեղը
շատ մեծ լինի, ասաց գնողը եւ հեռացաւ:

* * *

Մոլլայ Նասր-էգլինը 12 հաւկիթ ա-
ռած՝ տուն էր գնում: Հանապարհի՞ն հանգի-
պեց մի մարդու եւ ասաց.

— Եթէ իմանաս թաշկինակիս միջինը
ի՞նչ է, ձուգեցից քեզ էլ կ'ուտեցնեմ:

— Հաւկիթ է, պատասխանեց նա:

— Իսկ եթէ իմանաս բանիսն է, բոլոր
12ը քեզ կը տամ:

— 12ն է:

— Իմացար, իմացար, աղբի՛ն, վեր առ
տա՛ր, ասաց մոլլան եւ հաւկիթները նորան
տուեց:

* * *

Ֆրանսիացին պատահմամբ կոխեց տաճ-
կի ոտքը եւ նա իսկոյն ձայն տուեց.

— Քե՛զ օր, ի՞թի՛լ:

Ֆրանսիացին կարծելով, թէ իրան հար-
ցրնում է «Quelle heure est-il?» հանեց ժա-

մացոյցը եւ վերան նայելով՝ պատասխանեց.

— Il est cinq heure!

Իսկ տաճիկը կարծելով թէ իւր յիշողին ֆրանսիացին «Սէն քետ» է պատասխանում՝ դարմանքով ասաց ինքն իրան.

— Դոգրըսի քի ֆռանցսւղ, սըհաթընանի գանըշըր:

* *

Թատրոնում նստած էր մեծ բազմութիւն եւ սպասում էր ձեռնածուին: Քիչ ժամանակից յետոյ գուրս եկաւ ձեռնածուն, սղջունեց, իջաւ բեմից, բոլոր նստողներին ցոյց տուեց իւր գլխարկը եւ ասաց.

— Ահա տեսնում էք, որ այս գլանի (ցիլինդր) մէջը ոչինչ չկայ»:

Յետոյ կրկին բարձրացաւ բեմը եւ ասաց.

— «Եւ ոչինչ էլ չի լինի»:

Հասարակութիւնը սպասում էր տեսնելու թէ գորա վերջը ինչ կը լինի:

Բայց ձեռնածուն միւս գրնից փախաւ գնաց:

* *

Վեհնայում կար մի աղքատ, որ սւամից ոչինչ չէր ստանում նորա տան զրան վերայ գրում էր «Ո» տառը:

Երբ նորան հարցրին թէ ինչո՞ւ է այդպէս անում, պատասխանեց.

— «Այն պատճառով եմ այսպէս անում, որ լաւ միտքս պահեմ թէ որ տնից ես ուղորմութիւն ստանալու յոյս ունեմ եւ որից՝ չէ, որ աւելի երկար ժամանակ չկորցնեմ: Արտեղ ինձ թի բան տալիս եմ, ես այն տեղ «Մ» եմ գրում իսկ որտեղ ոչինչ չեն տալիս՝ «Ո» եմ գրում»:

* *

Ֆրեդերիկոս Մեծի հայրը Ֆրեդերիկոս Վիլհելմ Ա.ը մէկ անգամ երեկոյեան աղօթքը կարգալու ոյժ չունենալով՝ հրամայեց իւր նեկապան սպասաւորին, որ կարգայ: Աղօթքը վերջանում էր հետեւեալ խօսքերով. «Աստուած օրհնէ քեզ»:

Սպասաւորը դէպի թագաւորը ունեցած յարգանքից թոյլ տուեց իրան մի փոքր բընագրի խօսքը փոխել եւ կարգաց. «Աստուած օրհնէ Զեզ»:

Թագաւորը խից աղօթագիրքը եւ խփելով սպասաւորի գլխին, ասաց.

— Այգպէս չէ, մէկ էլ կարգաւ:

Սպասաւորը երկիւղից դողգողալով եւ չգիտենալով թէ ինչո՞ւմ է կայանում սը-

խալը՝ դարձեալ կրկնեց աղօթքի խօսքերը՝
զ ու ն փոխելով զ ու բ։

Թագաւորը բարկութեամբ կատաղած՝
վեր առաւ իւր գլխից գիշերագլխարկը, թը-
րըխկացրեց սպասաւորի երեսին ու ասաց։

— Այդպէս չէ, այդպէս չէ, նորից կարգաւ։

— «Աստուած օրհնէ՛ Զեղ», կարգաց
սպասաւորը։

— «Օրհնէ՛ ք եղ, յիմար, օրհնէ՛ ք եղ»,
աղաղակեց թագաւորը։ Մի՞թէ չգիտես, ան-
պիտան, որ Աստուծոյ առաջիւ ես էլ մի այն-
պիսի ուղարմելի արարած եմ։ Ինչպէս՝ զ ու ն։

* *

«Одесскій Вѣстникъ» լրագրի մի հա-
մարում տպուած էր հետեւեալ լուրը։

— «Լուգովիկոս — Փիլիպպոս — Մարիամ
— Պետրոս — Ալլիանտարա — Անտոնի — Մի-
քայէլ — Ռափայէլ — Գարրիէլ — Գոնչակա —
Քսաւ — Փրանցիսկոս — Դ'Աստիզ — Յովհաննա
— Յուլիոս — Օգոստոս — Վոյֆանգ — Բրագան-
յա — Բուրբուսը հրատարակեց Ներսիսի «Համ-
լետ»ը պորտուգալական լեզուով թարգմա-
նուած։

Այս բաղմանուն թարգմանիչը Պորտու-
գալիայի թագաւորն է։

Հռոմայեցւոց կայսր Կարոլոս Ե. ք ասում
էր։

— «Խաղանական լեզուով պէտք է խօսել
Աստուծոյ հետ, ֆրանսիական լեզուով՝ բա-
րեկամների հետ, գերմանական լեզուով՝ հա-
կառաւորողների հետ եւ իտալական լեզուով՝
իգական սեռի հետ»։

* *

Մի ամերիկացի հեղինակ մարգկային
ցեղը բաժանում էր երեք կարգի։

Առաջինը մտածում է, որ ամէն բան
այնպէս է. (ինչպէս պէտք է լինի), երկրոր-
դը մտածում է որ ոչ մի բան այնպէս չէ.
իսկ երրորդի համար միեւնոյն է՝ այնպէս
է, թէ այնպէս չէ։

* *

Զիկագոյում տղամարդիկ այնքան հնա-
զանգ են իրանց կանանցը, որ մի կարեւոր
բան գրելիս հարկաւոր են համարում գրել
նաեւ Կ. Թ. տառերը. այսինքն՝ «Կ ն ո ջ թ ո յ լ-
տ ու ու լ թ ե ա մ ր»։

Պետերբուրգի գերեզմանատների արձաններից մէկի վերայ գրուած է հետեւեալ տապանագիրը.

— «Այտեղ թաղուած է Աստուծոյ ծառայ, Ս. Պետերբուրգի քաղաքացի կօշկակար Իվան Պոլիկարպովի մարմինը: Անմիջիժար այրին ընդունում է պատուէրներ եկատերինհայեան փոփոցում, տուն № 72»:

* *

Գերմանիայում . ուսումնական աստիճանները փոքով էին ծախում: Համալսարանի պրոֆեսորի մօտ եկաւ մի ձիաւոր մարդ. եւ խնդրեց, որ իրան փիլիսոփայութեան դոկտորի վկայական (գիւլլում) տան:

Պրոֆեսորը խելոյն տուեց վկայականը եւ նոր փիլիսոփան գրեց սեզանի վերայ 100 տալերանոց:

— Ձեզ պէտք է վերագործնենք 50 տալեր, ասաց պրոֆեսորը:

— Հարկաւոր չէ, պատասխանեց խընգրողը. մի վկայական էլ իմ ձիուն տուէք եւ մեր հաշիւը կը վերջանայ:

— Ներողութիւն, ասաց պրոֆեսորը, ուսումնական աստիճանները մենք միայն իշտաների վերայ ենք ծախում:

Հարբեցողը դուրս գալով գինեանից, տեսաւ որ մի ննջեցեալ են յաւարկաւորում դէպի գերեզմանատուն. խառնուելով բազմութեան մէջ, նա մօտեցաւ մի սգաւորի եւ հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք լաց լինում:

— Ձե՞ն տեսնում, պատասխանեց նա, Կարապետի եղբայրը մեռել է:

— Ե՛հ, ասաց հարբեցողը հեռանալով, ես էլ կարծում էի թէ գինու կարաս է կտորուել: . . . :



«ԱՆԵԿԴՕՏՆԵՐ»-Ի III. ՀԱՏՈՐԻՆ ՆԻԻԹՏՈՒՈՂ-
ՆԵՐԸ *)

	Տ Ե Ղ Ե Ր Ը	Ա Ղ Գ-ա ն ու ն ն ե Ր Ը
1	Վ-ը-ը-ը-ը-ը-ը	Սարգիս Գնունի
2	Երևան	Արշակ Ա. Ազարեանց
3	Մ-ի-ի-ի-ի-ի-ի	Տիգրան Տէր Գրիգորեանց
4	Ն. Ա-ի-ի-ի-ի-ի-ի	Եփրեմ Դաւթեանց
5	Յե-ը-ը-ը-ը-ը-ը	Մ. Նաւասարդեանց
6	Բ-ի-ի-ի-ի-ի-ի	Աղեքսանդր Աբելեանց
7	Ա-ը-ը-ը-ը-ը-ը	Ս. Տէր Մեղրիսեղէկեանց
8	Մ. Վ-ի-ի-ի-ի-ի-ի	Արշակ Նալբանդեանց
9	Ք-ի-ի-ի-ի-ի-ի	Եղիշէ Երզնկեանց
10	Երևան	Ամբակում Աթանասեանց

* Այստեղ տպուած են միայն այն անձանց անունները որոնք մեծ քանակութեամբ են նիւթ տուել:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՍԽԱՆՆԵՐԸ

Երես	Ս Խ Ա Ն .	Ո Ւ Ղ . Ի Ղ .
3	Ստեփաննոս	Ստեփանոս
35	Մ տ	Մոտ
45	ցանկացաւ	ցանկացաւ
46	Ռ-ւ-ւ	ռ սււ
47	Իսկ ի-ը-ը-ը-ը-ը-ը	Իսկ նորա հայրը
"	կարօն	կարօն
50	որ նուազի	որ նուազի
79	սանէր	սանհէր
109	հեցկերոյթի	հացկերոյթի
170	դրկախառնելով	զրկախառնելով

Որովհետեւ գրքիս Բ. Մասի անեկդոսաներից շատերը մենք անտիպ թողինք, ուստի 255-ի փոխանակ մնաց 197: Ուրեմն այս հատորում ընդամենը 404 անեկդոս կայ:

ՄԵՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. ԱՆԵԿԳՕՏՆԵՐ Հատոր I. 1876.	50 Է.
2. ԱՆԵԿԳՕՏՆԵՐ Հատոր II. 1877	50 Է.
3. ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ Հատոր I. 1878	50 Է.
4. ՊՈԼՈՒՄՊԵՐԻԱԼ 1878	20 Է.
5. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉ Գ. տարի 1881	40 Է.
6. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉ Գ. տարի 1881	60 Է.
7. ԵՐԿՈՒ ՏՕՆԱՅԱԾ 1882	20 Է.
8. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉ Բ. տարի 1882	25 Է.
9. ԱՆԵԿԳՕՏՆԵՐ Հատոր III. 1883	50 Է.



Մի անգամից աւելի տպագրուած.

1. ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՈՒՅԻՉ Գ. տարի Ե Ր Կ Ր Ո Ր Գ տպագրութիւն 1883	40 Է.
--	-------

Այս բոլոր գրքերը կարելի է ձեռք բերել
կենդանական եւ կովկասեան գրադատ-
ճառանոցներէց:

Գրւածարով առնողներին իջումն կը լինի:
Կարելի է դիմել նոյնպէս աշխատասի-
րողին հետեւեալ հասցեով.

«Въ Тифлисѣ.—На Авлабарѣ. учителю
Ованнису Назарянцѣ.»



Հայաստանի Ազգային գրադարան



NL0438224

С 2

481 807

БИБЛИОТЕКА

ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

481 807

481 807 50 4000.4

481 807 50 4000.4

56 799